



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

267  
666

19 99

# ՕՆԱՆՈՒ ՄԵՂՔԸ

Կ Ա Մ

ԳԻՉՍԿԱՆ ԱԽՏԵՐՈՒ ՀԵՏԵԻՍՆԻՔՆԵՐ

ՀԵՂԻՆԱԿ ԹԻՍՕ

Վերստին հրատարակուած ընտիր յառաջա-  
բանով մը ի Տեորքոր է. Գլխմանէ՛ 1875 ին :

ԹԱՐԳՄԱՆԵՑ


ՊԻՏԱՆԻ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲԻ

ԵՂԻՍՉԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

ՄԵՃ. Տօքթօր Յ. Թիլեաբեան իճեհոյի  
բնագաւաական ընտիր նամակով :



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՐԿԱՆ

1886



Կ 2 293

ԱԳՅԻ Եղիազար ԷՃԷՏԻ Մուրասեան

Կարդացի ձեր ՕՆԱՆՈՒ ՄԵՂԻՔ անուն պատ-  
տական գործոյն թարգմանութիւնը զոր պատիւ ըրած  
հիք ուղղել ինն ի դիտողութիւն :

Գործն ըստ ինքեան ըստ յղացուած են մարտար  
ձեռնաց հանդիպած և գործարարութեանը մէջ . Ընկարագ-  
րակներն ձոյս են շագմերանգ , շիստերն զօրստոր են  
համեղիեր , են ի վիպարութիւն ստեղծած կենդանութիւն-  
ներն , հին են և որ , պատկանելի իշխանութիւններ են գի-  
տական աշխարհի մէջ : Այստացեալ պատմանկութեան  
աշխարհի զօրեղ ձայն մը պետք էր՝ ազդարար այն ան-  
ոնելի անդունդին յոր շանգոտս գահավիժելը կը Ընկրտի  
համապագօր : Բժշկական սթամթիսթիքները եթէ քննե-  
լու ըրար , պիտի ստիպայ ի տես այն քառմնելի պատ-  
կերաց որք ընդ ստաջ պիտի ելլեն ձեզ : Մարդիկութիւնը  
իւր գեղագոտարձ գարնան մէջ ծախող սպառող այն շարա-  
դետ ախտը այնքան ընդհանրացեալ և են այնքան մեծ  
հարուածներ կը գործէ , գրեթէ ամէն հասակի մէջ , որ  
տեղի կայ երկնէլու թէ , յետ ոչ սակաւ ժամանակի ,  
աւխտը ժողովրդեան կազմական շինելութիւնը պիտի ջրէ  
են կենսական կորովը պիտի Ընդաշեցնէ : Եթէ անվրայ  
ման ըրար վախճան ախտիդ , թէպէտեւ դարձեալ պա-  
տոհասս համարելի էր՝ այլ թերեւս այնքան ան են սու-  
կում՝ չէր ազդեր որչափ այժմու միմակը որ քան զման  
դառն և են սրտայոյզ : Այն ստիպի ջրածորութիւնները՝  
թաշկացողները՝ մասնական են հանրական անդամա-  
րոծութիւնները՝ կարկամութիւնները՝ անհանդուրձելի

29 665

4 666-60

ցաւերը յայլ են այլ կողմոսն մարմնոյ՝ յիշողական կարողութեան իսպառ բարձրութիւն մարմնոյ հետ զնետե և ոռոտողի հիւծիչը են մեղեքատիս կենդանութիւնը՝ են իբր անխոտապիւղի հետեւանք բիրտագան թախծայից հոգոց են անբաժանելի գեղեցիկ յամենուտ սրաշարիչ վարակիչը, այս ամէնը, կ'ըսեմ, հաստատուն են կենդանի գոյնէրով շառ սրտիկերացած է գործոյ մեջ, այլ ենս ազգի ազգի աղէթարջ տեսիլներով՝ գորս անդայ է ինձ աստ ինսնդես անձը. այլ այս հանդիպմունք են կրեչութիւնը բոռն ենթահայիկն՝ այսիկըն ախտացելոյն աղետներն են, միւղչեռ ախտը անելի հետուն կը միշտ ինս ազդեցութիւնը: Ես ոչ միայն անհատը կը սրտած շարաշար, այլ սերունդն ալ ինս միտանելու մեջ ոռնի են ազգաց յազգս կը տարածէ ինս սարսափելի իշխանութիւնը: Կրեւար երեւակայել թէ ի՛նչպիսի մարդկութիւն յառաջ պիտի գայ այնպիսի ախտացեալ կործանեալ կակներէ, եթէ մանտանը սերելոց մեջ ալ ախտը միտ գտնէ վերսկեղանանայոռ, որ հասանանել է: Յիրտոյ, ի՛նչ է որ ազգաց են ժողովրդոց հասարարս կազմական անբքին միմանիչ կը մոխի, եթէ ոչ այս են այսպիսի դժերակ ախտեր որ կը մարակին ժողովրդեան մեջ:

Են սակայն ի՛նչ ըրած ոռնիք ստաջըն աննէրո թշնամնոյ մը այս բոռն յարձակման, ո՛ր թոռմք՝ ո՛ր անխարտակ կտոռցած ոռնիք, ո՛րպիսի զինոռ դիմագրտս իննչ կը սրտրաստոռիմք, են կամ, որ ցառային է անել, կը սրտրաստոռիմք արդեօք, գիտեմք թէ թշնամի մը կայ որ հանայագ զմեզ կը հարտածէ են կը տասանորդի:

Դժարադարար՝ ոչ: Ծնողաց մի մասն աննենիկ գու-

Այս գերազանց գործին երկրորդ տպագրութեան առթիւ նուիրական պարտք կը համարիմ ինձ իմ երախտագիտութիւնս յայտնել բոլոր այն նշանաւոր և բարձրաստիճան անձանց՝ եկեղեցական և աշխարհական՝ որք բերանացի և հրապարակաւ զիս քաջալերել հաճեցան՝ թէ ընտրած նիւթիս և թէ թարգմանութեան յաջողութեանը համար:

Մասնաւորապէս բարեյիշատակ Ներսէս սրբազան Պատրիարք՝ շատ քաջալերական խօսքերէ յետոյ՝ որոց ներկայ էր և Արժանապատիւ ուսումնազարդ Քահանայ մը՝ յորդորեց զիս ափորդիտեան ախտերու վրայ ճառով այսպիսի ժողովրդական գիրք մ՝ ալ թարգմանել՝ և յաւել թէ «գաւառներու վիճակին ծանօթ ըլլալով՝ գիտեմ՝ աւանդ, թէ ի՛նչ ահաւոր կոտորածներ կընեն այդ գարշելի ախտեր մեր գաւառաբնակ ազգայնոց մէջ՝ ուր ոչ բժիշկ կայ և ոչ գիտութեան օգնութիւն»: Կառավարութեան պաշտօնական հրատարակութիւնք ևւ ճանապարհորդաց գրուածները յետոյ ապացուցին զայս:

Իմ երախտագիտութիւնս կը յայտնմ մասնաւորապէս ազգային նշանաւոր հրապարակագիր Մեծ տեարց՝ Բիւզանդ Քէչեանի՝ Տոքթոր Ռոպէնտնի, Գուշար Բարեւեանի՝ որ իրենց ընտիր գրչով գործոյս յաջողութեանը մեծապէս նպաստեցին՝ հրապարակային թերթերու միջոցաւ:

Իմ եռանդագին շնորհակալիքս և երախտագիտութիւնս կը յայտնեմ նոյնպէս ազգային նըշանաւոր բժիշկ Մեծ . Տոբթոր Յ . Թիրեաքեան էֆէնտիի որ հաճեցաւ զարդարել գործոյս երկրորդ տպագրութիւնը իւր քննադատական ընտիր նամակաւն՝ արդիւնք իւր ծանուցեալ սուր հանձարոյն :

Այս ամեն պատուական գրաւականներով, ուշի ուշով եղած խիստ կարևոր սրբագրութեամբք , այսպիսի գործոց ազգութեան անհրաժեշտ մէկ պայմանովն՝ այսինքն՝ պատկերազարդ ի լոյս ընծայելով զայս երկրորդ տպագրութիւն՝ յուսամք թէ սա ևս առաջնոյն բախտին արժանի կ'ըլլայ :

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

Ս. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՐՄԱԻԻ ՏՂԱՍ

Մեռելի ջեմ ուզեր նուիրել գիրքս . շատ սիրելիներ ունիմ մեռած , սակայն անոնք գացեր են : Քեզ , սիրելի տղա՛ս , եւ քեզմով Հայ մանկութեան եւ երիտասարդութեան կը նուիրեմ այս գիրքը՝ որ մահուան դեմ կը կռուի , կեանքը քաղցր կընէ , առաքինութիւն կուսուցանէ , եւ պարկեշտ գաւակներ իրենց ճնողաց եւ մարդկային ընկերութեան ծաղիկներ կը դարձնէ :

Քեզ , տղաս , կը նուիրեմ գայս . ինն տարու ես , քիչ ժամանակէն կարօտ պիտի ըլլաս ասոր խրատներուն , յայնժամ՝ հայրդ քե՛ ողջ ըլլայ՝ քե՛ ի գերեզման իջած , գայս պահէ , կարդա միշտ՝ իբրեւ խրատու՝ փոխանորդ հօրդ , որպէս զի հիմակուան վարդի նման փքած այտերդ ջխամբին , եւ ծլիս ու ծաղկիս , ազնիւ պտուղ տաս Ազգիդ եւ մարդկութեան , եւ ըսես որ՝ ՀԱՅՐԱ ԻՐ ՊԱՐՏԻՐԸ ԿԱՏԱՐԵՑ :

ՀԱՅՐԴ

Այսպիսի աշխատութիւն մ'աչ իրաւունք ունի ըս-  
 տաւելոյ Չեզմե հայ հասարակութիւնը, յոռապի է որ  
 'ի մօտոյ զայն նոս տեսնելոյ թաղը կոնկրետաւ: Առե-  
 շորդ չէ թնտ նոյն նիւթոյ վրայ նոր աշխատութիւն  
 մ'աչ, զի այնքան է նիւթոյ կարեւորութիւնը, որ տա-  
 կաւին թաղում աչպիսի գործոց պէտք կայ նո գոր  
 'ի գրոյս հանելոյ համար թէ հմտութիւն նո թէ ձեռն-  
 հասութիւն ունիք:

Ահաւասիկ, թարեկամ, իմ տեսութիւններս սոյն  
 նիւթոյ նո սոյն գործոյն վրայ՝ գոր ամենայն անկեղ-  
 ծոթեամբ կը յանձնեմ ձեզ, վստահ չիւնելով ձեր ողջ-  
 մտութեանը:

Մնամ յարգանքօք

Յ. ԹԻՐԵԱՒԵԱՆ

7 Սեպտ. 1883

Կէտիկ-բաշա

իզդրոյս հաւնուած գործ մը տարակոյս չիայ որ պահան-  
ջուած կատարելութիւնները մեծաւ մասամբ պիտի ու-  
նենայ : Եւ սակայն զերծ չի թերութիւններէ , թերու-  
թիւնը որ ոչ այնքան գործոյն են որքան այն ընթերցող  
հասարակութեան որով սպասարկել կոչուած է գործն :  
Բացատրեմ .

Ի՞նչ օգրուտ պիտի քաշէ ընթերցողը խիստպէս  
են ճշդիւ գիտնալու սերային գործարաններու անդամ-  
զննակիսն դիրքը՝ ձեռք՝ գործողներութեան եղանակը՝  
աստիճանը , եղև- միթէ , իրեն թծիչ , մարմնոյ այլ  
են այլ անդամոց են գործարանաց մեջ , տիրապէս աս-  
տացեայ մասը կամ կետը գիտնալու պէտք ունի՞ են-  
թակայն վնասակարէն խորշերու համար : Մոլորթեան  
ընդհանուր ակունքի հետեւանքը բառակիսն չեն ի խրատ  
են յորդորթիւն : Եւ զի այն արհեստակիսն ծանօթու-  
թիւնը , որչափ ալ քաջ բացատրուած ըլլան՝ դարձեալ  
միշտ մոլթ կը մնան անպարաստ ընթերցողի մը :  
Եւ կը վայելան որ անքոյ մարմինը , ըսել կողզեմ թէ  
խորարանչիւր մաս են անդամ թժշկակիսն ազատութեամբ  
յայտնել յորջորջելը , փոխանակ մոլեկիսն հոլոր շիջու-  
ցանելու , աւելի ենու գայն արծարծել ջատայէ ընդմիտ  
մանկակիսն դիտարգրգորթիւն զոր իթել են միել կ'ըլլայ  
դեպ ի այն ասարկացս որոցմէ հետացնել էր կետ ևպա-  
տակի :

Վերջին են կարեւոր մի դիտողութիւնս ալ այս է  
որ այս գործոյն չեզուն հասարակաց հասկանալի ունեն  
տարբեր է , այսինքն թէ , հեղինակը միշտ իրեն բը-  
ծիչ կը խօսի , միւշդեւ պարտ էր , իխտ շատ անգամ ,  
են գրեթէ միշտ , ժողովրդեան չեզուն աւուող են ա-

նոր հաստդոթեանը խոնարհիչ : Այս թերութիւնը թե-  
րեւս այնքան զգալի չէ Եւրոպացի հասարակութեան  
համար որ քան զվերն աւելի կրթեալ և յամենայնի, սու-  
կայն հայ ընթերցողին համար յոյժ մեծ կարեւորոտ-  
թիւն ունի :

Վերջապէս, այս գործը իոր դիտման են իոր հա-  
սարակութեան համար իւր եղանակն են չեզոքն ունի  
գոր ամենայն հասարակութեանք յաշողած և պահել  
Թարգմանիչը, այլ աւելին պէտք է : Ես կը ցանկայի որ  
սոյն օրինակ աշխատութիւն մ'այ ըլլայ, բողոքովին  
պարզ են ուսմանակն ունի գրեալ, հենի յամենայն ար-  
հեստական բառից են անարագրութեանց, ընդ բողոք  
անցնելով այն իրերը որոց վերի յիշատակութիւնը կրնայ  
գրգիռ տայ երեւակայութեան են որ մի միայն մշտութեան  
հոտիւնը որոշակի բացայայտելի վերջը անկէ ծագած  
դատն հետեւանքը ընդարձակօրէն անարագրէր, այլ են  
այլ օգտակար պատմութիւններ՝ օրինակներ՝ իշխանական  
(magistral) գրոյցներ՝ կարծիքներ՝ վնիւններ՝ եղև-  
ի մեջ բերելով, են միեւն մերջը պահելով պատմական  
կամ, հոգ չէ, միայնամասնակն ունի որ կը հրահանգէ  
առանց յոգնեցնելու : Ինչ այնպէս կը թոյնի թէ անանօրինակ  
աշխատութեան մեջ, որ ժողովրդեան համար է, արհես-  
տականն աւելի անարագրականը կ'ազդէ են կը յոգի : 1

1. Առողջաբանական գրութեանց մեջ գիտութեան  
գոնէ ընդհանուր սկզբանէ յօշոտման անհրաժեշտ է,  
զի առողջաբանութիւնն ինքն իսկ գիտութիւն է կա-  
րեւոր : Պէտք է որ ժողովուրդը ընտելանայ գիտու-  
թեան սկզբանց՝ գիտութիւնն անոր անմեքանայի  
համարելու չէ : Եւ ուրախ են որ մեր ժողովրդեան  
վիճակն անոգնետէ կը փոխուի այս նկատմամբ : Թ.

դասար իսկ չունի թէ մանկութիւնը այսպիսի հօր թը-  
նասի մ'ունի մարտեղու . մի մասն ալ բարոյից դէմ  
կը համարի շոտաւորել զմանուկն առաջիկայ մտանգին  
միայ . դաստիարակը իրենց ուղղակեան գեղականներէն  
դորս սահման չեն անաչեր . ազգային վարիչ իշխանու-  
թիւնը անբիւն, այսինքն ժողովրդեան կակամ պիտոյից  
խեղիքը ընելով ստոտարականաց են օրացնոց մեջ կը  
ստատակին, են քան զամենեւին զոտս բժիշկի մեղա-  
պարտ շոտութեան են շահադէտ սևտարքերութեան մեջ  
կը յօրանելն :

Այո, մեզ բժշկացս անկ էր անց բարձրացնել են  
մատնանից ընել մտանգն են ցուցնել փրկութեան ու-  
ղիւն . չեմ գիտեր՝ ի՞նչ կրնայ արդարացնել զմեզ : Զբար-  
մանց ստատեղութիւնը . — ո՞չ ահա մեր վարժապետ-  
ները, տիեզերական համբաւ մայելող են ծանր գբար-  
մանք ընկնեալ աննիւր, դարձեալ հատորներ մատն-  
նագրելու ժամանակ կը գողնան : Կարողութիւնը . —  
չեմ կարծեր թէ բժիշկ մը իւր արհեստին են գիտու-  
թեան ընդհանուր են թանկարեւոյ մասերուն միայ  
ժողովրդեան ծանօթութիւն չկրնայ տալու չար անկար-  
աննարան ըլլայ : Հատնական է կարծել թէ կամքն է  
որ կը պակսի մեզ, փոքր ինչ բացառութեամբ :

Այս թոտարկութեան են այս խոտովանութեանն  
յայտ յանդիման կը իսպլի, բարեկամ, անր գերագնաց  
արժանիքը՝ որ ոչ — բժիշկ գողով հանդերձ այսպէս քաջ  
տեսած էր այն դժեղակ ախտը որ օր քան զօր կ'անէ  
դետատի հասակին մեջ են գոր, չհանդորթելով պար-  
զայիս տեսնել, բաւնայ՝ ջնջել իսկ կը փորձէր ընտիր  
հեղինակութեանց Թարգմանութեամբ :

Այս թարգմանութեան մեջ, որոսիս եւ՛ ըսելոյ որ, կատարելապէս յաջողած էր, բան մը որ շատ դժուար է հայերէն գրողներուն համար, շեղուն բնաւ չստարտելոյ մտաց արտայայտութեանը: Ոչ թէ մասնօրի շեղուն անընդունակ է նորանոր բառից եւ իմաստից, այլ մասն օրի գիտական եւ արհեստական սիրողերոյ մեջ բնաւ մը- շակոնած չէ, եւ այլ եւ այլ իրաց եւ գաղափարաց հա- մար յատկապէս սահմանեալ որոշ եւ հաստատուն եզ- րեր չիան ի սէտս գրչին՝ որ իորարանչիոր նոր գաղա- փարի առջեւ նոր բառ մը գտնելոյ հարկին մեջ ժամեր եւ օրեր կը մատնէ, շատ անգամ առանց յաջողութեան, եւ թերեւս այս իսկ է որ գրելոյ հրապոյրը կը բառնայ շատ անգամ:

Ձեր յաջողութեան նշանակութիւնը իսկապէս հաս- կըրնելոյ համար բառակալն չէ տակաւին շեղուն զր- ռարութիւններն առաջի դնել, որոք որից եւ ոչ նոսազ մեծ դժուարութեան մ'ալ յայժէջ պարտաւորած էիր, այլ է բժշկական գաղափարաց եւ դարձումածոց եւ սն- դամագնակական մանրամասնութեանց նախնամութեան- թիւնը պահանջող հարկին: Զի մկայ մը՝ պատմութիւն մը ինչպէս որ կը թարգմանուի, հասարակ շեղուն հմտու- թեանիք միացն, այնպէս շարգմանութիւն գիտական արհեստական գրուած մը՝ որ գիտութեան եւ արհես- տի գիթ ընդհանուր սկզբանց տեղեկութիւնը անհրաժեշտ է: Ձեր թարգմանութեան ուշադիր ընթերցումը այս մասին ալ թերութիւն մը չցողներ, յորմէ բնական է գողակել թէ ան թարգմանել առաջադրած գաղափար- ները մասնաւոր պարտաւորութեան սերտորոշութեան նիւթ ըրած էր նախապէս: Այս շարի խնամով եւ անոնհաստութեանի:



Մեր օրեր՝ մարդկային նոր ընկերութեանց ծոցին մէջ ընդհանուր, տիեզերական մոլութիւն մը կայ՝ որ ամբողջ ընկերութիւնը կը վարակէ ա- պականութեան, եղծման մշտնջենաւոր տարրով մը:

Գիշութեան աղէտարեր ունակութիւնը կ'աղ- քատացնէ կազմաւորութիւնը և զայն կը ծիրէ:

Սերմնաթափութիւնը՝ վաղահաս եղծման այս գործը՝ յամր և անվրէպ թոյն մ'է՝ որ կեանքը եղ- ծելէ առաջ, զայն աստիճանաբար կը մերկացնէ այն ամեն կարողութիւններէն՝ որ նմա գործունէութիւն կ'ուտան՝ և բռնի կը մղէ իւր զոնը դէպ յաւեր ի մահ:

Ինչպէս անհատներու կազմաւորութիւնը՝ նոյն- պէս ընկերականութիւնը կ'իյնայ այս քայքայիչ ախտին աղղեցութեան ներքեւ:

Ներքին ախտ մ'է սա, որ կը ձկտի ջնջել տե- սակը՝ ինչպէս անհատը, այս վերջնոյն քով կենաց սերմը անբոյս ընելով:

Չկայ երկնից տակ աղէտ մը, որ աւելի քան զայս՝ ամեն կարգի, ամեն աստիճանի մարդոց ուշ և ուրուշը գրաւելու արժանի ըլլայ: Տղոց վրայ մա- նաւանդ կը նկատուին գիշութեան կամ կամաւոր սերմնագրիութեան աղէտալի հետեւանքներ:

Սերմնաթափութեան յաճախութիւնը սերտ կա- պակցութիւն ունի ջլային դրութեան զարգացման

հետ. արդ ջղային բորբոքումը աւելի ազդու է մանկութեան մէջ, քան կենաց ուրիշ ժամակներուն՝ և բաղդատմամբ՝ աւելի զօրաւոր է էգ՝ քան արու տղոց վրայ :

Արբունքէն առաջ տղան անկարող է սերմնային գրգռութեան . այս միջոցին իւր ծննդական գործարանաց այս կամ այն ջղային կեցուածքը կըրնայ անսովոր զգայութիւն մ'առաջ բերել անոր վրայ : Որբանի մանկիկներուն վրայ, շարունակաբար միտում մը կերեւի ջղային գրգռութեան, ամենափոքր շփում մ'անմիջապէս երեւան կը հանէ զայն :

Այս պարագայներուն մէջ մանաւանդ թըլիփին (1) գործողութիւնն անխուսափելի է՝ եւ կըրնայ առաջնորդել տղան սպառիչ սովորութեան մը : Այսչափի ալ պէտք է ըլլար անշուշտ, և գործարա-

(1) Արանդամին ծայրի մաշկը : Աստ հարկ կը համարիմ մեծանուն բժշկին միտքը հասկցնել մեր ընթերցողներուն՝ որ ջեն սովոր դժբաղդաբար գիտական գրութեանց սքոյեալ իմաստները հասկընալու դիւրաւ :

Ստնտուներ, դայեակներ կան՝ որ տղոց ծածուկ անդամներուն հետ շարունակ խաղայ իրենց բան գործ ըրած են, որով վաղահաս գրգռութեան պատճառ կ'ըլլան : Երեք տարու տղեկ մը տեսայ՝ որ իւր մայրը կստիպէր ձեռքովը իւր արանդամը շփելու՝ զի կ'ըսէր, *արդոր կ'ըլլայ*, զի դժոխային դայեակը այսպէս կ'ընէ եղեր :

Ուրիշ տղայ մը կը ճանչէի, մեծահարուստ գերդաստանի մ'աչքին լոյսը՝ որ եօթն տարեկան

նային բերումը այսչափ սպասելու հարկ չունենար՝ երբ մեղապարտ ձեռք մը իւր վրայ կառնու առաջնորդել տղեկին անմեղ ձեռքը և նմա ի վեր հանել չարագուշակ գաղտնիքն՝ որ գուցէ զայն պիտի ըսպաննէ : Ամեն մարդ գիտէ թէ ինչ աստիճան կատաղաբար գիջութիւն կ'ընեն տղայներէն ումանք . ուստի հարկ չէմ տեսներ այս կատաղութեան տըլտըր օրինակները յիշատակել աստ : Միայն ասոնց մէկ սարսափելին յառաջ բերեմ :

Օր մը հրաւիրեցին զիս տանամայ տղայ մը նայելու : Թէ ինչ աստիճան սոսկում զգացի այս տղայն տեսնելով՝ զայս բացատրելու համար՝ բաւական է ըսել՝ որ դեռ երեք օրէ ի վեր հիւանդ էր և սակայն բոլորովին հատած լինցած էր՝ այն աստիճան՝ որչափ կ'ըլլայ իր վերջին աստիճանին մէջ գրտնուող թոքախտաւորը : Առջի բերան արշառող թոքայտ կարծեցի հիւանդութիւնը : Բայց կուրծքը քննելէս՝ և ծնողաց ու տղուն ուղղած հարցումներէս՝ հասկցայ՝ որ այս տղան գիջութեան սովորութեամբ արդէն հատած ըլլալով՝ քանի մ'օրուան միջոցին այն աստիճան ինքզինքը տանջեր էր այս ախտով՝ որ հեշտական գրգռութիւնն էր այսչափ կարճ միջոցին զայն ապականող և գիականացնողը :

Այս համառօտ պատմութեամբս բաւական չհասհասակին մէջ գերեզման իջաւ, որովհետեւ իւր ստնտուն սովորութիւն ըրած է եղիւր տղուն արանդամը *կասկէ յարցնել*՝ որով մանկիկին վրայ *սրագոն* եկաւ եւ գինքն ի գերեզման առաջնորդեց :

Ծ. Թ.

կըցուցի՞ թէ ի՛նչեր կընէ գի՛շութիւնը : Հա՛րկ է մանրամասնաբար նկարագրել այն վիճակն՝ որուն մէջ այս մտլութիւնը երկար ատեն կը տառապեցընէ իւր գոհը . թէ ի՛նչ յամբ քայքայում տեղի կունենայ՝ որ իբր թէ յանկարծական եղաւ այն տղուն վրայ՝ որուն սոսկալի և արագ փճացումը վերը յիշեցի : Շարունակ կը վատնեն այն նիւթերն որք կազմական զօրութիւնը արծարծելու սահմանուած են . յաճախ կը խանգարի ջղային դրութիւնը , որու ցնցումներն և վատնումներ աւելի վտանգաւոր կ'ըլլան թէ մանչուն և թէ աղջկան՝ երբ ասոնք կը ներգործեն այնպիսի կազմութեան վրայ զոր բնութիւնն չէ սլատրաստած տակաւին այս կորուստները կրելու . և այս կորուստներուն տեղը չլեցուիր , զի ջղային հեղուկը (1) որ կը վազէ՝ սաշտօն ունի կենալու այն նիւթին մէջ որ իրմէ կը խլուի :

«Մարդ կը կորնչի՝ երբ ինքզինք կարտադրէ» կըսէ Պ . Տէպրէյնը . տղան չկրնար արտադրելով իսկ կորնչել , վասնզի իւր արտադրութեան նիւթը չկայ տակաւին : Նա ժամանակէ սուաջ կուզէ : Իւր տըւփական եռանդը կը ներգործէ փոխանորդող տարրի մը վրայ որ կեղծանէ յօրինուածը անորմէ զատուելով : Եւ իբր թէ հարկ ըլլար որ այս խաբեբայ նիւթին անջատումն իւր ազդեցութիւնը ներգործէր մինչև անգամ՝ տղուն մտքին վրայ ,

1. Ենթադրական հեղուկ մ'է սա՝ որ կազմական գօրութեան վրայ մեծ ներգործութիւն ունի :

Թ . Ծ .

որպէսզի հոն ալ նմանօրինակ խարուսիկ երեոյթ մը տեղի ունենար , տղուն զգացած հաճոյքը քիչ ատենէն այլ եւս նիւթական հաճոյքի կարգէն ելնելով կ'ըլլայ նախաճաշակ հեշտասիրութեան՝ ում պիտի մասնակցի օր մ' երեւակայութիւնն : Ձկտում մ'է սա դէպ անծանօթ իր մը , որու գօրեղ հրապոյրը կ'զմայլեցնէ զինքն և կը գրաւէ : Ֆիզիկական փճացումը քայլ առ քայլ կը հետեւի այս սովորութեան յառաջադիմութեան . կապտագոյն շրջանակ մը կը գծուի աչքերուն բոլորտիք . դէմքն կը լեզնի , մարմինը կը նիհարնայ և կը պզտիկնայ , մորթը կը թուլնայ , տկարացած աչքերը կը խաւարին և խորը կ'իջնեն , նայուածը կը մարի , նիհարութիւնը կ'աւելնայ , կերակուրները չեն մարսուիր , չեն արտադրեր սնուցիչ հիւթեր , բայց միայն մաշող աւիչներ . մորթը կապարի գոյն կ'ստանայ , աչքերը կ'արատւնքոտին . այս նշան է ընդհանուր կազմալուծութեան և բովանդակ կործանման : Բոլոր գործարաններն իրենց ազդուութիւնը կը կորուսանեն . ճայնը կը տկարանայ , կը գոցուի , կը կերկրի , չոր հազ մ' երեւան կ'ելնէ , հիւանդին սիրտը կը սեղմուի , կը բարսխէ . շնչառութեան և արեան շրջանի խանգարումներ կը ծաւալին և կերթան ուղեղը ցնցելու . հիւանդն իւր գլխուն մէջէն խառն ի խուռն ազմուկներ կ'իմանայ՝ որ ուրիշ կարգ մը երեւոյթներու նախընթաց նշաններն են :

Հիւանդին տեսողութիւնը կը տկարանայ , գրլուխը կ'ծանրանայ , կը դառնայ , շարունակ թունը



կը տանի, կը դողդոջէ, ամեն կողմ ցաւ կզգայ, կարկամութիւն կունենայ միշտ, ցնցող շարժմանց, լուսնոտութեան մէջ կ'իյնայ: Ահա այս միջոցին գոհը կատարելապէս գինք գիշատող ախտին ձեռքն ինկած է: Իւր ամբողջ մարմնոյն վրայ կոտորուք կզգայ, անդամները կը տկարանան, ինքն բոլորովին կ'ընդարմանայ:

Այնպէս կ'ըզայ, կըսէ Հիպոկրատ՝ թէ մըրջիւններ կիջնեն գլխէն՝ ողնայարն ի վար: Ամեն անգամ որ փորը կեւնէ՝ կզգայ կորուստ լըյծ նեւթի մը՝ նախընթաց սերմնային հեղուկին, որ նոր պատճառ մ'է սպառման, և քիչ առնէն մանուկն կիյնայ ծիւրական ախտի մէջ ու կը մեռնի հալու մաշեղած:» Գիջութեան մահամերձ զոհին վրայ նայողը կը տեսնէ այս նկարագրին ճշգրտութիւնը: Բայց այնպէս պարագայներ կան՝ որոց մէջ այս պատուհասին արտադրած վտանգները կրնան դիտողը խաբել. այս այն ժամանակ կը սրատահի՝ երբ յառաջադիմող ուժաթափութեան, ծիւրող նիհարութեան հետ՝ դեռ կը մնայ գործարաններուն վրայ քիչ մ'աշխուժութիւն. ախտը թափափու միշտ բաց կ'ըլլայ և ինչ ինչ ախտանիշեր կընշարուին՝ որ կարծել կուտան թէ կազմուածին խանգարումը յառաջ եկած է՝ մարմնոյն բնական տկարութենէն. այսպէս ողնայարը կ'ծուի, թոքախտի իսկական նշանները կ'երեւին: Այս պարագային՝ ախտին վրայ միայն խորհելով՝ ոչ ոք խելք կ'ընէ բուն պատճառին ելնել:

Տիպիքական կազմուածին հետ բարոյական վի-

ճակն ալ կը խննդարի. իւր վրայ ամեն ինչ կը վատթարի, իմացականութիւնը և բնաւորութիւնն իբրբու համապատասխան աստիճանով կ'ապականին:

Ապուշ կը դառնայ, յիշողութիւնը կը նուազի, զգայարանները կը բթմանան: Գիջասէրը հալածուելով վաւաչոտութենէն մինչեւ իսկ քնոյ մէջ՝ կ'ըլլայ դանդաղ, խելակորոյս, շոշորդի պէս, շարունակ աւանակի նման լուռ մունջ կը նստի: Անսլիտան՝ թէ մտաց և թէ մարմնոյ մասին, չկրնար բանի մը պարսպիլը Շարունակ կը տանջուի, անվերջ սրտայուզութիւն, տեսակ մը մտատանջութիւն գինք կը չարչարեն, միտքը կը մոլորի. ոչինչ կը դիմանայ այս համայնաւեր ազդեցութեան առջեւ. դատումը կը կերսուի, չկրնար այլ ևս իբրբու լծորդել ամենապարզ գաղափարներ. ամենայտակ ծանօթութիւնները մտքէն կեւնեն. ամենազեզեցիկ կարողութիւնները կը խաթարին կանհետանան:

Մարմինը կ'անդրադարձէ հաւատարմաբար՝ ինչ որ տեղի կունենայ գիջասէրին հոգւոյն մէջ. իւր շարունակ ցանկասէր մտածութիւնը կը յայտնուի արտաքուստ դէմքին վրայ և իւր սովորութեանց մէջ. տխուր է, մեղամաղձոտ, հոգատանջ, երկչոտ, վարանամիտ, թույլ. իւր բնաւորութեան մէջ անհաւասարութիւն կայ: Բոլորովին անտարբեր կը դառնուի իւր տարիքի խաղերուն մասին. աւանձնութիւն կը փնտռէ: Ամենէն բնաւորութիւններ չեն տոկար այս սպանիչ սովորութեան քայքայիչ զօրութեան առջև. մանուկն՝ որ այնչափ նպատաւոր պարգայներով ծնած՝ կայտառ էր,

ընտիր բարեմասնութեամբ օժտեալ՝ նա աւասիկ, տրտում, տխուր, ուրիշներուն և իւր իսկ անձին բեռ դարձեր է :

«Անդադար նորածին փափաքներով», կրակ Լամբնէ, «պիղծ ուրուականներով պաշարուած, միտքը կը կորուսանէ իւր կորովը և արգասաւորութիւնը. ամենայն ինչ կը վատթարի և կը կորնչի, յիշողութիւնը կը մարի, բնաւորութիւնը կը թուլնայ, սիրտը կը ցամքի : Ոչ ևս գիտէ սիրել կամ արգահատիլ, և ոչ իսկ գորովոյ քաղցր արտասուքը թափել : »

Ճարտարախօս գրագէտը բաւական յառաջ գացած չէ իւր խուզարկութեան մէջ : Քայլ մ' ևս աւելի առնէր գիշատէրի քննութեան մէջ՝ պիտի տեսնէր գիշատիրութեան աղիտաբեր կիրքին ուրիշ մէկ երեսը՝ պիտի հասկընար թէ՛ ասոր ներկայած ամենէն սոսկալի տեսարանն՝ այս թշուառին իր զգայունութիւնն կորուսանելն չէ՛ այլ ընդհակառակն զայն պահելն է :

Անզգայ գիշատէրը բացառութիւն մ' է : Եթէ ապշութեան մէջ չ'իյնայ, զգայունութիւնը կը մնայ : Նա հոն է՝ իբր թէ անդադար զեկուցանելու համար յանցաւորին՝ իւր վատութիւնը, և շարունակ անոր աչքին առջև դնելու իւր տղեղ վէրքը : Քանի՛ քանի անգամ այն սղորմելի երիտասարդն որ անձնատուր եղած է այս ամօթալից մոլութեան՝ որով իւր մարմինը պտուղներ է մատաղ հասակէն՝ կողբայ սրտէն այն գործարանային հարկին վրայ՝ զոր սովորութեամբ ինքն իւր ձեռքով ստեղծեր է :

Գիշատիրին այս ճիգերն որ կընէ ինքն իրեն գէ՛մ, որք տկար են՝ վասն զի անագան են՝ իրեն համար ամենատոկալի տանջանք են . եւ խղճի ամեն անձկութիւն, ամեն կեղեքում գգալէ վերջ, նախ արհամարհութիւն՝ ապա իւր անձին գէ՛մ զղուանք իմանալէ յետոյ՝ գիշատէրը կատաղի կամ ապուշ կը դառնայ :

Ծլիկին չէնքը կիները գրեթէ ցանկատիրութեան մի եւ նոյն գիծակի մէջ կը դնէ՝ զոր դատապարտեցինք էրիկ մարդոց վրայ : Այս գործարանին պզտիկութեան նայելով՝ որուն ամենէն խոշորը հազիւ մանուկի մը գործիքին չափ կըլլայ, մարդ բնաւ միտքէն պիտի չանցնէր թէ այս՝ սաստիկ գրգռիչ գործի մը կրնայ դառնալ՝ եթէ իւր ցցուող բնութիւնը, և բազմաթիւ արիւնային խողովակներն ու ջիղերը զոր իւր մէջ կընդունի՝ զայն վերջին աստիճան դիւրագրգիւ գործարան մը չընէին :

Բժիշկներն՝ որք գիշութեան վրայ գրած են, խիստ քիչ բան կը գրուցեն այս աղիտաբեր սովորութեան վրայ՝ աղջկանց մէջ . բարոյախօսներ, վիպագիրներ, աստուածաբաններ զայն խիստ հազուադէպ անկարգութեան մը պէս կը յիշատակեն . շատ բժիշկներ հիւանդ նայած ժամանակ՝ մատաղ աղջկանց առողջութեան խանդարման մէջ զայս հաշուի չեն առնուր, չեն մտաբերեր իսկ, և սակայն այս սպանիչ սովորութիւնը շատ հասարակ է՝ պէտքէ խտտովանիլ զայս, մանաւանդ այն աղջկանց մէջ, որք հասարակաց կրթութեան յարկերու տակ կ'ապրին : Չեմ ուզեր հոս նկարել մահաշուկ պատմու-

Թիւնը գիջութեան՝ աղջկանց մէջ՝ և անոր դէմ մարտնչելու պատրուակով կանխահաս շուայտութեան նկարագիրն ընել անոնց։ Միայն կըսեմ Պ. Տէպրէյնի հետ, որ՝ եթէ փորձառութիւնը չցուցնէր՝ շատ դժուար էր ճշգրիտ գաղափար մ' ունենալ, թէ կանայք ինչ անսահման տարփական զգայունութիւն ունին՝ իրենց ամենափափուկ մանկութենէն սկսեալ, և ինչ դժոխային հնարքներ ի գործ կը դնեն այս փնասակար կրից համար՝ երբ ազատ գտուին։

Բայց չեմ ուզեր որ չափազանցող կարծուիմ, և այս մեղադրանքէն ազատելու համար՝ յառաջ կը բերեմ Բժշկական գիտութեանց թատղիքը։ Ահա՛ սատողերը կը կարդամք հոն՝ գիջութեան մասին. «Կրթական հաստատութեանց մէջ գատապարտելի անհոգութիւն մը խիստ շատ անգամ պատճառ կ'ըլլայ գիջութեան անկարգութեանց մուտ գլտնելուն՝ մատաղ օրիորդաց գիշերօթիկ դպրոցներուն մէջ։ Այս գործողութիւնը որ վարժուհիներու անհեռատես կամ անուշաղիւր աչքերէն կը ծածկուի բարեկամութեան քօղին տակ՝ մինչեւ դայթակղութեան աստիճան կը հասնի շատ անգամ հասուկ աղջկանց մէջ։ Այս մասնաւոր նպատակաւ սերտ մտերմութիւն կը հաստատեն, յաճախ երկու բարեկամութիւններ նոյն անկողինը կը պառկին՝ և գործին ծուծը հանելու համար՝ մատաղ աղջկունք իրարու հեշտական լուսնին յիմանց բարակ մաշկը կը բզկտեն, իրարու երեսը կը խածնեն՝ միմեանց լաւ ևս յայտնելու համար այն ջերմութիւնը որ

գիրենք կը լափէ, և իրենց հաւատարիմ սէրը։» Կանանց գիջութիւնը չյանգիր՝ ինչպէս արանցը՝ մարդկային տեսակը ջնջելու, քանզի բնութիւնը պաշտօն տուած չէ կնոջ՝ պատրաստելու կենաց սերմը. այլ գիջութիւնը կ'ազդէ նմա զգուանք առ ամուսնութիւն, և այս կերպով՝ եթէ չջնջեր կենաց սերմը՝ կնոջմէ կը բառնայ դայն արգասաւորելու կարողութիւնը։

«Կանանց մէջ, ինչպէս մանչերու՝ ծննդական գործարանները երբեմն բնականաբար այն աստիճան աստիկ դիւրագրգիւ կ'ըլլան՝ որ կը տիրապետեն կազմութեան բոլոր պաշտօններուն եւ բաղձանաց վրայ, և կ'ստիպեն կինները շարունակ խրաղրտեցնել այս գործարանաց այն մասն՝ որ ամենափափուկ զգայունութեան կեդրոնն է։

«Յաճախ խիստ պզտի աղջկունք այսպէս կը մղուին տեսակ մը բնազդմամբ ձեռնաշարժութիւն ընելու։» «(Բառարան թժշկ. գիտութեանց)»։

Հոս չեմ ուզեր երկարօրէն խօսիլ այն վտանգներուն վրայ՝ որ յառաջ կ'ուզան աղջիկներ՝ մինչեւ իսկ պառաւ դայեակներու կամ խնամակալութիւններու յանձնելէն։ Արդէն այս մասին շատ եղբրական պատմութիւններ լսուած կան, որոշումը մօրը կ'իյնայ միայն։

Դիցուք թէ խտրը կայ. ինչ նշաններէ կրնայ հասկցուիլ թէ աղջիկ մը գիջութեան տուած է ինքզինք(1)։ Մարմնոյն վրայ ընդհանուր թուլութիւն

(1) Մեր հանձարեղ բժիշկն իրաւունք ունի աղջկանց մասին եւս այսչափ պնդելու։ Կայտառ,

և տկարութիւն կուգայ : Թէպէտ և նիհարութիւնը շատ յայտնի չըլլար՝ սակայն միտերը կը թուճան : Մանկութեան թարմութիւնը կը թուամի . գեղեցկութեան , կարմրութեան կը յաջորդեն դեղնութիւն , նիհարութիւն , թարշամութիւն . մորթը կապարագոյն կը դառնայ , կապտագոյն շրջանակ մը կը գծուի խորը իջած աչերուն շուրջը , աչերը խաւարած և վատատես կ'ըլլան , նայուածքը տըխուր , մեղկ , մարած . չոր չոր կը հազայ , ապա սիրտը կը գոցուի , պզտի շարժումէ մը շունչը կը կտրի . յետոյ անմիջապէս երեւան կուգան հալ ու մաշի բոլոր անասնիչերն և նոր սկսող թոքախտի երեւոյթներ :

Պատուհասին ազդեցութիւնը կրնայ ուրիշ ուղղութիւն ստանալ կազմուածին մէջ . կրնայ իւր աւերիչ ազդեցութիւնը ոսկրային դրութեան վրայ ի գործ դնել : Այն ատեն խոտորումներ յառաջ կ'ուգան , մինչև իսկ ողնայարը կը ծռի :

Մանկահասակ աղջկան բնաւորութիւնը կը փոխուի՝ թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս : Այս վարդի նման գեղանի աղջիկ մ'անտարբերութեամբ կը խօսէր ամուսնութեան վրայ : Երբ իրեն հարցուցին քե ինք զգայունութիւն չունի՞ «էն՛ , պատասխանեց , զգայունութեան համար շարժեր աղջկան մ'իբ ողջ գոյիս անտարանի տակ դնել . . . : Անշուշտ ինքն շատ զգայուն էր , բայց կը համբերէր . . . » Բնաւ չեմ կասկածիր , որ այս համբերութիւնը նոյն իսկ մայրքիւնն էր :  
Ծան. Թարգմ.

մորութիւն ամեն տեսակ երեւոյթներ յառաջ կը բերէ . տկարութիւն , մեւամաղձութիւն , մենասիրութիւն , մինչև իսկ կատաղութիւն , խենթութիւն և հայրասպանութեան խորհուրդ :

Գիծութիւնը սաստիկ ինքնասիրութիւն յառաջ կը բերէ տղոց վրայ : Փարիզի Հիւանդ տղոց հիւանդանոցին մէջ տասն տարու տղեկ մը տեսայ՝ որու վրայ մենասիրութիւնը այն աստիճան կատաղի կերպարանք առած էր՝ որ ազատելու համար իւր մէկ պզտի քրոջմէ՝ որուն ներկայութիւն զինքը կը նեղէր՝ զայն մեռցուց՝ անոր ականջը մազի դնդասեղ մը խոթելով :

Ոստիկանութիւնը արգիլել տուաւ այս տղան Մատրլօնէթներու բանտին մէջ՝ ուր մեռաւ կուրծքի հիւանդութեամբ :

Աղջկանց մէջ ծլիկն է գիծութեան սովորական կեդրոնը . կանանց մէջ նոյնն է որ իւր ցցուող յատկութեամբ հեշտութեան գլխաւոր գործարանը կ'ըլլայ : Սա ինչպէս վերը յիշեցի՝ կրնայ բաւական մեծութեան հասնիլ : Ահա այս պարագային մէջ է որ կիներ անբարոյականութեան վերջին աստիճանին կը մըլուին :

Ո՞ր մնաց ուրեմն հիմա շնորհաց եւ գեղոց այն գաղափարականն որու կենդանի եւ պայծառ պատկերն էր կին . Աստուծոյ այն շնորհագեղ արարածը՝ այն ատեն՝ երբ ճակատը պճնած ամբուութեան պրակով՝ կրնար տակաւին մարդուն աչացը ներկայանալ իւր արժանապատուութեան բոլոր ազդեցութեամբ :

Երբեմն՝ իւր յիմար փառամտութեամբն ըստ  
նա մարդուն հետ. — Ես Աստուծոյ պիտի ետևեմք :  
Այսօր՝ մարդէ աւելի նուաստ վիճակ ունենալուն  
մտածմամբ՝ այնպիսի խորհուրդ մը յղացեր է՝ որ  
զբնութիւնն կ'արհամարհէ : Կինն՝ քանի որ կորոյս  
իւր սրբութիւն՝ կորոյս իւր գեղեցկութիւնը : Ժանտ  
չունչ մտլութեան անոր փայլը մարեց . իւր գեղեց-  
կութիւնն այլ ևս նիւթական է , վաղանցիկ , առօր-  
եայ :

Նախընթաց տողերը հարկաւոր էին հասարա-  
կութեան իմացներու համար թէ՛ ինչո՞ւ թխօփ  
գիրքը նորէն հրատարակ կը հանեմք . վասն զի  
այն ախար զոր նա ի վեր կը հանէր հարիւր տարի  
առաջ , եւս քան զեւս սաստկացեր է բարեկեցու-  
թեան ազդեցութեամբ՝ որ տարածուած է ընկե-  
րութեան ամեն դասերուն մէջ : Թոքայտով մեռ-  
նողներէն մեծ մասը կ'երթան այս մտլութեամբ  
որուն դէմ կուռիլ ուզած է թխօ . ուստի նուի-  
րական պարտ մ' է տարածել իւր գիրքն՝ աշխարհի  
ամենէն պարկեշտ մարդուն գիրքը . ծնողք պէտք է  
ունենան զայս իրենց քով . և երբ կասկածին որ  
իրենց տղաք ինկած են այս մտլութեան մէջ՝ պէտք  
է չվախնան անոնց աչքին առջև դներու այն սոս-  
կալի պատկերներն զորս կը նկարագրէ խիստ վար-  
պետ ձեռօք :

Է . Գլխահան

## ԳԻՋՈՒԹԻՒՆ

Հետագօտարիւն այն հիւանդութեանց վրայ՝ որք  
յառաջ կ'ուզան սերմնաբափութեամբ .



## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ն

Մեր մարմինները շարունակ կորուստ կունենան  
և եթէ մենք չկրնայինք այս կորուստները դարմա-  
նել , անմիջապէս մահաբեր տկարութեան մէջ պիտի  
կյնայինք : Այս դարմանումը կերարկոց միջոցաւ  
կ'ըլլայ . սակայն կերակուրները պարտին ենթա-  
կայ ըլլալ մեր մարմնոյն մէջ այլ և այլ պատրաս-  
տութեանց՝ որոնց տաճոռն կ'ըսենք : Երբ տածումը  
տեղի չունենար՝ կամ թերի կերպով տեղի կ'ունենայ՝  
բոլոր կերակուրն անօգուտ կ'ըլլայ , և մարդ կ'կյնայ  
սպառումէ յառաջ եկող ամեն տեսակ ախտերումէլ :  
Տածումն արգիլող բոլոր պատճառներէն սովորա-  
կաններն են՝ խիստ առատ արտաքումներ :

Մեր՝ և ընդհանրապէս կենդանեաց մեքենական  
կազմութիւնն այնպէս կը պահանջէ՝ որ կերակուր-  
ները՝ մարմնոյն կորուստը լեցնելու համար պարտին՝  
արդէն պատրաստուած՝ և եթէ ներելի է այսպէս  
ըսել՝ բնական դարձած մաս մը իրենցմէ թողուլ  
ներսը : Եթէ այս պայմանը պակսի՝ կերակրոց

մարտումը և հաղումն անկատար կը մնայ՝ այնչափ ա-  
ւելի՛ որչափ պակտողնիւթն առաւել պատրաստուած  
և կարեւոր է :

Սերմնային հեղուկին կորուստն այն աստիճան  
ազդու կը ներգործէ մարմնոյ ուժին և զայս դարմա-  
նող մարտողութեան կատարելութեան վրայ՝ որ ա-  
մեն դարուց բժիշկներ միաբան վճռեր են՝ թէ այս  
հիւթին մէկ տրամ կորուստը քառասուն տրամ  
արեան կորուստէն աւելի կը տկարացնէ՝ զմարդ :  
Կրնանք գաղափար մ՝ ունենալ անոր կարեւորու-  
թեանը վրայ՝ երբ դիտենք թէ սա ինչ ազդեցութիւն  
կ'ունենայ մարմնոյն վրայ երբ սկսի կազմակերպիլ .  
ձայնը , դէմքը , դիմաց գիծերն իսկ կը փոխուին .  
մօրուքը կը բուսնի . յաճախ մարմինը ուրիշ երեւոյթ  
մը կ'ստանայ , վասն զի ջիղերը կ'ստանան այնպիսի  
հաստատութիւն և ամրութիւն մը որք մեծ տար-  
բերութիւն կը դնեն հասուն և արբունքի շհասած  
պատանոյն մէջ տեղ : Այս բոլոր զարգացումները  
կրնան արգիլուիլ՝ երբ հանուի այն գործարանն՝ որ  
սերմնային հեղուկը զատելու կը ծառայէ . և ճշգրիտ  
դիտողութիւններէ սարացուցուած է՝ որ ամորձիք-  
ներու կտրումն այրական հասակի մէջ՝ յառաջ բերած  
է մօրուսի անկումը և մանկական ձայնի վերագարծը :  
Այս դիտողութենէն յետոյ կրնայ տարակուսիլ սք  
բոլոր մարմնոյն վրայ ասոր ունեցած ազդեցութե-  
անը մասին՝ և չզգալ՝ թէ ինչ աղէտներ յառաջ  
կ'ուզան այս պատուական նիւթին չուայլաբար վատ-  
նումէն : Իւր բուն նպատակը միայն կրնայ արդա-  
րացնել ասոր արտաքսումը : Երբեմն հիւանդութիւն-

ներն ալ ասոր հոսումն յառաջ կը բերեն . հեշտային  
երազներով ալ կրնայ կորսուիլ ակամայ : Մենդոց գր-  
քին հեղինակը մեզի աւանդած է Օնանու մեղաց  
պատմութիւնը՝ անշուշտ անոր պատուհասին պատ-  
մութիւնը մեզ հաղորդելու նպատակաւ , և Կալիէն  
կը պատմէ թէ Դիոգինէս նոյն մեղօքիւր ձեռքը ազ-  
տատեց :

Եթէ այս նիւթին չափազանց առատորէն կո-  
րուստին վտանգաւոր հետեւանքը միմիայն անոր  
քանակութենէն կախում ունենար՝ կամ հաւասար  
քանակութեամբ եղած ատեն՝ մի և նոյն վտանգն  
առաջ բերէր՝ հոգ չէ թէ վերը յիշած կերպերէս մէ-  
կովը՝ կամ միւսովը տեղի ունենար այն կորուստը :  
Բայց բուն խնդիրը կերպին վրայ է : Բնութեան օ-  
րինակոր ճամբով չափազանց վատնուած սերմին պա-  
կասութիւնը մեծ վտանգներ յառաջ կը բերէ՝ որոնք  
առաւել ևս մեծ կ'ըլլան՝ եթէ հակառակ բնութեան  
տեղի ունենայ կորուստը : Կանանց հետ չափազանց  
անառակութիւն ընողներուն զլխուն մեծ փորձանք-  
ներ կը պատահին : Բայց սերմնաթափութեան ար-  
տաղրած վտանգներն անհնարին սոսկալի են : Այս  
վերջիններուն վրայ մասնաւորապէս պիտի խօսիմք  
գրքիս մէջ . բայց որովհետեւ երկու կարգն ալ սեր-  
տիւ կապուած են՝ երկուքին նկարագիրն ալ իրարմէ  
անբաժան պիտի ընեմք : Այս ընդհանուր նկարա-  
գիրն գրքիս առաջին մասը պիտի կազմէ , այնու-  
հետեւ պիտի գայ ասոր պատճառներուն բացատ-  
րութիւնը՝ որով պիտի ցուցնեմ սերմնաթափու-  
եան առաւել վտանգաւոր կողմերը . և սերմնաթա-

փութեան նման մէկ քանի հիւանդութեանց վրայ-  
օք գիտելիքներով պիտի աւարտեմ գիրքս : Ամեն  
տեղ լաւագոյն հեղինակաց դիտողութիւնները պի-  
տի աւելցնեմ իմ անձնական դիտողութեանցս վրայ :

ՄԱՍՆ Ա.

Ա Խ Տ Ա Ն Ի Շ Ք

Հ Ա Տ Ո Ի Ա Ծ Ա.

Բժշկաց Բեղիմակուքիւններէն քաղուած  
Նկարագրութիւն .

Հիպոկրատ՝ ամենէն հնագոյն և ճշգրտա-  
գոյն դիտողը՝ սիրային հեշտութիւններէն արտադ-  
րուած մոլութիւններն արդէն նկարագրած է՝ Ող-  
նային հիւանդութեան անունով :

« Սյս հիւանդութիւնը՝ կ'ըսէ , կը ծնի կոնակի  
ոսկրին ծուծէն : Սա կը զարնէ մատաղ ամուսնաց-  
եալները կամ ցոփակեացները : Ասոնք տենդ չեն  
ունենար , և թէպէտ լաւ կ'ուտեն կը խմեն , սա-  
կայն կը նիհարնան և կը հատնին : Սյնպէս կ'ուգայ  
իրենց՝ թէ միջիւններ կ'իջնեն իրենց գլխէն մինչեւ  
կոնակի ոսկորն ի վար : Ամեն անգամ երբ մեծ գործ  
ընեն՝ կամ միզեն՝ առատօրէն կը կորուսանեն շատ  
նուրբ սերմնացին հեղուկ մը : Ասանք անկարող են  
որգեծնութեան և շատ անգամ տուփական գործո-  
ղութիւն կ'ընեն իրենց երազին մէջ : Ծրձագայու-  
թիւններ՝ մանաւանդ առատար ճամբաներու մէջ՝

զանոնք չնչատարտ կ'ընեն, կը տկարացընեն, անոնց գլխու պտոյտ և ականջաց թնդիւն կը պատճառեն . ի վերջոյ արագ տենդ մը վերջ կ'ուտայ անոնց օրերուն» : Ուրիշ մասի մէջ պիտի խօսիմ այս տեսակ տենդին վրայ :

« Այս հաճոյք, կ'ըսէ Սէլս իր Յաղագս պահպալող թեան առողջութեան՝ ամենապատուական գրքին մէջ՝ կը վնասեն միշտ տկար կազմ ունեցողները՝ և անոնց չափազանցութիւնը կը տկարացնէ զօրաւորները » :

Չկայ աւելի ահարկու բան մը քան այն նկարագիրը զոր Արիթմիոս մեզ թողած է սերման չափազանց պարսպումէն յառաջ եկած ախտերուն վրայ : « Երիտասարդները՝ կ'ըսէ նա, կ'առնուն ճիշդ ծերոց դէմքը և հիւանդութիւնները . կը դեղնին, կը թուլան, կը թմրին, կը ծուլանան, վատասիրտ, բթամիտ, և մինչեւ իսկ ապուշ կը դառնան . իրենց մարմինը կը կորանայ . սրունքնին ալ չկրնար զանոնք վեր բռնել . ամեն բանէ զգուանք կ'իմանան, ամեն բանի անկարող կ'ըլլան, շատերը կ'ընդարմանան » : Ուրիշ տեղեր՝ սիրային հեշտութիւնները կը դասէ ընդարմացում բերող վեց պատճառներուն կարգը :

Կալիէն տեսած է որ սոյն պատճառով ուղեղի և ջղի հիւանդութիւններ եկած են . կը պատմէ թէ՝ մարդ մը որ տակաւին ամբողջապէս բուժած չէր սաստիկ հիւանդութենէ մը՝ մեռաւ՝ երբ իրիկուն մը իւր ամուսնական պարտքը վճարեց կնոջը :

Բնախօս Պլինիոս կը պատմէ թէ՝ Կուռնելիոս Գազլիոս, նախկին պրետորը՝ և Տիտոս Եթերիոս

Հոովմէական ասպետը, մեռան ճիշդ ամուսնական գործողութիւն ըրած ատեննին :

« Ստամբուր կը խանգարի, կ'ըսէ Սյետիոս, բոլոր մարմինը կը տկարանայ, մարդ կը դեղնի, կը նիհարնայ, կը սմքի, աչքերը խորունկը կ'իջնեն » :

Այս ամենայարգի նախնեաց վկայութիւններն վաւերացած են բազմաթիւ նորերու վկայութիւններով : Սանկտորիոս, որ ամենամեծ խնամօք քննած է բոլոր այն պատճառներն որք կը ներգործեն մեր մարմնոյն վրայ, դիտեր է՝ որ սերմնային կորուստը կը տկարացնէ ստամբուր, մարտողութիւնը կը խանգարէ, կ'արգելու այն անզգալի արտաչնչութիւնը՝ որուն պակասութիւնը շատ ծանր հետեւանքներ կ'ունենայ . լեարդի և երիկամանց բորբոքում կուտայ, երիկամանց քար կը պատրաստէ, բնական ջերմութիւնը կը նուաղեցնէ, և տեութեան տկարութիւն կամ կորուստ յառաջ կը բերէ » :

Լօմիոս՝ իր գեղեցիկ մեկնութեանց մէջ՝ զորս գրած է Սէլսի գրուածոց վրայ՝ զոր վերը մէջ բերի, ուժ կ'ուտայ իր հեղինակին վկայութիւններուն իր իսկ փորձառութեամբը : « Սերմնային յաճախ արտածումները կը թուլցնեն, կը ցամբեցնեն, կը տկարացնեն, կը ջլատեն, և անթիւ չարիք յառաջ կը բերեն՝ որպիսի են կաթուած, մահաբուն, լուսնոտութիւն, թմրութիւն, կուրութիւն, դողդոջում, ընդարմացում, ձգտում և ամեն տեսակ ցաւագին յօգացաւութիւններ » :

Բնութեան հետաքրքիրներու յիշատակարանները կուրուժեան դէպքի մը վրայ կը խօսին . կարծէ որ ամբողջապէս մէջ բերեմք այս դիտողութիւնը . «Չը գիտցուիր, կ'ըսէ յիշեալ գրքին հեղինակը, թէ ինչ կապակցութիւն ունին ամորձիքները բոլոր մարմնոյ, բայց մանաւանդ աչաց հետ» : Սալմութ' սեւամազձոտ գիտնական մը տեսաւ՝ որ խեղքը թուց, և ուրիշ մը՝ որուն ուղեղը այն աստիճան ցամքած էր՝ որ գանկին մէջ մէկ կողմէն միւս կողմ կ'երերար . այս երկուքն ալ իրենց անձը տուփական չափազանցութեանց տուած ըլլալուն համար : Ես իսկ աչքովս տեսայ յիսնամեայ մարդ մը որ մանկամարդ կնոջ մը հետ կարգուելէն երեք շաբաթ վերջ՝ յանկարծ կուրցաւ, և չորս ամսէն յետոյ մեռաւ :

Պարոն Հօֆման գիտած է՝ որ շատ աղէտներ յառաջ կ'ուզան սերմի վատնումէն : «Երկարատեւ երազափորձերէ յետոյ, կ'ըսէ, ոչ միայն ոյժը կը կորնչի, մարմինը կը նիհարնայ, դէմքը կը դեղնի, այլ նաեւ յիշողութիւնը կը տկարանայ, բոլոր անդամները շարունակ մտելու պէս կ'ըլլան, տեսութիւնը կը մթազնի, ձայնը կ'խուստի, բոլոր մարմինը քիչ քիչ կ'եղծուի, քունը անաւոր երազներով խուլած՝ չկազդուրեր մարմինը, և այնպէս կուգայ իրեն թէ բոլոր մարմինը գաւազանով ծեծեր են» :

Երիտասարդի մը խորհրդակցութեան մէջ՝ որ ուրիշ հիւանդութիւններէ զատ՝ սերմնաթափութեամբ գրեթէ աչքը կորուսանելու վրայ էր, կ'ը-

սէ . «Տեսած եմ շատ մարդիկ որ մինչեւ իսկ կատարեալ հասակի մէջ, այսինքն այն ստեն՝ երբ մարմինն իւր բոլոր ոյժը լիովին ստացած է՝ ոչ միայն աչաց կարմրութիւն և սաստիկ ցաւ վաստրկեր էին՝ այլ նաեւ այն աստիճան տկարացեր էր իրենց տեսութիւնն՝ որ ոչ կարողաւ ոչ գրել կըրնային» : Սակէց զատ՝ «տեսայ, կ'ըսէ, որ երկու հոգի հաւկուր եղան այս սրտճառաւ» :

Ընթերցողը հաճութեամբ պիտի լսեն պատմութիւնն այն հիւանդութեան՝ որ պատճառ եղաւ այս խորհրդակցութեան . «Երիտասարդ մը տըւած էր ինքզինք սերմնաթափութեան տասնը հինգ տարեկան հասակէն՝ և զայն խիստ յաճախ ի գործ դրած ըլլալով մինչեւ քսան երեք տարեկան, այս տարիքին այն աստիճան սաստիկ գլխու և աչքի ցաւ ունեցաւ, որ շատ անգամ երբ սերմ կարտածէր՝ աչք և գլուխը սաստիկ կարկամութիւն կ'ունենային : Երբ կարգաւ ուղէր՝ գինովի պէս ապշութիւն կ'ունենար . աչքի բիրերը չափազանց մեծցան . աչաց մէջ սարսափելի ցաւ կըգար, արտեւանունք խիստ ծանրացած էին և ամեն գիշեր կը փակչէին, աչքերը միշտ արցունքոտ էին, և անոնց անկիւնները որ սաստիկ կը ցաւէին՝ կոշտ կոշտ ձերմակ նիւթ մը ժողոված կար : Թէպէտ ախորժակով կուտէր՝ բայց և այնպէս վերջին աստիճան նիհարցած էր . և երբ կերակուրն ուտէր ըմնար՝ տեսակ մը գինովութեան մէջ կկնար» : Պ . Պրհա՛վ կը նկարագրէ այս ախտերը այն ազդու և յստակ ոճով որ իրեն յատուկ է : «Սերմի չափազանց կո-

րուսան յառաջ կը բերէ պարտասում, անճրկում, անշարժութիւն, կարկամութիւն, նիհարութիւն, արեան ցամաքութիւն, ուղեղի մաշկին մէջ՝ ցաւ : Սա կը բթացնէ զգայարանները՝ մանաւանդ տեսութիւնը, կոնակի ոսկրը կը մաշեցնէ (1), կը ծուլացնէ և ուրիշ անթիւ հիւանդութիւններ յառաջ կը բերէ՝ որք սերտիւ կապուած են վերիններուն հետ :

Պ. Սենագ կը նկարագրէր իւր Հետազոտութեանց Ա. տպագրութեան մէջ, սերմնաթափութեան վրտանգները, և կիմացնէր ծերութեան ամենածանր հիւանդութիւնները՝ որ այս գաղջութեան զոհերը կը հրաւիրէին իրենց ծաղիկ հասակին մէջ :

Պ. Ղիւսովիկ՝ երբ կը նկարագրէ այն օխտերն որ յառաջ կուգան խիստ առատ պարպումներէ՝ չը մոռնար նաեւ սերմնայինը : «Երկու սեռի երիտասարդները՝ որք զիրենք շուսյտութեան կուտան՝ կեղծանեն իրենց առողջութիւնը վատնելով այն զօրութիւնները որք սահմանուած էին հասցընել մարմինն իւր ամենարարձր աստիճան կորովին՝ և ի վերջոյ հալ ու մաշի ենթակայ կըլլան » : Պ. Կօրթէր մանրամասնօրէն կը նկարագրէ այն տխուր

1. Երիտասարդ մը կը ճանաչեմ, հարուստ, գեղանի, որ շատ տարիէ ի վեր ողնայարի բուլաբեամբ անկողին ինկած է անբուժելի : Քանի մը հագար ոսկիներ ի գուր վատնեցին իւր հայրիկն ու մայրիկ՝ որպէս զի սիրասուն մանկան բոյժ գտնեն՝ այլ ի գուր :

Մ. Թ.

արկածներն որք այս պատճառէն կախումն ունին, բայց երկար ըլլալուն չեմք օրինակեր զանոնք :

Տօքթոր Ն. Ռօպէնսօն՝ հալ ու մաշի վրայ գըրած գործքին մէջ՝ խիստ պատուական յօդուած մը դրեր է ողնայարի մաշողութեան վրայ : Ըստ յիշեալ գիտունին, այս տեսակ հալ ու մաշը միւսներէն կը տարբերի հետեւեալ նշաններով՝ որք են տկարութիւն, անբուժելի մնալու վախ՝ երբ բժշկին ապահով խակ ըլլայ, երիկամանց երկու քովը շարունակ ցաւ, աստիկ տկարութիւն, բոլոր խաղերու վրայ վաղանցիկ ցաւեր, մտաւոր կարողութեանց և ըզգայարանաց տկարութիւն, երազափորձ, պարզ հոսում :

Հիպոկրատի այն կտորը զոր վերը յառաջ բերինք կոնակի մաշողութեան վրայ՝ դնելէ յետոյ՝ Պ. Վան Սիւէթէն կը յաւելու. « Ես աչքովս տեսայ բոլոր այս արկածներ և ալ ուրիշ շատեր՝ այն ոլորմելիներուն վրայ որ զիրենք ամօթալի սերմնահոսութեան տուած էին : Երեք տարի անօգուտ տեղ ՚ի գործ դրի բժշկութեան բոլոր հնարքներն երիտասարդի մը վրայ՝ որ այս վատ սովորութեամբ իր վրայ բերած էր անորոշ, զարմանալի և ընդհանուր ցաւեր՝ երբեմն տաքութեան, երբեմն ցրտոյ զգացողութեամբ խառն՝ որ կիմանար բոլոր մարմնոյն՝ մանաւանդ մէջքին վրայ : Ժամանակէ մը վերջ այս ցաւերը քիչ մը մեղմացած ըլլալով՝ այն աստիճան պաղութիւն կզգար ազդբերուն և սրունքներուն վրայ՝ թէպէտ վրայէն այս տեղերը իրենց բնական ջերմութիւնը պահած կը թուէին՝ որ շարունակ կը-

րակի քով կը տաքնար՝ մինչեւ իսկ ամրան սաստիկ ջերտ օրերուն : Այս բոլոր միջոցին բան մը աւելի զարմանքս գրաւեց . հիւանդին ամորձիք պարկին մէջ շարունակ կը պտըտէին և մէջքին վրայ ալ նոյնօրինակ շարժում մը կը գտար՝ որմէ սաստիկ կը նեղուէր » :

Պ . Գլխօքով իւր մէկ պատուական գործին մէջ զոր գրած է՝ մարմինէն կախում ունեցող մըտային հիւանդութեանց վրայ՝ կը հաստատէ իւր դիտողութիւններով զանոնք զորս վերը շարեցինք : «Յերման չափազանց վատնումը մարմնոյ հաստատուն մասերուն բոլոր զսպանակները կը տկարացրնէ . աստի կը ծնին տկարութիւն , ծուլութիւն , անշարժութիւն , թոքախտ , ողնայարի մաշում , թրմրութիւն և զգայարանաց վատթարումն , թանձրամտութիւն , խելագարութիւն (1) , մարելիք , ցնցումներ » :

Հօֆման արդէն դիտած էր որ երիտասարդներ որք սերմնաթափութեան վատ ախտին կենթարկուին՝ կը կորուսանեն հետզհետէ իրենց բոլոր հոգեկան կարողութիւնները , մանաւանդ յիշողութիւնը՝ և բոլորովին անպէտ կը դառնան ուսման :

Պ . Լըվիս կը նկարագրէ բոլոր այս աղէտները : Իւր երկասիրութենէն յառաջ պիտի բերեմ միայն այն նկարագիրը որ հոգեկան կարողութեան կը վերաբերի :

«Չափազանց իգասիրութենէ յառաջ եկած ա-

1 . Ասոր օրինակները դժբաղդաբար բազմաթիւ են մեր օրերը :

Ծ . Թ .

ղէտներն աւելի կանուխ կը հասնին՝ և մատաղ հասակի մէջ՝ սերմնաթափութեան զարչելի սովորութեամբ՝ որ ոչ մի գրիչ կարող չէ կատարելագլխանկարագրել իւր բոլոր տղեղ գոյներով : Սովորութիւն մը որու կուտան երիտասարդք իրենց անձն առանց գիտնալու ոճիրին բոլոր ահաւորութիւնը և այն ամեն աղէտներ՝ որք անոր Փիլիզական հետեւութիւններն են : Հոգին կը գաժուի մարմնոյ բոլոր ախտերէն՝ մանաւանդ անոնցմէ որք աս պատճառէն կը ծնին :

Սաստիկ մեղամաղձութիւն , անտարբերութիւն ուրիշ ամեն հաճոյից համար ( չե՞նք կրնար ըսել զզուանք ) , անկարողութիւն՝ մասնակցելու որ և իցէ խօսակցութեան՝ երբ կը գտնուին ընկերութեանց մէջ՝ առանց գիտնալու թէ ո՞ւր են , իրենց անձին թշուառութեան զգացումը , և այս թշուառութեան անձամբ անձին պատճառ եղած ըլլալու յուսահատութիւնը , ամուսնական երջանկութենէն հրաժարելու հարկը . ասոնք են այն բազմատանջ գաղափարներ՝ որք կատիպեն այն չուառներ՝ բաժնուիլ աշխարհէ . շատ բախտաւոր են եթէ իրենք իսկ վերջ չտան իրենց օրերուն » :

Նորանոր դիտողութիւններ պիտի հաստատեն իստորեւ այս սոսկալի նկարագրին ճշգրտութիւնը : Ոչ ինչ նուազ ահաւոր է այն նկարագիրը՝ զոր Պ . Սթորք գրած է Հիստորիոթեանց պատմութիւն ևս դարմանատարութիւն անուն գեղեցիկ գործքին մէջ : Բայց ընթերցողները նոյն իսկ հեղինակութեան կը յղեմք :

Ինձի հաղորդուած դիտողութիւններ

Այս դիտողութիւնները յառաջ պիտի բերեմ ընդունած թուականիս կարգով : «Տեսայ՝ կրաչ ինձ՝ իմ մեծանուն բարեկամս Պ. Զիմեբրման, քսան երեք տարեկան մարդ մը որ լուսնոտեցաւ՝ չարաչար սերմնաթափութեամբ տկարանալով : Ամեն անգամ երբ երազափորձ ըլլար՝ լուսնոտութիւնը կը բռնէր : Մի եւ նոյն բանը կը սրտահէր իրեն սերմնաթափութիւններէ վերջ, որմէ ամենեւին ետ չէր կենար՝ գլխուն եկած բոլոր աղէտներէն և իրեն տրուած խրատներէ վերջ : Երբ աստազարկը անցնէր սաստիկ ցաւ կզգար երիկամանց վրայ և պոչիկին շուրջը : Սակայն այս գործողութիւնը ժամանակ մը թողելով՝ բժշկեցի իր երազափորձութիւններէն և կը յուսայի լուսնոտութիւնն ալ բուժել որուն սաստիկ զարկերը արդէն անհետացած էին : Իւր ոյժը տեղը եկած էր, ասորժակը, քունը շիտուեր էին՝ և գեղեցիկ գոյն մը եկած էր երեսը՝ դիակի կերպարանք մտնելէ վերջ : Բայց իւր սերմնաթափութիւնները նորէն սկսելով՝ որոնցմէ յետոյ միշտ աստազարկ կունենար՝ սկսաւ վերջապէս փողոցներու մէջ ալ իյնալ և առտու մը մեռած գլտնուեցաւ իւր սենեկին մէջ՝ անկողնէն դուրս ինկած և արեան գետի մէջ» : Թող ընթերցողք ներեն ինձ

հարց մը՝ որ միտքս եկաւ՝ երբ կարդացի այս դիտողութիւնը . այսինքն թէ, անոնք որ անձնասպան կըլլան ատրճանակի հարուածով, որ կամովին ջրամոյն կըլլան՝ կամ զիրենք կը խեղդեն, աւելի՞ յանցապարտ են իրենց մահուան համար, աւելի՞ անձնասպան են քան այս մարդը : Առանց մանրամասնութեան մտնելու, կը յարէ՝ թէ ուրիշ մ'ալ կը ճանչէ որ նոյն վիճակի մէջ է . յետոյ իմացայ որ ան ալ մի և նոյն կերպով լմնցեր էր : «Կը ճանչէի (դարձեալ Զիմեբրմանն է խօսողը) խիստ հանճարեղ մարդ մը որ գրեթէ տիեզերակախ հըմտութիւն ունէր՝ որ կորուսած էր իւր մտաց բոլոր կորով սերմնաթափութեամբ» և որուն մարմինը ճիշդ այն վիճակի մէջ էր՝ յորում կը գտնուէր Պ. Պըրհաւի դիմող հիւանդը զոր պիտի յիշեմ ուրիշ տեղ :

Հետեւեալ երկու իրողութիւնները կ'առնում Պ Ռասթ կրտսերէն՝ հոչակաւոր բժիշկ Լիոնի, որու հետ բախտ ունեցայ քանի մ'ամիս ժամանակ անցընելի Մօնբէլլիէ : Մօնբէլլիէցի երիտասարդ մը, բժշկական ուսանող, այս կարգի անառակութեանց չափազանցութենէն մեռաւ : Իւր ոճրին գաղափարը այն աստիճան ներգործած էր մտաց վրայ՝ որ տեսակ մը յուսահատութեամբ մեռաւ՝ կարծելով թէ դժոխքին անդունդը իր քովը բացուա՛լ է զինքը կընելու համար : Այս քաղաքէն տղայ մը, վեց եօթն տարեկան, կարծեմ աղախինէ մը սովբերով՝ այն աստիճան յաճախ գիջացաւ՝ որ յամր տենդ մ'իր վրայ հասաւ և քիչ ատենէն առաւ տարաւ զինքը : Այն աստիճան կատաղութեամբ յարած էր այս գործո-

ղութեան՝ որ չկրցին զինքն անկէց հեռացնել՝ մինչեւ իւր մահուան օրը: Երբ կը յիշեցնէին իրեն որ իւր մահը կը փութացնէր՝ ինքզինքը կը մխիթարէր ըսելով՝ թէ աւելի կանուխ պիտի երթար տեսնէր իւր հայրը՝ որ քանի մ' ամիս առաջ մեռեր էր:

Պ. Միէկ՝ Պալի հռչակաւոր բժիշկն, ծանօթ գիտնական աշխարհին պատուական ճառերով՝ և որ իւր հայրենեաց երախտագիտութեան արժանացաւ ծաղկի պատուատ մտցնելով հոն՝ զոր մեծ աջողութեամբ և ճարտարութեամբ կը գործագրէ՝ ինձ կը հաղորդէ ուսուցիչ Սթէյնլէնէն՝ գրականութեան սիրուն բարեկամէս գրուած նամակ մը՝ որուն մէջ բազմաթիւ հետաքննական և պիտանի դիտողութիւններ գայ:

Ասոնցմէ մէկ քանին կը պահեմ գործոյս վերջը, որ աւելի յարմար տեղն է իրենց. բայց երկուքին բուն տեղը հոս է: Պ. . . ին որդին տասնըջորս տասնըհինգ տարեկան՝ մեռաւ ցնցումներով՝ եւ տեսակ մը լուսնոտութեամբ՝ որուն պատճառը մի միայն սերմնաթափութիւնն էր. նայուեցաւ մեր քաղաքին ամենէն վարպետ բժիշկներու ձեռք: Դարձեալ կը ճանչեմ մատաղ օրիորդ մը՝ տասներկու տասներեք տարեկան, որ այս անկարգ գործողութեամբ մաշողական ախտի հանդիսեցաւ, փորը ուռեցաւ տարածեցաւ, սպիտակ սկսաւ հոսիլ և մէզը չէր կրնար բռնել:

### Հեղինակին դիտողութիւնները

Իմ առաջին դիտողութեանս ներկայած պատկերն ահարկու է, ես իսկ անկէ սարսափեցայ՝ երբ առաջին անգամ անոր առարկայ եղող թշուառը տեսայ, և զգացի յայնժամ ամեն ատենէ աւելի՝ թէ հարկ էր ցուցնել երիտասարդաց ամեն սուկումն այն անդունդին՝ որուն մէջ կամովին կ'իյնան:

Լ. Տ. . . ժամագործը խելօք կեցած և կատարելապէս առողջ կեանք վարած էր մինչեւ տասներեօթն տարեկան հասակը: Այս տարիքին, սերմնաթափութեան սկսաւ՝ զոր կը կրկնէր ամեն օր՝ յաճախ՝ օր երեք անգամ. սերմնացայտումէն վերջ և մէկ տեղ՝ թեթեւ անզգացութիւն մը կուգար վրան եւ գլխու մկունքերուն մէջ ցնցում մը՝ որ գլուխը ուժով դէպ ետեւ կը քաշէր, մինչդեռ վիզը արտաքոյ կարգի կուռէր: Տարի մը չանցած՝ սկըսաւ մեծ տկարութիւն զգալ ամեն գործողութիւն ըրած ժամանակ:

Այս ազգարարութիւնը բաւական չեղաւ զինք դուրս հանելու տիղմէն. իւր հոգին՝ բաւրովին գրաւուած այս ազտեղջութիւններով՝ արիւր բանի ընդունակ չէր, և իւր ոճրին կրկնութիւններն աւելի յաճախե-

ցան ամեն օր՝ այն աստիճան՝ որ ալ մահուան վտանգը տեսաւ : Իմաստուն՝ այլ անազան՝ զի ախտը այն աստիճան յառաջ գացեր էր՝ որ անբուժելի էր՝ և ծննդական գործարաններն այն աստիճան դիւրագրգիւ եղած էին և տկարացած՝ որ հարկ չկար ողորմելիին կողմէն նոր գործողութեան՝ որպէս զի սերմը հոսէր : Ամենափոքրիկ գրգիւ մը յառաջ կը բերէր անմիջապէս անկատար ցցուում և այս հեղուկին պարպում՝ որով ամեն օր իւր տկարութիւնը կ'աւելնար :

Այն ձգտումը՝ զոր կ'զգար երբեմն գործողութիւն կատարած ժամանակ՝ և որ կը դադրէր անոր հետ՝ ալ սովորական ըլլալ սկսեր էր և վրան կ'ուզար շատ անգամ առանց յայտնի պատճառի՝ ու այնպէս սաստիկ՝ որ ախտազարկին ամբողջ միջոցին՝ որ երբեմն տասնը հինգ ժամ՝ և ոչ երբէք ութ ժամէն պակաս կը տեւէր՝ կ'զգար վրի ստորին մատերուն վրայ այնպիսի ահարկու ցաւ մը՝ որ չէ թէ ճչել՝ այլ ոռնալ կ'ատիպէր խեղճը՝ ու այս ամբողջ ժամանակին անկարելի էր իրեն հեղուկ կամ կարծր բան մը տանիլ բերնէն վար : Չայնը խռպոտեր էր , բայց չկրցի դիտել թէ աւելի՞ էր ախտազարկին ատեն . բոլոր ուժը կորոյս : Ստիպուելով թողուլ իւր արհեստը , ուրիշ ամեն բանի անկարող , աղքատութեամբ ընկճեալ՝ գրեթէ անօգնական՝ քաշեց քանի մ'ամիս . աւելի սղորմելի էր անոր համար՝ որ յիշողութեան կայծ մը որ իրեն մնացած էր՝ և որ շուտով մարեցաւ՝ միայն կը յիշեցնէր անոր անդադար իւր թշուառութեան պատճառները և կը

սաստիկացնէր զայն խղճի սոսկալի խայթերով : Իւր վիճակն իմանալով՝ քովը գացի : Անդամնի էակէտեւելի՝ տեսայ դիակ մը յարդի վրայ տարածուած , վտիտ , դեղնած , աղտոտ , սոսկալի կերպով գարչահոտ՝ և երբեք բոլորովին անկարող . շատ անգամ քիթէն դեղին և մածուցիկ արիւն մը կը հոսէր , անդադար ըրձունք կը վազէր բերնէն , փորհարութեամբ բռնուելով՝ չէր իմանար որ տակէն կ'երթար , սերմի հոսումը շարունակ էր , աչերը բոժալեց էին , պղտորած մարած , եւ ալ կարող չէին շարժելու . բազկերակը չափազանց կը նեւէր , աւրագ և յաճախ . շնչառութիւնը սաստիկ նեղուած էր , նիհարութիւնը չափազանց , բացի ոտներէն՝ որք կ'սկսէին պալարով ուռիլ : Մտաց անկարգութիւնն ալ ասկէ նուազ չէր . գաղափարներէ , յիշողութենէ զրկուած , անկարող՝ երկու բառ քով քովի բերելու , խորհրդածութիւնը փճացած , իւր վիճակին վրայ անզգայ՝ միայն ցաւոց զգացման ընդունակ՝ որ ամեն տեսակ ախտազարկով կը կրկնուէր էն քիչը երեք օրն անգամ մը : Խակ՝ կարի ստորին անասունէ , տեսարան՝ որուն ամբողջ արհաւիրքը մարդ չէր կրնար պէտք եղածին պէս ըզգալ . դժուարին էր՝ արդարեւ , ճանչել որ սա՛ երբեմն մարդկային տեսակին վերաբերած էր : Բաւական դիւրաւ աջողեցայ՝ զօրացուցիչ դեղերով այս սոսկալի ձգտողական տագնապները փարատելու , որ չարաչար կակիծներով միայն անոր զգացողութիւնը կ'արթնցնէին : Գոհ ըլլալով զայն այս կողմէն քիչ մը սիփիելովս՝ դեղերս դադրեցուցի , որք

չէին կրնար անոր վիճակը բարւոքել . մեռաւ նա քանի մը շաբաթէն 1757 յունիս ամսուն , բոլոր մարմնոյն վրայ ջրալից պալարներ հանելով :

Ամեն անոնք որք կը վարժուին այս անարգ և մեղապարտ գործողութեան՝ այս օրինակ անողորմ կերպով չեն պատժուիր , ստուգիւ , բայց չկայ անոնցմէ ոչ ոք որ իր վրայ ախտ մը չունենայ ասկէ մնացած : Գործողութեան աւելի կամ նուազ յաճախութիւնը , խառնուածոց տարբերութիւնը , ուրիշ բազմաթիւ օտար պատճառներ՝ մեծ տարբերութիւններ յառաջ կը բերեն : Ամենէն յաճախ տեսած ախտերս են . 1 . Պատմութիւն ամբողջական խանգարում , որ կը յայտնուի ոմանց վրայ՝ ախորժակի կորուստով կամ անկանոն ախորժակով , այլոց վրայ՝ ստամոքսի սաստիկ ցաւով՝ մանաւանդ մարսողութեան ատեն , և սովորական փոխումով , որք ըմբոստ կը մնան ամեն դեղի դէմ՝ քանի որ յարատեւեն այս գէշ սովորութեանց մէջ . 2 . Նշառութեան գործարաններուն տկարութիւն , որմէ շատ անգամ չոր հազեր կը պատահին , գրեթէ միշտ կերհերումն , տկարութիւն ձայնի , շնչասպառութիւն ամենափոքր շարժումէ վերջ . 3 . Բոլոր ջրային դրութեան թուլութիւն :

Հարկ չկայ կենդանական կազմութեան օրէնքները գիտնալով՝ որպէս զի հասկընայ ոք թէ այս երեք պատճառները կրնան ծիւրութեան ամեն հիւանդութիւնները յառաջ բերել , և փորձառութիւնը կը ցուցնէ որ ամեն օր կ'արտադրեն արդէն :

Սերմնաթափութեան առաջին վնասները բաց ի

նախընթացներէ՝ են նաեւ սաստիկ ուժաթափութիւն , քիչ կամ շատ տժգունութիւն , երբեմն թեթեւ՝ բայց յարատեւ դալուկ , յաճախ մանր ուռեցքներ՝ որք կանցնին՝ ուրիշներուն տեղի տալու համար՝ որք բոլոր դէմքին վրայ կ'երեւին , բայց մանաւանդ ճակտին , քունքերուն վրայ և քիթին մօտ . սաստիկ նիհարութիւն , տարւոյն եղանակաց փոփոխութեան ատեն սաստիկ զգացողութիւն՝ մանաւանդ ցրտոյ մասին , աչաց մէջ նուազում , տեսութեան տկարութիւն , չափազանց նուազութիւն ամեն մտաւոր կարողութեանց՝ մանաւանդ յիշողութեան : « Այլ կը հասկնամ , կը գրէր ինձ հիւանդ մը , որ այս վատթար գործողութիւնը բոլոր կարողութիւններս նուազեցուցեր է՝ մանաւանդ յիշողութիւնս : » Թող ներուի ինձ՝ զետեղել հոս քանի մը նամակներու հատակոտորները՝ որք կը բաւեն կատարեալ պատկեր մը կազմելու սերմնաթափութեան արտադրած Ֆիզիզական անկարգութեանց :

« Դժբաղդութիւն ունեցայ , ինչպէս ուրիշ շատ երիտասարդներ , (հասուն տարիքին ինձ կը գրէ) , ինքզինքս՝ մարմին և հոգին ապականող այս սովորութեան տալու . տարիքը՝ դատողութեան օգնութեամբ՝ ժամանակէ մ'ի վեր ուղղած է իմ այս վատ յօժարութիւնս՝ բայց վնասը հասած է : Չղային ցաւերուս , արտաքոյ կարգի զգայունութեանս և անոր պատճառած արկածներուն կը միանան տկարութիւն մը , անճարութիւն մը , ճանճրոյթ մը , անձկութիւն մը՝ որ կարծես թէ իրարու հետ մրցելով զիս կը պաշարեն . կը հատնիմ սերմնային կո-

րուստով շարունակ • դէմքս դիակնային է դար-  
ձեր, այնչափ տժգոյն և կապարանման է: Մարմ-  
նոյս տկարութենէն բոլոր շարժումներս դժուարացած են: Մնկուըններու տկարութիւնն այն աստիճան է՝ որ շատ անգամ հազիւ կրնամ ինքզինքս ոտքի վրայ բռնել և չեմ վստահիր սենեկէս դուրս ելնելու: Մարտոզութիւնս ան աստիճան տկար է՝ որ կերածս երեք չորս ժամ վերջ ամբողջապէս դուրս կ'ուզայ այն վիճակով՝ որ կարծես թէ ստամոքսիս մէջ նոր մտած է: Կուրծքս մազասով կը լեցուի՝ որ ներս եղած ատեն անձկութիւն կը պատճառէ ինձ, իսկ դուրս ելնելով սաստիկ տկարութիւն կը բերէ վրաս: Ահաւասիկ համառօտ պատմութիւն իմ աղէտիցս՝ որք աւելի կը սաստկանան սա համոզմամբ թէ յաջորդ օրս նախորդէս միշտ վատթար պիտի ըլլայ: Մէկ խօսքով՝ չեմ կարծեր թէ մարդկային էակ մը ինչ աւելի մըլտաչարչար եղած ըլլայ: Առանց նախախնամական յատուկ ջնորհաց՝ պիտի չկրնամ տանիլ այսչափ ծանր բեռ մը: »

Սոսկալով կարդացի, ուրիշ հիւանդի մը նամակին մէջ հետեւեալ սարսափելի խօսքերը: « Եթէ կրօնքը ձեռքս չբռնէր՝ վաղուց իսկ վերջ տուած էի կեանքի մը որ իմ ձեռքովն թշուառանալուն համար անտանելի է ինձ: » Ստուգիւ չկայ աշխարհի վրայ վիճակ մը որ սրտի անձկութենէն աւելի վատթար ըլլայ • ցաւը ասոր քով բան մը չէ • և երբ ասոր հետ միանան կարգ մ'ուրիշ ախտեր ալ՝ զարմանալի չէ որ հիւանդ մը մահուան բաղձայ իբրեւ միակ

մխիթարութիւն, և ևկատէ կեանքն իրական թըլուառութիւն՝ եթէ կեանք անուն կրնանք տալ այս հալ ու մաշ վիճակին:

Հետեւեալ նկարագրին աւելի կարճ և նուազ ահարկու է: « Գժբաղդութիւն ունեցայ՝ խիստ մատաղ հասակէս, կարծեմ ութ, տաս տարեկան եղած ատենս սովորելու այս մահաուիթ մոլութեան, որ կանուխէն եղծեց բարեխառնութիւնս • մէկ քանի տարիներէ ի վեր մանաւանդ խելքէ մտքէ չանցած աստիճան ինկած եմ: ջիղերս չափազանց տկարացած են, ձեռուըններս ոյժ չունին, կը դողդղան և միշտ կը քրտնին, ստամոքսս սաստիկ կը ցաւի, բազուկներս, սրունքներս, երբեմն երիկամունքս և կուրծքս կը ցաւին • յաճախ կը հազամ • աչերս յաւէտ տկար և նուաղած են, ախորժակս յետին աստիճան բաց է՝ սակայն շատ կը նիհարնամ և ամեն օր դէմքս առաւել կը վատթարանայ: » Գարմանատարութեան հատուածին մէջ պիտի տեսնուի դեղերու ինչ աստիճան յաջորդութիւն ունենալն այս մասին: « Բնութիւնը, կը գրէր երբորդ մը, բացաւ աչքս այն նուազման պատճառին վրայ՝ յորում կը գտնուէի և այն անդունդին վրայ՝ ուր պիտի գահավիժէի, երբեմն արանդամիս վրայ սպառններ հանելով՝ և մեղանչած ժամանակ զգացած տկարութեամբ՝ որոնք ալ տարակոյս չէին թողուր անոնց պատճառին վրայ »:

Կրնայի հոսդնել կարգ մը պատմութիւններ հիւանդութեանց՝ որոց համար կանչուեցայ այս գրքիս երկրորդ տպագրութենէն ի վեր • բայց ապագայիւն

կրկնութիւններ պիտի ըլլային : Բաւական կը համարիմ երկու կամ երեք նորադոյն դիպուածներ : Դեռ քանի մ'օր առաջ ինձ կը գրէր մարդ մը որ հասուն տարիքի մէջ է . « Տղայ հասակէս սոսկալի սովորութեան մը գերի եղայ՝ որ առողջութիւնս եղծեց . գլուխս կը տաղնալի և կը դառնայ՝ այնպէս որ կաթուածահար ըլլալէս վախնալով՝ արիւն առին ինձ . բայց շուտով հասկըցան որ գէշ ըրին : Կուրծքս կը սեղմուի՝ հետեւաբար չնշառութիւնս կը նեղուի . յաճախ ստամոքսացաւ կուեննամ և մարմնոյս ամեն կողմ կը կսկծի . գիշեր քունս խոտոված է և տազնապալից ու օգուտ մը չընէր ինձ . շարունակ կը քերուըտիմ, տժգոյն եմ, աչերս վատած եւ ցաւոտ են, դէմքս դալիացած, բերանս՝ անհամ, և այլն : »

« Զեմ կրնար, կը գրէր երկրորդ մը, երկու հարիւր քայլ առնուլ՝ առանց նստելու . տկարութիւնս վերջին աստիճան է, բոլոր մարմնոյս վրայ շարունակ ցաւեր կ'զգամ՝ մանաւանդ ուսերուս վրայ, կուծքէս չափազանց կը նեղուիմ . խնորժակս տեղն է՝ բայց դժբաղդութիւն մ'է այս, որովհետեւ ստամոքսս կը ցաւի բան կերածիս պէս՝ զոր յաճախ գուրս կուտամ ամբողջապէս . եթէ երկու երեք երես բան կարգամ՝ աչերս արցունքով կը լեցուին և կը նեղեն զիս . շատ անգամ ակամայ կը հառաչեմ : »

Այս ախտին մէկ արդիւնքն՝ որ հագուադէպ չէ՝ սեւամազձութիւնն է . և եթէ սեւամազձները այս գործողութեան տան իրենց անձը՝ հիւանդու-

թիւնն սաստիկ՝ և անբուժելի կ'ըլլայ : Տեսայ որ այս երկու միացեալ պատճառներէն յառաջ եկան տազնապներ, յուզմունք, կատաղի անձկութիւնք . և կրկնուած դիտողութիւններ զիս համոզած են՝ որ սեւամազձոտներ՝ որոնք երբեմն ցնորի և մեղմամղութեան ենթակայ են՝ աւելի արագ կ'իյնան այս ախտերուն մէջ՝ եթէ սերմնաթափութիւն ընեն : Ուղեղը տկարանալով այս կրկին պատճառներով՝ յաջորդաբար կը հորուսանէ իր բոլոր կարողութիւնները, և այս հիւանդներ կ'իյնան վերջապէս ապշութեան մը մէջ որ կ'ընդմիջի երբեմն յիմարական ախտազարկով մը :

Ամեն մարդ գիտէ որ լուսնոտութեան այն ըմբուսումներ որ սերմի հոսման հետ կ'ընթանան՝ աւելի սպառում՝ մանաւանդ ապշութիւն կը պատճառեն՝ քան թէ միւս տեսակները : Մերձաւորութիւնն աւելի կը զայրացնէ լուսնոտներուն ախտը . և այս պատճառին կ'ընծայէ Պ . Վան Սուիթէն այս կարգի հիւանդաց սաստիկ ուժաթափութիւնը՝ եթէ ըմբուսումը յաճախ պատահի :

Պ . Վան Սուիթէն լուսնոտ մը գիտէ՝ որ իւր առագաստի գիշերը բռնուեցաւ ախտէն : Պ . Հօֆման խիստ ցոփակեաց կին մը կը ճանաչէր՝ որ ամեն անգամ երբ դործողութիւն կ'ընէր՝ կը լուսնոտէր : Ի դէպ է հոս նշանակել ինչ որ կրտէ Պ . Պրոհաւ Յարագս ջրային ախտից գրքին մէջ՝ թէ՛ ցանկական չափազանց գրգռումն ջիղերը կ'զգածուին՝ շատ անգամ մահ պատճառելու չափ : Կը յիշատակի՝ կին մը որ ամեն մերձաւորութիւն ընելուն՝ երկար

Թալկացման մէջ կ'իյնար, և մարդ մը՝ որ առաջին մերձաւորութեան մեռաւ. ձգտման սաստիկութիւնը զինք բոլորովին ընդարմացուցեր էր անմիջապէս:

Գարձեալ կը գտնեմ այն պատուական գրքին մէջ՝ որով Պ. Սօվաթ ճոխացուց- բժշկութիւնը՝ սա եղական և դուրսէ միակ դիտողութիւն թէ, մարդ մը գործողութիւն ըրած ժամանակ ձգտում կ'ու- նենար (և այս տեւեր է տասներկու տարի) ո- րով բոլոր մարմինը փայտ կը կտրէր և ինքզինք կը կորուսանէր: Ասոր նման բաւական բաներ գիտեմ: Պ. Հալէր նմանօրինակ շատ եղելութիւններ կը յի- շատակէ իւր Գիտելիք ի վերայ սկզբունց Պրոհաւի գրքին մէջ, բաց աստի ուրիշ դիտողներու գըր- ուածոց մէջ ալ ամեն տեղ կը գտնուին:

Վերը տեսնուեցաւ որ սերմնաթափութիւնը լուսնոտութիւն կը բերէ, այս բանը կարծուածէն աւելի կը պատահի. ուրեմն ի՞նչ կայ զարմանալու թէ սերմնաթափութիւնը լուսնոտներու վրայ ախ- տազարկը կը փութացնէ՝ ինչպէս տեսած եմ շատ անգամ. զարմանալի՞ է թէ այս մտլութիւնը յիշ- եալ հիւանդութիւնն անբուժելի ընէ:

Մարմնոյն ամբողջապէս փայտ կտրելը՝ զոր կը յիշատակէ Պ. Պրոհաւ, խիստ հագրուագէս պատաս- նելի՞ է. և մէկ անգամ միայն տեսայ զայս՝ երբ գրքիս վերջին տարգրութիւնն իրոյս ելաւ. բայց իւր ամենակատարեալ աստիճանով տեսայ: Հիւանդու- թիւնն սկսած էր վզին և ողնայարին փայտնալովը. հետզհետէ գրաւեց բոլոր անդամները. և տեսայ այս ողորմելի երիտասարդը իւր մահուընէն քիչ

ժամանակ առաջ՝ որ միայն կունակին վրայ կրնար պտուկիլ անկողնին մէջ՝ ամենեւին չկրնալով ոչ ձեռք և ոչ ոտք երեքցունել. անշարժ բոլորովին այն աստիճան՝ որ կերակուրը բերնէն վար կը լեց- նէին: Քանի մը շարաթ ապրեցաւ այս ախտը վի- ճակին մէջ և մեռաւ՝ կամ ճիշդ ըսելով մարեցաւ առանց իմանալու:

Անկէց վերջ ուրիշ օրինակ մը տեսայ՝ այս ամ- բողջական և մահաբեր փայտ կտրելուն՝ և որ կ'ար- ժէ յիշատակութեան: 1760 փետր. 10ին կանչեցին զիս դեղը՝ նայելու քառասնամեայ մարդ մը որ ժա- մանակին սաստիկ կայտառ և կորովի եղած էր, բայց շատ իգամոլութիւն և գինեսիրութիւն ըրած՝ և ուժ փորձելու խտրէր գործադրած էր յաճախ: Իւր հիւանդութիւնը շատ ամիսներ առաջ սկսած էր՝ ծոնկերուն վրայ տկարութիւն գալով՝ որովկը դող- դըլար քալելու ժամանակ՝ իբր թէ շատ խմած ըլ- լար. երբեմն կ'իյնար՝ մինչև իսկ հարթ գետնի վը- րայ պտըտած ատեն. դժուարաւ կենէր սանդու- ղին աստիճաններէն, և ալ չէր համարձակեր գրեթէ սենեկէն դուրս ելնել: Չեռները սաստիկ կը դողա- յին, հաղիւ քանի մը բառ գրել կրնար՝ այն ալ գէշ, բայց ուղղագրութիւնը կանոնաւոր էր՝ թէ- պէտ լեզուն՝ որ առաջ ալ արագաշարժ չէր՝ սկը- սած էր յամբանալ: Յիշողութիւնը տեղն էր, և մի- այն ասով կ'երեւէր թէ մտաւոր կարողութիւնները տկարացեր էին՝ որ քիչ ուշադիր էր ճարտարակին. դէմքը փոխուած էր, ախտը ակը տեղն էր՝ և լաւ կը քնանար՝ բայց քիչ մը դժուարութիւն կը քա- չէր անկողնին մէջ դառնալու:

Այնպէս կարծեցի թէ ախտին առաջին սրտո-  
ճառն էր չափազանց իգամուրթիւն և գինեսիրու-  
թիւն՝ և խորհեցայ որ ուժ փորձելու խաղերը զոր  
գործադրած էր՝ ջիղերը մասնաւորապէս վտանգեր  
էին : Եղանակը նպատաւոր չէր դեղատուութեան .  
սակայն հարկ էր ախտին յառաջադիմութիւնն ար-  
գիւլելու աշխատիլ : Խորհուրդ տուի որ բոլոր մար-  
մինը Փանէլայով շիէ՝ և ինչ ինչ զօրացուցիչ դե-  
ղեր հրամայեցի . միտքս դրած էի անոնց քանա-  
կութիւնն աւելցնել՝ և ամառը գալուն պէս ա-  
նոնց հետ միացնել նաեւ պաղ ջրով լրացումը :  
Քանի մը շարաթ վերջ ձեռքի դողդոջումները քիչ  
մը նուազած կերեւէին : Ապրիլ ամսուն բժշկական  
խորհրդակցութիւն մ'ըրինք . սա որոշումը արը-  
ուեցաւ թէ հիւանդութիւնն քանի մ'ամիս նոր բը-  
ռած սենեկի մէջ գիր գրելէն յառաջ եկած էր .  
եղի ջրով բազնիք հրամայեցինք , իւղերով շիումն ,  
քրտնեցուցիչ և ձգտումներ կասեցնող փոշիներ .  
բնաւ փոփոխութիւն մը չեղաւ : Յունիս ամսոյն  
երկրորդ խորհրդակցութեամբ որոշուեցաւ որ եր-  
թայ Աթօքի շուրերը մըանէ՝ ի Վալէ : Ի դարձին  
աւելի փայտցում և դողդոջում ունէր : Այն օրէն  
(1760 սեպտ.) մինչեւ 1764 յունվարին՝ երեք չորս  
անգամ հազիւ տեսայ : 1765ին չգիտեմ որ ծանու-  
ցումէն սովրեւով՝ Յրանդֆորդէն գեղեր բերել  
տուաւ՝ որք օգուտ մը չըրին : Վերջին տարին՝ օ-  
տարական բժշկի մը գեղեր առաւ՝ որք նոյնպէս  
քիչ յաջողութիւն ունեցան : Հիւանդութիւնն ա-  
ռաջին օրէն՝ ծանր բայց ամենօրեայ յառաջադի-

մութիւն ըրած էր՝ և իւր մահուընէն շատ ամիս-  
ներ յառաջ՝ չէր կրնար այլ եւս ոտքի վրայ կանդ-  
նիլ : Նոյնպէս անկարող էր ինքնիրեն երերցնելու  
բազուկները կամ ձեռքերը : Ազուլին թոթովու-  
թիւնն աւելցաւ՝ և ձայնն այն աստիճան մարեցաւ՝  
որ խօսքերը հազիւ հազ կը լսուէին . գլխու ջիղերը  
թուլնալով՝ շարունակ գլուխը կուրծքին վրայ կ'իյ-  
նար , մէջքի վրայ միշտ անհանգստութիւն կ'ըզ-  
գար , քունը և ախորժակը հետզհետէ նուազեցան .  
կենաց վերջին ամիսները շատ դժուարաւ կը կընէր  
ո եւ իցէ բան մը : Մտուողի տօնէն սկսեալ՝ չնչա-  
ուութեան նեղութիւն եկաւ վրան , անկանոն տեն-  
գով մը . աչաց լոյսը զարմանալի կերպով մարեցաւ :  
Երբ յունվար ամսոյն տեսայ զինքը՝ ամբողջ օրը և  
գիշերուան մէկ մասը կ'անցընէր թիկնաթոռի մը  
վրայ , դէպ ետեւ ծռած , սրունքները երկնցու-  
ցած աթոռի մը վրայ , ամեն վայրկեան գլուխը  
կուրծքին վրայ կ'իյնար , և մարդ մը ունէր քովը  
կանգնած՝ որուն պաշտօնն էր անդադար զայն մէկ  
կողմէ միւսը շրջել , անոր գլուխը վերցընել , կե-  
րակրել զայն , ծխախոտ տալ , քիթը սրբել և ու-  
շով մտիկ ընել բոլոր ըսածները : Իւր կենաց վեր-  
ջին օրերն ստիպուած էր արտասանել խօսքե-  
րուն գրերը մէկիկ մէկիկ՝ և քանի արտասանէր՝  
գրի կ'առնէին՝ որ խօսքը հասկցուէր : Տեսնելով  
որ ես չէի յուսադրեր զինքը՝ և ուրիշ դեպ չէի տար  
անոր՝ այլ միայն քանի մը ամոքարարներ՝ սրտի  
դոցուելուն և տենդին համար՝ ապրելու փափա-  
քէն մըլուած՝ գաղտնաբար հազորդեց իւր մէկ բա-

բեկամին՝ որ դայ ինծի ըսէ ասպա՛ այն պատճառը՝ որ շարժառիթ կը կարծէր իւր բոլոր աղէտից՝ խոստովանելով՝ որ սերմնաթափուլիւնն էր այն . թէ՛ սկսած էր այս գարշուլիւնն շատ տարիներ առաջ . թէ՛ կրցածին չափ երկար ժամանակ շարունակած էր . և թէ՛ զգացեր էր՝ որ ամեն անգամ ընկելուն՝ ախտերը կ'աւելնային : Քանի մ'օր յետոյ հաստատեց ինձ այս խոստովանութիւնը : Տարիական հաճոյից չափազանցուլիւնը միայն թալկացուցիչ հիւանդութիւններ չարտադրեր , երբեմն ծանր հիւանդութիւններու կը տանի՝ և միշտ կը դպչի այն հիւանդութիւններուն որ ուրիշ պատճառէ առաջ եկած են . շատ դիւրաւ յառաջ կը բերէ ժանտաբարոյութիւն՝ որ ըստ իս ուրիշ բան չէ՛ , այլ միայն բնաւորութեան մէջ զօրութեան պակասութիւն :

Ամեն ինչ որ կըսէ Պ . Հօֆման այս նիւթիս վրայ՝ արժանի է հոս դրուելու : Յետ խօսելոյ այն վտանգներուն վրայ՝ որ տարիական հաճոյքէն կը սլատահին վերաւորելոյ՝ մանրամասնաբար կը նըկարագրէ այն փորձանքները որ տենդէ բռնուող մարդոց գլխուն կուգան հեշտութեան գործողութենէն՝ և նախ կը դնէ Փապրիս տը Հիլտէնի մէկ դիտողութիւնը՝ այսինքն թէ՛ կողացառութեամբ ախտացած մարդու մը՝ որ եօթներորդ օրը աղէկացած էր առատ քրտինքով մը , տասներորդ օրը կնոջ մօտենալով՝ սաստիկ տենդ մը և դողդոջիւն մը եկաւ վրան՝ և մեռաւ երեքտասներորդ օրը :

Յետոյ յառաջ կը բերէ պատմութիւնն յիսնամեայ , յօղացաւտա և իզամոլ ու գինեսէր մարդու

մը՝ որ թեթեւ կողացաւէ մ'աղատելէ քանի մ'օր վերջ մերձաւորութիւնը բաժ չըրած՝ դողդոջիւն մ'եկաւ բոլոր մարմնոյն , դիմաց վրայ սարսափելի կարմրութիւն մը , տենդ սկսաւ , և նախկին հիւանդութեան՝ որմէ աղէկացած էր՝ բոլոր ախտանիշերն նորէն երեւցան , բայց առաջինէն առաւել սոսկալի կերպով և մեծ վտանգի մէջ ինկաւ մարդը :

Կարճեալ կը խօսի մարդու մը վրայ՝ որու՝ ամեն անգամ տուփական ծայրայեղութիւններ ընկելու ժամանակ՝ տենդ կ'ուգար վրան՝ որ շատ օրեր կը տեւէր : Կը վերջացնէ Պարթօլէնի մէկ դիտողութեամբ՝ որ տեսաւ թէ՛ նոր ամուսնացեալ մը իւր առաջաստին հետեւեալ՝ օրը՝ մերձաւորութեան չափազանցութենէն ծանր տենդէ բռնուեցաւ , վրան սաստիկ տկարութիւն եկաւ , մարելիք , ստամոքսի տակնուվրայութիւն , չափազանց ծարաւ , ցնորք , քնհատութիւն և մեծ անձկութիւն . առողջացաւ հանգստութեամբ և քանի մը զօրացուցիչ դեղերով : Տխուր դիտողութիւններով համոզուած եմ՝ որ սերմնաթափերու վրայ՝ ծանր հիւանդութիւններ շատ վտանգաւոր կը դառնան . այս հիւանդութեանց ընթացքը սովորաբար անկանոն կ'ըլլայ , ախտանիշերն արտառոց , անոնց շրջանը անկարգ :

Բժիշկն անոնց խռոնուածէն օգնութիւն չկրնար յուսալ , ամեն բան արհեստէն սպասելու պարտաւորած է . և որովհետեւ խռոնուածը չկրնար յառաջ բերել կատարեալ յեղաշրջում մը՝ երբ շատ դժուարութեամբ հիւանդութիւնը յաղթուի՝ հիւան-

գը տեսակ մը նուազումի մէջ կը մնայ՝ քան թէ կ'ապաքինի՝ որով հարկ կ'ըլլայ անդադար լնամ տանիլ՝ որպէս զի պարբերական հիւանդութեան մը չհանդիպի . և կը տեսնեմ որ Ծօնսէգան արդէն ծանուցա՝ էր այս վտանգը . « Շատ երիտասարդներ , կ'ըսէ , մինչեւ իսկ ամենէն կորովիներ , կանանց հետ չափազանց խառնակելով՝ նոյն իսկ մէկ գիշերուան մէջ կը զարնուին՝ կամ սաստիկ տենդէ՝ որ զիրենք կ'սպաննէ՝ կամ ուրիշ հիւանդութեանց մէջ կ'իյնան , որոցմէ դժուարաւ կը բուժին . քանզի երբ մարմինը չափազանց ցոփութեամբ տկարանայ՝ եթէ նոյն միջոցին ծանր հիւանդութիւն մը վրայ հասնի՝ ճար չըլլար : »

Պատանի մը որ հազիւ տասնըվեց տարեկան էր՝ այն աստիճան կատաղութեամբ տուած էր ինքզինք սերմնաթափութեան՝ մինչ վերջապէս սերմի տեղ սկսած էր արիւն գալ , քիչ ատենէն անտանելի ցաւեր զգալ հոսումէն ետք՝ և բոլոր ծննդական անդամոց բորբոքում : Գիպուածով գեղ գտնելով զիս՝ ինձ նայել տուին : Չափազանց կակղացուցիչ տածեր հրամայեցի , որք՝ յուսացած արդիւնքս տուին . բայց յետոյ իմացայ որ մեռեր է ծաղիկ հանելէ քիչ ժամանակ վերջ . և չկասկածեցայ՝ որ այն վատ սովորութեամբ իր մարմինը տկարացնելով՝ մեծապէս նպաստած էր այս հիւանդութեան մահաբեր ըլլալուն : Ի՛նչ ազդարարութիւն երիտասարդաց :

Ո՛վ որ յաճախ առիթ կ'ունենայ դարմանելու տարփական հիւանդութիւններ՝ գիտէ որ ցոփութեամբ մաշած անձերու վրայ այս ախտեր շատ ան-

գամ մահաբեր կը դառնան : Ամենասոսկալի տեսարաններ դիտած եմ այս տեսակէն : Պ . Մուկանի կ'ըսէ թէ տուփական յաճախ մտածութիւններ բաւական կ'ըլլան յառաջ բերելու ամորձիքի երակաց ուռեցք և ջրգողութիւն՝ որ շատ անգամ ծանր հիւանդութիւններ կը դառնան :



Ն Ա Տ Ո Ւ Ա Մ Դ .

Գիշորքեան հետեւանքը կանանց վրայ .

Նախընթաց դիտողութիւնները գրեթէ բոլորն ալ էրիկ մարդոց կը վերաբերին : Այս նիւթին վրայ անկատար կերպով ճառած կ'ըլլայի՝ եթէ չազդարարէի էգ սեռին՝ թէ չարագործութեան նոյն ասպարիզին մէջ ընթանալով՝ նոյն վտանգաց ենթակայ կ'ըլլայ . թէ՛ շատ անգամ էգ սեռն ալիւր վրայ հրաւիրած է վերը նկարագրած աղէտներս . և թէ այս անառակութեան անձնատուր կանայք աղիողորմ մահուամբ կը մեռնին ամեն օր : Բացի յայն ախտանիշերէ զորս նկարագրեցի՝ կանայք մասնաւորապէս ենթակայ կ'ըլլան արգանդի ամեն տեսակ ախտերուն , անբուժելի դեղնութեանց , ստամոքսի և կռնակի սոսկալի ցաւերու , քիթի անտանելի ցաւոց , նախտակ հոսման՝ որուն կծուութիւնը մշտատե աղբիւր է սաստիկ ցաւերու , արգանդի վիրաց , բոլոր այն հիւանդութեանց՝ որ այս երկու ախտէն կը ծագին . նոյնպէս ենթակայ կ'ըլլան ծլիկի երկննալուն և որքինի, հարսնամոլութեան՝ որ անոնց ամօթխածութիւնն և խելքը միանգամայն սուներով կը հաւասարէ զանոնք ամենէն շուայտ անասնոց , մինչեւ որ յուսահատական մահ մը լսէ զանոնք վշտոց և վատանուն կենաց ձեռքէն :

Դէմք՝ հոգւոյ և մարմնոյ պատկերին այս ճշգրիտ հայելին՝ ամենէն առաջ կ'իմացնէ մեզ կազմական խանգարմունք : Գիրութիւնը և երեսի գոյնը՝ որոց միաբանութիւնը կը ներկայէ երիտասարդական այն կերպարանը՝ որ միայն կարող է գեղեցկութեան տեղ բռնել՝ առանց որոյ գեղեցկութիւնը միայն ցուրտ հիացման տպաւորութիւն կ'ազդէ , գիրութիւնը , կ'ըսեմ , և դիմաց գոյնը կ'անհետին ամենէն առաջ . նիհարութիւն , կապարի գոյն , մորթի խտութիւն անմիջապէս կը յաջորդեն անոնց . աչքերը կը կորուսանեն իրենց փայլը , կը խաւարին և իրենց նուազմամբ կը պատկերացնեն բոլոր մեքենային նուազումը . շուրթերը կը կորուսանեն իրենց բուստի գոյնը , աղբաները՝ իրենց ձերմութիւնը , և վերջապէս խիստ շատ անգամ տեսքը մեծապէս կը փրատի հասակին ամբողջական տձեւութեամբը : Ուկորներու կորացում կամ խանգարումն միայն մինչեւ երեք տարու տղոց սեպհական հիւանդութիւն չէ՝ ինչպէս կը գրէ Մեծն Պրոհաւ : Կը տեսնուին սովորաբար երկու սեռէ երիտասարդներ՝ բայց մանաւանդ կիներ՝ որ մինչեւ իրենց 8, 10, 12, 14, մինչեւ իսկ 16 տարեկան հասակը բարեձև ըլլալով՝ կ'իյնան քիչ քիչ մարմնոյ վատթարութեան ախտին մէջ , որնայսարին ծռելով , և շատ անգամ խիստ գէշ վիճակի կը հասնին :

Պ . Հօֆման արդէն ըսած է՝ որ երիտասարդք՝ որք իրենց աճումը չկատարած՝ անձնատուր կ'ըլլան հեշտութեանց՝ փոխանակ աճելու՝ կը նուազին ,

եւ դժուար չէ հասկնալ թէ՛ պատճառ մը՝ որ կրնայ արգելել աճումն՝ աւելի ևս կարօղ է անոր կարգը խանգարել և յառաջ բերել անոր ընթացքին մէջ այն անհաւասարութիւններ՝ որ կը նպաստեն վերոյիշեալ հիւանդութեանց :

Ախտանիշ մը որ հասարակ է երկու սեռին՝ և զոր այս հատուածին մէջ կը դնեմ, զի կանանց վերայ աւելի կը տեսնուի՝ անտարբերութիւնն է՝ զոր կ'ազդէ այս պղծութիւն առ օրինաւոր հաճոյս ամուսնութեան՝ մինչեւ իսկ եթէ մարմնական փոփոքը և զօրութիւնը մարած չ'ըլլան . անտարբերութիւն՝ որ ոչ միայն շատերու ամուրիութեան պատճառ կ'ըլլայ՝ այլ նաև անոնց կը հետամտի մինչեւ ամուսնական անկողնոյն մէջ : Կին մը կը խոստովանի, Տօքթէօն Պէքքըրի հաւաքածոյից մէջ, թէ այս գործողութիւնը այն աստիճան տիրապետած է իր զգայարանաց՝ որ կ'արհամարհէ օրինաւոր միջոցս իւր անգամը խըտգտելու կերպը : Երիտասարդ մը գիտեմ՝ որ ուսանելով այս աղտոտութիւնը իւր դաստիարակէն, նոյն զգուանքն զգաց ամուսնութեան առաջին օրերը, և այս վիճակին անձկութիւնը՝ միանալով իւր գարշագործութենէն յառաջ եկած սպառման վրայ՝ ձգեց զինքը խորին մեղամաղձութեան մէջ՝ որ անցաւ ջղային և զօրացուցիչ դեղերու գործածութեամբ :

Տակաւին աւելի հեռուն չգնացած՝ թող ներուրի ինձ՝ հրաւիրել հայրեր մայրեր խորհիլ այս վերջին տեսակ հիւանդին դժբախտութեանց ստիժին

վրայ . շատեր կան արդարեւ այս կարգէն (1) : Եթէ հնար է խաբուիլ այս աստիճան այնպիսի մարդոց ընտրութեան մէջ՝ որոնց կը յանձնուի մանկանց միտք և սիրտ կրթելու փոփոկ գործը, ո՛րչափ ևս առաւել պէտք է վախնալ անոնցմէ՝ որք միայն մարմնաւոր ձիրքեր մշակելու պաշտօն ունենալով՝ նուազ ուշադրութեամբ կը քննուին իրենց վարուց բարուց վրայօք, և մանաւանդ սպասաւորներէ՝ զորս կը բռնեն յաճախ առանց նայելու թէ վարք բարք ունի՞ն մի (2) :

(1) Թող մտիկ ընեն մեր նորասեր յիմար վարիչներ՝ որք սկսած են վերջին տարիներս ամուրի անփորձ պատանիներ կամ նորահաս երիտասարդներ ոչ քի դաստիարակ՝ այլ տնօրէն իսկ կարգել մանչ եւ աղջիկ տղոց վարժարաններու՝ այնպես իմն կարծելով քի անոնց ուսման եւ արժանաւորութեան հաւասարող պարկեշտ, փորձեալ, ընտանեաց հայր տեսուչներ կը պակսին ազգին մէջ : Այդ կարգի պարոններուն տուած բարոյական եւ ուսումնական պտուղները տեսնուեցան շատ տեղ իպատիւ իրենց հիացողաց . . . . :

Դիտ . Թ .

(2) Ամեն անգամ երբ ատիք կուգայ ինձ ճշմարտութիւնն ըսելու՝ չեմ կրնար լռել, իմ պակասութիւնս այս է . ըսեմ ուրեմն .

Օրմը տեր պապա մը կը գանգատեր ընդհանուր ժողովոյ մէջ քի վարժապետներ անհաստութեան տարածուելուն պատճառ կ'ըլլան՝ դգպ-

Անթիւ տունկեր զիտեմ որ խամրած են պարտիզպանին ձեռք ում յանձնուած էր անոնց խնամքը :

Այս տեսակ մշակութեան մէջ՝ երկու սեռէ մշակներ կան : Ի՞նչ դարման ընելու է այս չարեաց՝ պիտի հարցուի ինձ : Պատասխանն իմ սահմանէս դուրս է . համառօտիւ պիտի տամ : Ամե-

րոցներու մէջ՝ քրիստոնեական դաս չտալով . այլ անդակուքի՛ւն . ջեր ըսեր որ՝ վարժապետներ՝ այլ գլխաւորաբար վարդապետներ , տէրտէրներ , ազգին բարոյական մանուան , բարուց ապականութեան պատճառ կ'ըլլան՝ անընտրողութեամբ դասատուութեան մէջ ընդունուելով : Այս վերջի ատեններս նորածնութիւն մ'եղաւ ազգին՝ կարգ մը նորատի վարդապետներ վարժարանաց մէջ ուսուցիչ , տընօրէն ընդունելը . վարդապետի վանք , տիրութեան յեկեղեցին՝ վարժապետն ի վարժարան ընդ հսկողութեամբ . ջմուռանք նա եւ խոստովանութիւն ընող քահանային վրայ հսկողութիւնը : Մեր աշակերտութեան օրով Փրկչի հիւանդանոցը երգնկացի կարմրամորուս քահանայ մ'արգիլուած էր իբրեւ շնացող՝ ջգիտեմ՝ ի՞նչ . այս մարդը երկու հարիւրէն աւելի տոց խոստովանանք կ'ընէր ամեն տաղաւարին . ի՛նչ խոստովանանք . առաջին անգամ այն քահանայն ինձ տուաւ . հեշտական գործողութեան դասը խոստովանանքի միջոցին : Այն ատեն պատրիարք Լ. Գ. որք Դ. Կարողիկոսը՝ որ անգրութեամբ գոցեց փրկչի վարժարանը եւ դուրս քափեց բազմարիւ պանդուխտ ուղիմ պատանիներ :

նամե՛ծ ուշադրութիւն նուիրել դաստիարակաց ընտրութեան՝ և հսկել անոր ու իր աշակերտին վրայ՝ այն արթնութեամբ՝ որ ուշադիր ու լուսամիտ հօր աչքէ ջլրնար թագուցանել ի՛նչ որ կը դառնայ իւր տանն ամենամթին խորշին մէջ , այն արթնութեամբ՝ որ շիւղ մը կը տեսնէ՝ մինչդեռ ուրիշներ անտես կ'ընեն դերանը . և այս միջոցն հնարաւոր է՝ եթէ միայն կամը ըլլայ :

Երբէք մինակ չթողուլ տղայք կասկածելի վարպետներու հետ , կտրել ամեն հաղորդակցութիւն սպասաւորաց հետ :

Դեռ շատ ժամանակ չկայ՝ որ մանկահասակ աղջիկ մը , տասն եւ ութ տարեկան՝ որ երբեմն խիստ առողջ էր՝ սոսկալի տկարութեան մէջ ինկաւ . իւր զօրութիւնը կը պակսէր օր օրի . մինչև իրիկուն թմրած կը մնար՝ գիշերն ալ քուն չունէր , ախորժակը դացեր էր , և բոլոր մարմնոյն վրայ ջրալից պալարներ սփռուած էին : Ինքզինք նայել տուաւ վարպետ վիրաբուժի մը՝ որ լաւ մը քննելով հասկցաւ թէ դաշտանի մէջ անկարգութիւն մը չկար , ուստի հասկցաւ թէ դիժութիւն կ'ընէ :

Առաջին հարցման տրուած պատասխանէն կասկածը քիչ քիչ փարատեցաւ , հիւանդին խոստովանութիւնը , երեւան հանեց ճշմարտութիւնը : Զգացուց աղջկան՝ այս դարձութեան վտանգները՝ որմէ հրաժարելով և քանի մը դեղեր առնելով քիչ օրէն ախտին յառաջագիմութիւնն կասեցաւ՝ որով աղջիկը վրայ ալ եկաւ :

Քաց ի դիջութենէ կամ ճեռաց պղծութենէ՝ ուրիշ պղծութիւն մ'ալ կայ՝ որ յիկային կրնանք անուանել:

Բնութիւնն իւր խաղերուն մէջ կ'գրօնու երբեմն կանանց ոմանց կէս այրութիւն տալով, այսինքն սովորաբար խիստ պղտի անդամ մը՝ չափազանց մեծ կ'ըլլայ՝ և ասոր հետ խաղալը բան գործ ընելով կանայք՝ չարաչար կը վնասին: Պարծենալով գուցէ այս այրական նմանութեան վրայ՝ այս կէս—մարդոցմէ ոմանք կսկսին այրական պաշտօն ալ կատարել: Սակայն ասոր վտանգն ալ միւս զազրագործութեանց վտանգէն պակաս չէ: Բոլոր այս ճամբաները կ'առաջնորդեն սպառման, թալացման, ցաւոց, մահուան:

Այս վերջի կէտը անոր համար աւելի արժանի է ուշադրութեան՝ վասն զի մեն օրերն առաւել յաճախած է այն, և շատ դիւրին է գտնել բազում օֆէլաներ և Մետոլլաներ՝ (1) որք այս Իտալուհիներուն պէս՝ բնութեան պարզելին կրթնած՝ կը կարծեն թէ իրաւունք ունին ծննդեան անիրաւ խտրութիւնները մէջ տեղէն բառնալու:

Տեսնուած են կիներ՝ որք ամենէն տուփոտ մարդոց չափ կաթողին սիրեր են զաղկունս, մինչև իսկ կատաղաբար նախանձեր են անոնց վրայ սէր ցուցնող էրիկ մարդոց դէմ:

Ժամ է այլ եւս վերջ տալու այս աղէկտուր

(1) Կոլիբորիկի մեծութեան կողմէ հռչակաւոր կանայք:

մանրամասնութեանց. ալ հոգնեցայ նկարագրելով մարդկութեան խայտառակութիւններն և թշուառութիւնները: Հոս չպիտի բարդեմ վրայէ վրայ ասկէ աւելի իրողութիւններ. մնացածն ալ իրենց բուն տեղին պիտի պահեմ. և կ'անցնիմ պատճառներուն քննութեան՝ սա ընդհանուր դիտողութիւնն ընելէ յետոյ՝ այսինքն թէ՛ այն երիտասարդք՝ որք բնականաբար տկար կազմ ունին՝ հաւասար մոլութեամբ աւելի կը վնասին՝ քան թէ զօրաւորները: Ոչ ոք կ'ազատի պատուհասէն. ամենքն ալ հաւասար խստութեամբ չեն պատժուիր: Մանաւանդ անոնք՝ որք վախ ունին մայրենի կամ հայրենի ժառանգական հիւանդութիւններէ՝ որք տրամադիր են յօդացաւի, քարախտի, թոքախտի, խոլլի, հաղալու, շնչարդելութեան, արիւն թքնելու, գըլխացաւի, լուսնոտութեան և մէջքի կորացման, բոլոր այս անբախտները, կ'ըսեմ, լաւ պէտք է համոզուին՝ թէ իւրաքանչիւր գործողութիւն կը վրտանդէ իրենց կազմուածը, ապահովապէս կը փութացնէ այն ախտերը որոց տրամադիր են, անոնց ախտազարկը վտանգաւոր կ'ընէ՝ և կը նետէ զիրենք ի ծաղիկ հասակի՝ ամենածիւրեալ զառասուրթեան բոլոր հիւանդութիւններուն մէջ:

# ՄԱՍՆ Բ.

## Պ Ա Տ Ճ Ա Ռ Ք

### Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ե.

#### Սերմնային հեղուկին կարեւորութիւնը

Ի՞նչպէս կ'ըլլայ՝ որ սերմի չափազանց պարպումը կ'արտադրէ այն աղէտները զորս նկարագրեցի՝ այս է զոր պիտի քննեմ յառաջիկայս։ Այս պատճառները կրնան վերածուիլ երկու կարգի․ նախ՝ հեղուկէն զրկումն․ երկրորդ՝ անոր արտաքսման յարակից պարագայները։ Այս գրքիս մէջ անպատեհ է քննել սերմը բաժնող գործարանաց անդամադննական մանրամասնութիւնը, այս բաժանման կերպին վրայ եղած այլ և այլ հաւանական կարծիքները, քիչ շատ անոր զգայական յատկութեանց վրայ եղած դիտողութիւնները՝ և այլն և այլն։ Մեր նպատակն է միայն ցուցնել անոր օգտակարութիւնը ամենէն հաշակաւոր բժշկաց վրկայութիւններովը, որոց մի քանին արդէն յիշատակած եմ՝ և նշանակել՝ մարմնոյ վրայ անոր ունեցած ազդեցութիւնը։ Հետեւեալ հատուածին մէջ պիտի քննեմք այն արդիւնքը որ յառաջ կ'ու-

գայ սերմնային արտաքսումին յարակից պարագայներէն։

Հիպոկրատ այնպէս կը կարծէ թէ՛ սերմը կը բաժնուի բոլոր մարմինէն՝ բայց մանաւանդ գլուխէն։ «Մարդկային սերմը կուգայ, կ'ըսէ, անոր մարմնոյն բոլոր աւիշներէն. անոր ամենէն պատուական մասն է սա։ Ասոր այսպէս ըլլալուն ապացոյցն է այն տկարութիւնը՝ որ կ'զգան մերձաւորութիւն ընողները՝ որչափ ալ սակաւ բան կորսնցընեն այդ մասէն։ Երակներ, ջիղեր կան՝ որ մարմնոյն բոլոր մասերէն կ'ուգան կը միանան ծննդական անդամներուն։ Երբ այս վերջիները լեցուին և տաքնան, մարմաջուով մը կիմանան՝ որ բոլոր մարմնոյն մէջ ծաւալելով՝ հոն կը տանի ջերմութեան և հեշտութեան տպաւորութիւն մը, աւիշներ տեսակ մը եւ և եփ կ'ստանան, որով ամենէն պատուական և պարամային նիւթը կը զատուի, և այս մասը անջատուելով մնացորդէն՝ ողնայարին ծուծովը կը քալէ ծննդական անդամներուն մէջ։»

Կալիէն կ'ընդունի այս գաղափարը։ «Այս աւիշը, կ'ըսէ, միւս բոլոր աւիշներուն ամենանուրբ մասն է, իր մասնաւոր երակներն և ջիղերն ունի «որ զայն կառայնորդեն բոլոր մարմնէն մինչեւ ամորձիքը։ «Սերմի կորուստով, կ'ըսէ ուրիշ տեղ մը, մարդ կը կորուսանէ կինսական ոգին, ուստի «գարմանալի չէ՛ որ յաճախ տեղի ունեցած մերձաւորութիւնը կը ջլատէ զմարդ, վասն զի կը «զրկէ զնա իւր ամենամաքուր նիւթէն։» Նոյն

հեղինակը մեզ աւանդեր է՝ իւր Պատմութիւն վիշտոփայտութեան գործին մէջ, հին զանազան փրկիստփայից կարծիքը՝ այս նիւթիս վրայ . թող ներուի ինձ յիշատակել զանոնք աստանօր :

Արիստոտէլ՝ որու բնագիտական աշխատասիրութիւններն իյարգի պիտի մնան՝ ցորչափ մարդիկ գնահատել զիտնան դիտողութեանց արժէքը՝ և առաջին անգամ անոնց ասպարէզ բանալու դժուարութիւնները՝ կը կոչէ զայն վերջին սննդեան առեղոյղը (որ կը նշանակէ՝ աւելի յստակ բացատրութեամբ՝ մեր սննդեան ամենէն աւելի կատարելագործեալ մասը), որ կարող է զինք արտադրողին նման մարմիններ արտադրելու : Պիւթագորաս կ'ըսէ թէ, սա առեղոյղն արեւն ստիպել է : Ալկմէօն, անոր աշակերտը, հռչակաւոր բնագէտ և բժիշկը, մին անոնցմէ՝ որք առաջին անգամ հասկըցան կենդանիներ անդամայօշիւր կարեւորութիւնը, և կըռապաշտ փրկիստփայներէն այն՝ որ ամենէն աւելի ստոյգ գաղափարներ ունեցած է հոգւոյ բնութեանը վրայ, Ալկմէօն, կըսեմ՝ կը համարէր զայն իբրեւ ռոյնէի մասն . և դեռ երկու երեք տարի առաջ մեծանուն բժիշկ մ'ընդունեց և ընդարձակեց այս դրութիւնը : Կ'որոչէ այն ճամբայները որոնցմէ ուղեղը քալելով կ'երթայ մինչեւ ամորձիքը, զորս կը համարի ջղային կ'ծիկներ և ոչ գեղձեր, և հեշտային սպառումներուն երեւոյթները ուղեղի վատնումին կ'ընծայէ :

Պլատոն կը համարէր այս հեղուկը՝ Հոստոնն ողնայարի ծածկն . Դիմոկրիտոս՝ Հիպոկրատի և Կա-

լիէնի պէս կը խորհէր : Նպիկուրոս, այն մեծարոյ գիտնականը, որ ամեն մարդէ աւելի լաւ հասկցաւ թէ մարդիկ հեշտութեամբ միայն երջանիկ են, բայց որ՝ այնպիսի սահմաններու մէջ պարփակած է այս հեշտութիւններ՝ զորս Քրիստոնէական հաւատոյ դիւցազն անգամ չիրնար ուրանալ, Նպիկուրոս՝ որու վարդապետութիւնն այնչափ սոսկալի կերպով այլափոխեցաւ և աղարտեցաւ Ստոյիկեանց ձեռօք՝ որոց միջոցաւ միայն զայն վարդապետութիւն ճանչցողները խարուեր են՝ և զնա անառակ մը համարեր են, կ'ըսէ Պ. Տըթլէնէլօն, զգաստութեան տիպար մարդ մը՝ որու բարքը միշտ կանոնաւոր եղած է, կրնամ յաւելուլ նաեւ, որու սկզբունքները ամենէն աւելի անաչառ դատաւորն են իւր արդի սուտ հետեւողաց՝ որք անոր միայն անունը գիտնալով անարժանաբար կառնուն զայն իրենց բերանը, անոր անարգած դրութիւններն արդարացնելու համար՝ և որուն յիշատակը պարտաւոր են ճշմարտապէս գիտնականներ պահել անպատուութենէ, եթէ երբէք վատեր կարող են աղարտել զոք, Նպիկուր, կ'ըսեմ, կը նկատէր սերմն իբրեւ Մասն հոգոյ եւ մարմնոյ՝ և կը հիմնէր այս սկզբան վրայ այն վարդապետութիւնները զորս կ'աւանդէր անոր պահպանութեան համար :

Թէպէտ վերոյգրեալ կարծիքներուն շատերը ինչ ինչ կէտի վրայ կը տարբերին, սակայն ամենքն ալ կ'ապացուցանեն թէ ի՛նչ ատոիճան պատուական բան համարուած էր ամենէն այս բանը :

Խնդիր եղած է թէ՛ արդեօք սա ուրիշ աւել-

ներու կամ հիւթերու կը նմանի՞: Սա ճիշդ այն հեղուկն է որ, կենդանական ոգի անունով կը պաշտօն բոլոր ջիղերուն մէջ, կը գործակցի կենդանական մեքենային անկարեւոր ամեն պաշտօններուն և որու վատթարացումը յառաջ կը բերէ այնքան յաճախ և այնքան այլանդակ աղէտներ:

Այս հարցմանց դրասպէս պատասխանելու համար՝ հարկ է կատարելագոյն գիտնալ երկու հիւթերուն բնութիւնը: Մենք դեռ շատ հեռի ենք գիտութեան այս աստիճանէն և մեր բոլոր գիտցածը հանճարեղ և հաւանական ենթադրութիւններ են:

«Իւրերին է հասկնալ, կըսէ Հօֆման, թէ ինչ « պէս սերտիւ կապուած են ուղեղն և ամորձիք, « որովհետեւ այս երկու գործարաններ կը զատեն « արեան ամենանուրբ և ամենընտիր աւիշը, որու « պաշտօնն է զօրութիւն և շարժում տալ մարմնոյ « մասանց և մինչեւ իսկ հոգւոյ պիտոյից ծառա- « յել: Ահա ասոր համար անհնարին է՝ խիստ ա- « ռատօրէն վատնել այս հեղուկը՝ առանց ջնջե- « լու հոգւոյ և մարմնոյ զօրութիւնները: « Սերմնա- « յին հեղուկը », կըսէ նա ուրիշ տեղ մը, « կը բաշ- « խուի՝ ուղեղի միջոցաւ զատուած կենդանական « ոգիներուն պէս, մարմնոյ բոլոր ջիղերուն մէջ. « կերեւի թէ անոնց հետ համարնեայ է, ահա ասոր « համար է որ քանի շատ վատնուի՝ այնքան քիչ ոգի « կը զատուի »: Մէկ խօսքով, այս վկայութիւններէն և ուրիշ շատերէն զորս անօգուտ է յիշատակել, կերեւի որ սա վերջին աստիճան կարեւոր

հեղուկ մ'է՝ զոր կրնամք անուանել կենդանական հեղուկներուն քակաւ Խողը, կամ դուցէ աւելի ճշգրութեամբ հասկնալով մասն՝ որու վատնումը կը թողու միւս հիւթերը տկարութեան և վատթարութեան մէջ:

Պիտի ըսուի մեզ թէ՝ ինչ աստիճան եւս կարեւոր ըլլայ այս հիւթը՝ քանի որ անգամ մը իւր ամբարներուն մէջ իջած է՝ ալ ի՞նչ օգուտ կունենայ մարմնոյ համար: Մարդ դիւրաւ կը հաւանի որ չափազանց արտաքսում երակաց մէջ չըջան ընող հիւթերու՝ որոնք այս գործողութեամբ (այսինքն չըջան ընելով) աննդեան կընպաստեն, օրինակի համար արիւնը, շիճը, մաղապը, և այլն՝ կրնայ տկարացնել՝ բայց դժուար կը հասկնայ՝ թէ ի՞նչ պէս հիւթ մը որ այլեւս չըջան չընեն, որ մեկուսացած է՝ կրնայ այս ազդեցութիւնն ունենալ: Նախ կը պատասխանեմ՝ թէ ակներեւ և բազմանանօթ օրինակներէ համոզուելով՝ այսպիսի առարկութիւն պէտք չէր ընել մեզ: Սահմանափակելով օրինակս կ'ըսեմ՝ մարդ չ'կայ որ չգիտնայ՝ թէ կաթնտուութիւն մը՝ որչափ կարճատեւ և աննշան ըլլայ՝ այն աստիճան տկարութիւն կը պատճառէ՝ որու ազդեցութիւնը կը տեւէ տկար ստնտուի մը բոլոր կենաց մէջ՝ և ամենէն կորովի ստնտուներն իսկ պայմանեալ ժամանակէ մը վերջ այլ եւս չեն դիմանար: Ասոր պատճառը զգալի է. երբ ոք յաճախ պարպէ որ եւ իցէ հեղուկի մը շտեմարանը, կ'ատիպէ հիւթերը՝ կազմուկան օրինաց անհրաժեշտ հետեւութեամբ՝ դէպի հոն վազելու աւելի առա-

տօրէն , որով այս պարպումը՝ կը չափազանցի , միւս պարպումներն անկէ կը մնասին , մանաւանդ սընընդագործութիւնը՝ որ տեսակ մը անջատում է՝ և կենդանին կը նուազի ու կը տկարանայ :

Բաց աստի սերմի համար ուրիշ պատասխան մը կայ , որ կաթի համար տեղի չունենար : Կաթը պարզապէս սնուցիչ հեղուկ մ'է՝ որու չափազանց անջատումը կը մնասէ՝ չափազանց նուազեցնելով հիւթերու քանակութիւնը . սերմը գործող հեղուկ մ'է՝ որու ներկայութիւնը կարեւոր ներգործութիւն կարտադրէ գգայարանաց դիւրաշարժութեան վըրայ՝ որ կը դադրի եթէ պարպուի այն . հեղուկ մը՝ որ վերոյիշեալ տեսակէտով կը մնասէ կրկնակի , երբ շատ արտաքսուի : Բացատրեմ միտքս : Կան աւիշներ՝ ինչպէս են քրտինք և մարմնոյ արտաշնչութիւն՝ որք կը հեռանան մարմինէն այն միջոցին՝ երբ կը գատուին միւս աւիշներէն՝ և կ'արտաքսուին շրջանի նրբերակներէն : Ուրիշներ կան՝ ինչպէս է մէզը որ , այս բաժանումէն և արտաքսումէն յետոյ վար կը դրուին ժամանակ մը այս բանին յատկացած շտեմարաններու մէջ՝ և որոնցմէ այն ատեն միայն դուրս կելնեն՝ երբ բաւական շտոցած են՝ ներգործելու համար այս շտեմարաններուն վրայ գրգռութիւն մը որ զանոնք մեքենաբար կ'ստիպէ պարպուելու : Երրորդ տեսակի հիւթեր կան՝ որք երկրորդներուն նման կը գատուին և վար կը դրուին շտեմարաններու մէջ , ոչ թէ գէթ բոլորովին պարպուելու նպատակով , այլ այս շտեմարաններուն մէջ ստանալու համար կատարե-

լագործութիւն մը՝ որ կարող կ'ընէ զանոնք նոր պաշտօններ կատարելու՝ երբ վերստին դառնան հիւթերու շեղջակուտին մէջ . այս կարգէն է՝ ուրիշ շատերէ գտո՝ նաեւ ծննդական հեղուկը : Զատուելով՝ ամորձիքներու մէջ գալով , կանցնի անտի , բաւական երկար անցքով մը , սերմնային փամփըշտիկներուն մէջ և շարունակ վերստին կը ծծուի և հետզհետէ կը հաղորդուի հիւթերու շեղջակուտին :

Սա այնպիսի ճշմարտութիւն մ'է՝ ում չեն պակսիր ապացոյցներ . մէկ հատ մը միայն կը բաւէ : Աւող մարդու մը վրայ՝ այս հեղուկը շարունակ կը բաժնուի կերթայ ամորձիքներուն մէջ , կը մտնէ այս շտեմարաններուն մէջ՝ որոց տարածութիւնը հազիւ թէ մէկ օրուան զատուածը կրնայ պարունակել . սակայն գլխատ մարդիկ կան՝ որ տարիներով զայն չեն պարպեր : Ուրեմն ի՞նչ կ'ըլլայ այն՝ եթէ շարունակ չվերագառնար արեան շրջանի երակներուն մէջ՝ վերագարձ մը որ չափազանց կը դիւրանայ ձեւով և շինքով այն բոլոր գործարաններուն՝ որք կը ծառայեն այս հիւթին գատուցման , առաջնորդութեան , պահպանութեան համար : Ասոր վրայ սեւերակներն աւելի բազմութիւ են քան թէ կարմրերակներ՝ այնչափ շատ՝ որ ուրիշ տեղ չեն գտնուիր այս համեմատութեամբ : Ասոր համար հաւանական է՝ որ այս վերստին ծծումը շատ զանազան ձեւով կ'ըլլայ , այսինքն սերմնային փամփըշտիկներուն , ամորձիքներուն , վերնամորձիքներուն մէջ , որք ամորձիքներուն կալոյդ տեսակ մը նախնական շտեմարան են , և այն խողովակին

մէջ՝ որ սերմը կը տանի ամորձիքի ճամբով սերմնային փամփշտիկին մէջ :

Կայիէն հասկըցած էր որ հիւթերը կը հարըտանան արգիլուած սերմով, թէպէտեւ չէր գիտեր անոր մեքենական գործողութիւնը : Առնէ ինչի է անով, կ'ըսէ այն մարդոց անքաշ՝ որք չեն հարդրակցիր կանանց հետ . իսկ չզանոսիր անոնց անքաշ՝ որք շարունակ կը խտնակին կանանց հետ : Յետոյ մեծ ճիգ կը թափէ գտնելու համար՝ թէ ի՞նչպէս այս հիւթին մէկ պզտի քանակութիւնը այնչափ զօրութիւն կրնայ տալ մարմնոյն . վերջապէս կը վճռէ թէ յիստ ընտիր գորութիւն մ'ունի, եւ այսպիս կրնայ մեծ արագութեամբ ոյժ հարդրող մարմնոյն ամեն մասանց : Ապա կ'ապացուցանէ շատ օրինակներով թէ՛ պզտիկ պատճառ մը յաճախ կ'արտադրէ մեծ արդիւնք՝ և կ'եզրակացնէ . զարմանայի՞ք ե ոտքնն որ ամորձիք կը մատակարարեն հեղուկ մը որ կարող է նոր աշխոյժ ափոնէր բոլոր մարմնոյն վրայ . ասով ուղեղն անէր շատ կ'արտադրէ զգացողութիւններ եւ շարժումներ, եւ սիրտը կրնայ կարմիրակներուն շարժանքն իրոյն : Պիտի աւարտեմ այս հատուածը յառաջ բերելով դարուս ամենէն հոջակաւոր մէկ մարդուն կարծիքը սերման վրայ : «Սերմը կը պահուի սերմնային փամփշտիկներուն մէջ՝ մինչեւ որ մարդը « զայն գործածէ, կամ մինչեւ որ երազափորձեր « զայն դուրս տան : Այս բոլոր միջոցին, հոն՝ ներսը « գտնուած քանակութիւնը կը գրգռէ վկենդանին տափական գործողութիւն ընելու, բայց « այս սերմի ամենէն մեծ քանակութիւնը, թըու-

« չունը, հոտաւէտը՝ այն՝ որ ամենէն աւելի զօրաւոր է՝ վերստին կը ծծուի արեան մէջ, և « կ'արտադրէ հոն՝ ներս մտնելով, ամենազարմանալի փոփոխութիւններ՝ այսինքն՝ մորուք, մազ, « եղջիւր . կը փոխէ ձայնը և բարքը, վասն զի « հասակը չ'արտադրեր կենդանեաց մէջ այս փոփոխութիւնները, այլ սերմն է՝ որ յառաջ կը « բերէ այս բաները՝ որք չեն տեսնուիր ներքին- « եաց վրայ : »

Թէ ի՞նչ կերպով սերմն յառաջ կը բերէ այս արդիւնքները, այս այն տեսակ խնդիրներէն է՝ որոց լուծումը տակաւին հասունցած չէ : Ինչ որ կըրնանք ըսել շատ հաւանականութեամբ, այս է՝ որ այս հեղուկը գրգռի՞ք է, որ կը խողտեցնէ իւր դըպած մասերը . իւր բարկ հոտը և յայտնի գըրգռութիւնը զոր կը ներգործէ ճննդական գործարանաց վրայ, տարակոյս չեն թողուր այս մասին՝ և դիւրին է հասկնալ թէ այս կծու մասնիկներն շարունակ ծծուելով և վերստին խտնուելով հիւթերուն հետ՝ կը խթեն թեթեւ կերպով՝ բայց անընդմիջաբար՝ նրբանցքները՝ որք այս միջոցով աւելի ուժգին կը բացուին կը դոցուին : Անոնց ներգործութիւնն աւելի ազդու կ'ըլլայ հեղուկներու վրայ, արեան շրջանը աւելի արագ կ'ըլլայ անով, սննդառութիւնը աւելի ճշգրիտ, ուրիշ բոլոր պաշտօններն աւելի կատարեալ կերպով կը կատարուին : Երբ այս միջոցները կը պակսին՝ շատ պաշտօններ չեն կատարուիր . այսպէս՝ ներքինեաց վրայ մարմնական ամեն պաշտօն կ'իսկատար է : Աստ

բաւական ընական հարց մը կը ներկայանայ . այն է թէ , ինչո՞ւ համար ներքինիներ նոյն աղէտներ չեն զգար՝ որոց ենթակայ կ'ըլլան տուրական ծայրայեղութեան չարագանցութիւններով սպառած մարդիկ : Այս հարցման հետեւեալ հատուածէն վերջ կրնամք պատասխանել տեղն ի տեղ :

—

Սերմին արտաբուսմին յարակից պարագայներու քննութիւն

Շատ արտահանութիւններ կան՝ որք տեղի կունենան մարմնէն՝ առանց գրեթէ զգացուելու . սերմէն զատ ուրիշ բոլորն ալ կատարեալ առողջ վիճակով կը կատարուին այն անտիճան դիւրութեամբ՝ որ ընաւ ազդեցութիւն չեն ունենար մարմնական մեքենային մնացած մասին վրայ : Միայն սերմին արտահանութիւնն այսպէս չըլլար : Հարկ է որ բոլոր մարմնական մասերը ոտք ելնեն , ցնցուին , բոլոր հիւթերուն արագութիւնն սաստկանայ՝ զայն տեղէն խախտելու և դուրս տալու համար : Միթէ յանդգնութիւն կ'ըլլայ ըսել՝ թէ սերմին արտահանութեանն ատեն բոլոր մարմնական մեքենային այս օժանդակութիւնն զգալի ապացոյց մ' է այն ազդեցութեան՝ զոր նա ունի ամբողջ մարմնոյն վրայ :

Նախընթաց մասին մէջ յիշատակած դիտողութիւններէս և իմ իսկ անձնապէս յայտնածներէս տեսնուեցաւ՝ որ սերմին արտահանութիւնը յարակից է յայտնի ջղաձգութիւններու , տեսակ մը լուսնոտութեան . և նոյն դիտողութիւններէն ակներեւ տեսնուեցաւ թէ ի՞նչ աստիճան ազդեցութիւն

ունին այս բուռն շարժումներ այն թշուառին վրայ որ անոնց ենթակայ է : Շատ բժիշկներ նշմարելով այն արագ տկարութիւնը , որ կը յաջորդէ գործողութեանն՝ իրաւամբ կարծեցին թէ՛ միայն սերման կորուստը չէ տկարացնողը , այլ անհերքելի կերպով ստոյգ է՝ որ անտի յառաջ եկած կարկամութիւնն ալ կը տկարացնէ . այս բանը յայտնի կ'երեւի Չղային ցնցման հետ խառն հիւանդութեամբ ախտացողներու վրայ . լուսնոտութեան ախտազարկին յաջորդող կարկամութիւնը երբեմն վերջին աստիճան կը հասնի :

Արտի սաստիկ բարախումները որ մերձաւորութեան ատեն տեղի կուենան , նոյնպէս Չղային ախտանիշեր են :

Այս նշանները գրաւած են սոյն նիւթին վրայ գրող բոլոր երեւելի հեղինակաց ուշադրութիւնը :

Երբ ջիզերու մէջ ցնցում տեղի ունենայ՝ բոլոր Չղային դրութիւնը կը պրկի՝ կամ աւելի ճիշդ բացատրութեամբ՝ արտաքոյ կարգի գործունէութեան մէջ կը մտնէ՝ որու բնական հետեւութիւնն է տարապայման թուլութիւն մը : Ար եւ իցէ գործարան որ չափէն աւելի կը լարուի՝ չափէն աւելի ալ կ'լինայ՝ որով անոր հետ վերաբերութիւն ունեցող պաշտօնները պակաս կը կատարուին . և որովհետեւ ջիզերը ամեն մարմնական պաշտօններու վրայ կ'ազդեն՝ այս վերջիններէն և ոչ մին կրնայ խանգարումէ ազատ մնալ՝ երբ առջինները տկարանան : Զղային դրութեան տկարանալուն մէկ գլխաւոր պատճառն ալ տոփական գործողութեան

ժամանակ արեան՝ ուղեղի մէջ յորդիլն է՝ յորդում մը որ լաւ ապացուցուած է , և որ շատ անգամ կաթուած բերած է : Նիտոդներու դրուածոց մէջ ասոր շատ օրինակներ կան : Հօֆման կը պատմէ թէ զինուոր մը կատաղաբար անձնատուր ըլլալով այս գործողութեան՝ նոյն իսկ մերձաւորութեան պահուն կաթուածահար ինկաւ . ուղեղը բացին և տեսան որ արեամբ լի էր : Արեան այս յորդութեան պատճառաւ է որ այս հաճոյից ծայրայեղութիւնը խեւութիւն կը բերէ : Արեան այս առատութիւնը կը պրկէ ջիզերը որք նուազ կը տուկան տպաւորութեանց՝ և այս պատճառաւ իսկ կը տկարանան :

Երբ ոք խորհի այս կրկին պատճառաց արդիւնքին վրայ՝ այսինքն սերմի արտահանութեան և Չղային ցնցմանց՝ դիւրաւ կը հասկընայ այն խանգարմունք որք անտի յառաջ կուգան կազմական ներդաշնակութեան վրայ : Ասոնք երեք կարգի կրնան վերածիլ — մարսողութեան տկարութիւն , ուղեղի և Չղային մասանց տկարութիւն , մորթի արտաշնչութեան խանգարում : Պիտի բացատրում խտորեւ թէ չկայ պարբերական հիւանդութիւն մը՝ որ այս երբակի պատճառաց չ'ընծայուի :

«Չէշտական տարապայման հաճոյից արտադրած թուլութիւնը կը խանգարէ բոլոր գործարանաց պաշտօնները»՝ կըսէ մին ի հեղինակաց՝ որք ամենէն աւելի հմուտութեամբ գրած են ժուժկալութեան վրայ . մարսողութիւնը , հալումը , արտաշնչութիւնը , միւս արտահանումները այլ եւս չեն կա-

տարուիր պէտք եղածին պէս • աստի կը հետեւի զգալի նուազում ուժոյ, յիշողութեան և մինչև իսկ իմացողութեան • աչաց մթազնում, ջղային ամեն տեսակ ախտեր, ամեն կերպ յօղացաւութիւններ, կռնակի ոսկրին չափազանց տկարութիւն, հալ ու մաշ, ծննդական անդամոց տկարութիւն, արիւնախառն մէզ, ախորժակի կորուստ, գլխացաւ, և ուրիշ բազմաթիւ հիւանդութիւնք զորս անօգուտ է մանրամասնաբար աստ թուել • միով բանիւ՝ չկայ բան մը որ այնչափ կարճէ կեանքը որպէս ցոփակեցութիւն :

1. Ստամոքսը ամեն մասէն առաջ կը վտանգի տկարացուցիչ արտաճաններով, վասնզի ամենէն աւելի ասոր պաշտօնները կարօտութիւն ունին գործարանական կատարելութեան : Մարմնոց մնացեալ գործարաններուն մեծ մասը աւելի կրաւորական են քան ներգործական : Իսկ ստամոքսը գրեթէ բոլորովին գործօն է • ասոր համար իւր ուժը պակասելուն պէս՝ իր պաշտօններն ալ կը խանգարին : Ամեն ինչ որ բերնէն ներս կը մտնէ՝ այս ընդերաց վրայ կը ներգործէ՝ և պատճառ կ'ըլլայ անոր (ստամոքսի) հիւանդութեանց յաճախութեան, տարօրինակութեան և յաճառութեան :

Սա մարմնոց այն մասերէն մին է՝ որք բազմաթիւ ջիղերու կապուած են՝ և որուն մէջ՝ այս պատճառաւ աւելի շատ կենդանական ոգի կը մտնէ : Ուստի այն պատճառը՝ որ միոյն գործողութիւնը կը տկարացնէ և կը նուազեցնէ՝ կամ կ'եղծէ միւսին յատկութիւնը՝ բնականաբար ամենէն աւելի

այս ընդերաց (ստամոքսին) ուժը կը տկարացնէ • և այս իսկ տեղի կ'ունենայ տափական ծայրայեղութեանց մէջ : Ասոր պաշտօնին կարեւորութիւնը այնպէս կը պահանջէ՝ որ երբ ինքն անկատար կը մնայ՝ միւս ամենքն ալ ասով կը վնասին :

Երբ մարսողութիւնը անկատար ըլլայ՝ հիւթերը հում կը մնան՝ որով իրենց սահմանեալ պաշտօնին անցարմար կ'ըլլան : Բայց ամենէն աւելի արգելք կ'ըլլան տածման՝ որմէ կախում ունի մարմնոց գործեան կազդուրումը : Ստամոքսի ընդհանրական ազդեցութեանը համոզուելու համար՝ բաւական է դիտել դժուարամարտութիւն ունեցող մէկուն վիճակը • քանի մը վայրկեանէն ուժաթափ կ'ըլլայ, ընդհանուր անձրիւում մը տկարութիւնն աւելի անտանելի կ'ընէ • զգայարանաց գործարանները կը ըթանան, հոգին իսկ անկատար կերպով ի գործ կը դնէ իւր կարօղութիւնը, յիշողութիւնը, մանաւանդ երեւակացութիւնը՝ կարծես մեռած են • չկայ բան մը, մէկ խօսքով, որ աւելի նմանեցնէ խելացի մը՝ տխմարին՝ որպէս տաժանելի մարսողութիւնը :

2. Ջղային մասանց տկարութիւնը՝ որ տրամադիր կ'ընէ ամեն տեսակ ընդարմացման և ջղածական վտանգներու՝ յառաջ կուգայ՝ ինչպէս ըսած եմ արդէն, նախ սերմի արտաքսման ընկերացող ցնցումներէն, երկրորդ՝ դժուարամարտութենէ : Երբ մարսողութիւնը իւր պաշտօնը չկատարէ՝ ջիղերը կը վտանգին՝ այնչափ աւելի՝ որչափ այն հեղուկը՝ որ անոնց մէջ կը թափանցէ՝ հալման արտադրած

ամենէն վերջին գործն ըլլալով՝ նաեւ անոր ամենահատարեալ ենթադրուածն է : Արդ՝ երբ սա ապականի՝ այս հեղուկը ամեն կենդանական հեղուկէն աւելի անոր ազդեցութիւնը կը կրէ՝ և ասոր վրայ ամենէն աւելի կը ներգործեն հում հիւթերու մնասները : Վերջապէս, այս տկարութեան մէկ գըլխաւոր պատճառն ալ այն է որ այս սրարպուածը (սերմը) կենդանական ոգիներուն հետ նըմանութիւն ունի՝ և բուն ասոր համար ոչ ոք կրնայ զայն պարպել առանց ջղային մասերուն զօրութիւնը նուազեցնելու : որոց բոլոր ուժը այս կենդանական ոգիներուն կը վերադրեմ ես՝ հակառակ քանի մը մեծ մարդոց համեատ կասկածներուն՝ որք բնական գիտութեան մէջ այն բանին կը հաւատան՝ որու ճշմարտութիւնը իրենց զգայարանաց տակ կիյնայ, և հակառակ քանի մը երկրորդական կամ յամառ բնախօսներու առարկութեանց : Դարձեալ բացի այն մնասէն՝ որ այս արտահանութենէն կը հետեւի՝ կենդանական ոգիներու պակասութեան պատճառաւ, սա կը մնասէ անոր համար իսկ՝ որ կը զրկէ նուրբ անցքերն այն թեթեւ խտրաւորութեն զոր յառաջ կը բերէ ծծուած սերմը, և որ այնչափ կարեւոր է սնունդին հարման : Հետեւաբար կը մնասէ երկու տեսակէտով . նախ՝ զուրս հանելով կենդանական ոգիներէն մաս մը՝ կամ առ նուազն պատուական հիւթ մը, և երկրորդ՝ արդիւնելով հպումը՝ առանց որոյ այս ոգիները անկատար կերպով կեփին կը պատրաստուին : Ստամոքսի և ջրղային հիւանդութեանց մէջ յոռի շրջան մը կայ,

այնպէս որ մէկը միւսին պատճառ՝ կամ սաստկացուցիչ է : Երբ ամենօրեայ դիտողութիւններ չսպացուցանէին զայս՝ ստամոքսի անդամազննական դիտողութիւնը բաւական էր համոզելու զմեզ յայն : Ստամոքսին յանդող ջիղերուն բազմութիւնը անոր պաշտօնին կարեւորութիւնը կը յայտնէ բացորոշ :

3. Վերջապէս արտաշնչութիւնը պէտք եղածին պէս չըլլար՝ որով բազում ախտեր կը ծնին, զի այս սրարպուածն ամենէն առատն է :

Ընթերցողք դիւրաւ կը հասկընան որ ամեն տեսակ հիւանդութիւնք կրնան ծնիլ այս երրակի պատճառներէն : Սակայն մարդ գուցէ դժուար կը հասկընայ՝ կամ բնաւ չհասկընար թէ հոգեկան կարօղութիւնք ինչո՞ւ այն աստիճան սաստիկ կը տկարանան :

Այս խնդրոյս լուծումը կախում ունի միւս խնդրոյն լուծումէն՝ որ անլուծելի է ինձ համար, այն է գիտել թէ՛ ինչ ազդեցութիւն ունին իրարու վրայ երկու էութիւնները . այժմ մենք երեւոյթները միայն կրնամք դիտել : Մենք չենք գիտեր՝ ոչ մտաց՝ ոչ մարմնոյ բնութիւնը . սակայն գիտեմք որ մարդուն այս երկու մասերը սերտիւ կապուած են իրարու հետ, թէ՛ միոյն զգացած յեղաշրջումները միւսին վրայ ալ կազդեն . արեան առաւել կամ նուազ արագ շրջանը, անոր առաւել կամ նրուազ թանձրութիւնը, քանի մը տրամ աւելի կամ նուազ կերակուր, այս ինչ կերակուրէն՝ քան թէ միւսէն կերուած նոյն քանակութիւնը, գաւաթ մը

խահուէն՝ փոխանակ քիչ մը գինիի , քիչ շատ երկար կամ խաղաղ քուն , առաւել կամ նուազ առատ կը կղանք , խիստ շատ կամ խիստ քիչ արտաշնչութիւն՝ բոլորովին վեր ի վայր կ'ընեն մեր դիտողութիւնը և դատողութիւնը առարկայից վրայ . մէկ ժամէն ի միւս՝ կենդանական մեքենային յեղաշրջումները մեզ տարբեր մտածում կը ներշնչեն , և ուզածնուն պէս մեզ նոր սկզբունքներ կը սահմանեն՝ մոլութեան և առաքինութեան մասին (1) :

Գիտողութիւնը նոյնպէս կուտուցանէ մեզ թէ հիւանդութիւններուն մէջ՝ ամենէն աւելի ջրայինները կ'ազդեն հոգւոյ վրայ . լուսնոտները՝ որք քանի մը տարիէն ապուշ կը դառնան՝ ընդհանրապէս ասոր մէկ տխուր փորձը կ'ընծայեն մեզ՝ որով կուսանինք միանգամայն թէ՛ հեշտական գործողութիւնը՝ որ ինչպէս վերն ըսինք , շարունակ լուսնոտական ցնցում կարտադրէ՝ զարմանալի չէ՝ որ պայմանեալ ժամանակէ մը յետոյ ուղեղի , հետեւաբար մտաւոր կարողութեանց տկարութիւն

(1) Ամենախորին գիտութեան եւ հանձարոյ խորնրգածութիւն՝ այնչափ խորին՝ որ Թիւսո գաւնոնք արտայայտած ժամանակ հանդիսատես ջեր այն մեծ սկզբանց որ իրական փիլիսոփայութիւնն , Գիւլիլիլի , մեծն Տարվինի գիտերով ձոխացեալ՝ եւ Պիւլաների անեղ հանձարայն կնիքն ընդունած՝ ի նրապարակ ջեր հանած տակաւին այն ճշմարտութիւնք՝ զորս տեսներու եւ զգայու համար միայն յամառ տգետներ կոյր եւ անզգայ մնացած են : Ծ . Թ :

բերէ : Ուղեղի և ջրային մասանց տկարութեան ետեւէն կուզայ զգայարանաց տկարութիւնը , և սոյս բնական է : Սանկտորիոս , Հօֆման և ուրիշներ ջանացեր են բացատրել թէ ինչո՞ւ համար տեսողութիւնն աւելի կը մնասի . սակայն իրենց պատճառները որք ճշմարիտ են , բաւական համոզիչ չեն թուիր ինձ համար : Կրսեն թէ տեսողութեան գործարանը՝ բազմաթիւ գլխաւոր մասերէ բաղկացած ըլլալով՝ որոց բոլորն ալ այլ և այլ թերութեանց ենթակայ են՝ միւսներէն աւելի ընդունակ է խանգարման : Երկրորդ՝ ջրերը հոս շատ պաշտօններ ունին՝ և խիստ բազմաթիւ են . վերջապէս , կը յարեն , հեշտական գործողութեան ատեն՝ հիւթերու յորդումն սոյս մասին վրայ՝ յորդում՝ որ կ'ապացուցուի սոյս գործողութիւնն ընող կենդանեաց աչքերուն փայլէն՝ կ'արտադրէ նուրբ երակաց վրայ նախ տկարութիւն մը՝ ապա խցումն՝ որուն անխուսելի հետեւանքն է տեսողութեան կորուստը :

Նախընթաց հարցին պատասխանել դիւրին է այժմ՝ սոյնինքն , ի՞նչո՞ւ համար ներքինիները՝ որ սերմէ զուրկ են՝ ազատ են նաեւ մեր նկարագրած հիւանդութիւններէն :

Ասոր երկու հաւանեցուցիչ պատճառներ կան : Առաջին այն է որ՝ թէպէտ ներքինիներ զուրկ են սերման նորէն ծծուելէն յառաջ եկած բարերար ազդեցութենէն՝ անոնք ազատ են նաեւ անոր կորստեամբ յառաջ եկած վտանդներէն : Սերմը երկու կարգի կրնամք բաժնել . Պատրաստուելիք սերմ ,

այն պատուական մասն՝ զոր կը զատեն ամորձիք ,  
 և Պատրաստուած սերմ : Եթէ սերմը չգտնուի՝ մե-  
 քենան՝ պատրաստուած սերմին բարիքէն կը զըր-  
 կուի և չկրեր աստի կախում ունեցող փոփոխու-  
 թիւններ՝ բայց և չ'աղքատանար . ոչ կ'ընդունի ,  
 ոչ կը կորուսանէ . այլ կը մնայ մանկութեան վի-  
 ճակին մէջ : Երբ սերմը զատուի և սլաքուի՝  
 զրկում , իրական աղքատութիւն յառաջ կը բերէ :  
 Երկրորդ պատճառն այն է՝ որ ներքինիներ չեն  
 զգար այն ջղային կարկանդակներ , որո՞ւ ծայրա-  
 յեղութիւնն այնչափ ախտերու սկզբնապատճառ  
 դրի : Կիներն ալ արանց նման կը վտանգին . սա  
 կայ որ՝ կանանց դուրս տուած հիւթը նուազ աղ-  
 նիւ , նուազ պատրաստուած ըլլալով՝ կիներն այն-  
 քան արագ չեն լյնար . բայց երբ չափն անցնեն՝  
 իրենց ջղային դրութիւնն աւելի փափուկ ըլլալով  
 և հետեւաբար ջղաձգութեան աւելի ենթակայ՝  
 անոնց վտանգները սոսկալի կըլլան :

## Հ Ա Տ Ո Ւ Ա Յ Է .

### Սերմնաբափուրեան յատուկ վտանգներուն պատճառները

Վերը տեսնուեցաւ՝ որ սերմնաթափութիւնն  
 աւելի ֆնասակար էր՝ քան կանանց հետ տա-  
 րապայման խառնակութիւնը : Անոնք՝ որ սովոր  
 են ամեն բանի մէջ մասնաւոր նախախնամութեան  
 մը մասն խօթել՝ պիտի ըսեն թէ՝ ասոր պատճառը  
 աստուծոյ մասնաւոր մէկ կամքն է՝ որ կուգէ այս  
 ոճիրը պատուհասել : Համոզուած ըլլալով թէ մար-  
 միններն իրենց ստեղծման վայրկեանէն ինչ ինչ օրի-  
 նաց ենթարկուած են՝ որ կը վարեն առհարկի  
 անոնց շարժումները , և որոց ներդաշնակութիւնը  
 խիստ քիչ մասնաւոր պարագայներու մէջ միայն  
 կը փոխուի աստուծոյ՝ չեմ ուզեր հրաշից դիմել՝  
 մինչեւ որ յայտնի ըմբոստութիւն չգտնեմ բնական  
 պատճառաց դէմ : Աստ այնպէս չէ . ամեն ինչ  
 կրնայ բացատրուիլ մարմնական մեքենային կամ  
 հոգւոյ և մարմնոյ միութեան օրինօք :

Սանկտորիոս՝ իւր դիտողութեանց մէջ՝ կ'ըն-  
 ձեռէ մեղ առաջին պատճառ մ'այս մասնաւոր վը-  
 տանգին : Չափաւոր մերմատրոթիւնը , կրտէ , օգ-  
 տակար է , երբ սա կը պահանջուի ի բնութեան . իսկ  
 երբ երեսակայութեան պահանջուի , կը սկստայնէ հոգ-  
 ալ ըրողը կարողութիւնները՝ մասնաւոր յիշողութիւնը :

Պիւրիւն է ասոր պատճառը հասկընալ: Բնութիւնը՝ մարմնոյ առողջ վիճակին մէջ, այն ատեն տարփական փափաք կ'ազդէ, երբ սերմնային փամփշտիկներն լի են այս ինչ չափ հեղուկով՝ որ այն աստիճան թանձրացած է՝ մինչ այլ եւս չկրնար դիւրաւ ծծուիլ. ասկէ կ'իմացուի՝ որ անոր պարպը ուիլը չտկարացներ մարմինն զգալի կերպով: Բայց ծննդական գործարաններն այնպիսի կազմութիւն ունին՝ որ անոնց գործողութիւնը և անտի յառաջ եկած տենչն կը գրգռին ոչ միայն սերմնային հիւթին ըստ բաւականի առատութենէն՝ այլ երեւակայութիւնն ալ մեծ դեր կը խաղայ անոնց վրայ. երեւակայութիւնը կրնայ տենչանաց վրայ զբաղելով՝ այս գործարանները տենչ արտադրելու վիճակի մէջ դնել. և տենչը կ'առաջնորդէ գործողութեան՝ որ՝ այնչափ առաւել աղետաբեր կ'ըլլայ՝ որչափ նուազ կարեւոր ըլլայ:

Այսպէս խնայել բոլոր գործարանաց վրայ՝ Բայց և ծարաւ՝ կ'իմացնեն մեզ ուտելու և խմելու հարկը. եթէ ոք այս զգացողութեանց պահանջածէն աւելի ուտէ և խմէ՝ աւելորդ կը վնասէ մարմնոյն՝ և զայն կը տկարացնէ: Հարկաւոր երթալու և միղելու պէտքն ալ բնական զրգումներով կ'իմացուին. բայց վատթար սովորութիւնը կրնայ այն աստիճան խանգարել գործարանաց կազմութիւնը՝ որ այս արտահանութեանց հարկը այլ եւս կարեւոր գրգռմամբ ըլլալէ կը գաղբի: Մարդ առանց հարկի իրեն վրայ հարկ կը դնէ. այսպէս կընեն ահա և սերմնաթափներ: Երեւակայութիւնն, ու-

նակութիւնն է զանոնք դրդողը և ոչ բնութիւնը: Կը բառնան բնութենէն՝ ինչ որ նմա կարեւոր է, և զայն՝ որ իր պիտանութեան պատճառաւ չուզեր ձեռքէ հանել: Վերջապէս կազմական ներդաշնակութեան այն օրինօք թէ՛ հիւթերը կը յորդին հոն՝ ուր գրգռում կայ՝ ժամանակէ մը վերջ կը տեսնուի որ հիւթեր շարունակ այս կողմը կը վազեն. և Հիպոկրատին դիտողութիւնը կը ճշմարտի՝ թէ Երբ միայն յատուակութիւն կը գործէ՝ սերմնային երակները կ'ընդարձակուին եւ սերմն յիւրեանս կը հրատարակէ: Աստ դիտուել արժան է՝ որ այս մտրութիւնն արբունքի չհասած մանկանց վրայ մասնաւոր վտանգ կ'արտադրէ. բարեբաղդաբար քիչ կը գտնուին երկու սեռէն ալ հրէշներ՝ որ արբունքէ յառաջ այս պղծութիւնը գործեն. սակայն շատեր կան՝ որ իրենք գիրենք կը պղծեն: Բազմաթիւ պարագայներ զանոնք կը հեռացնեն մերձաւորութեան շուայտութենէ, կամ գոնէ զայն կը չափաւորեն, սակայն անձնական շուայտութիւնը արգել չգտնելով՝ ամեն չափէ դուրս կելնէ:

Երկրորդ պատճառն այն բունակալութիւնն է որ այս զագրագործութիւնը կունենայ զգայարանաց վրայ. չկայ բան մը որ այնչափ տկարացնէ միտքը՝ որչափ անոր շարունակ ձկտումը՝ երբ նա միշտ մի և նոյն առարկային վրայ կը յառի: Սերմնաթափը մի միայն իւր ալտոտ մտածմունքներով պաշարուած՝ այս մասին կզգայ տաղնապն գրագէտին, որ իր խորհուրդները միակ խնդրոյ մը վրայ կը սեւեռէ, և քիչ կը պատահի որ այս ծայ-

րայեղութիւնը չվնասէ . ուղեղի այն մասը՝ որ յայն-  
 ժամ գործի վրայ կը գտնուի՝ կ'ընէ այն ճիգը՝ զոր  
 կրնամք բաղդատել երկար ատեն և սաստկապէս  
 լարուած մկունքին . ասկէ կը հետեւի թէ այս մասը  
 այն աստիճան կը գրգռի՝ որ այլ եւս հնար չ'ը-  
 լար արգելուլ անոր շարժումը , ոչ իսկ հոգին ի  
 բաց դարցնել այս գաղափարէն՝ ինչպէս է սերմ-  
 նաթափներուն , և կամ՝ բոլորովին անկարողութիւն  
 կուգայ : Սպառած՝ շարունակ հոգնութենէ մը՝ այս  
 հիւանդները կ'իյնան ուղեղային ամեն տեսակ հի-  
 ւանդութեանց մէջ , ինչպէս են մեղմաղձութիւն ,  
 անզգայութիւն , լուսնոտութիւն , ապշութիւն ,  
 զգայարանաց բթացում , ջղային դրութեան տը-  
 կարութիւն , և այլ ատնց նման ախտեր : Այս  
 պատճառը մեծ պակասութիւն մը կը դառնայ շատ  
 մը երիտասարդաց , զի իրենց մտաւոր կարողու-  
 թիւններուն չը շիջանելով իսկ՝ զանոնք չեն կըր-  
 նար պէտք եղածին պէս գործածել : Մարդ ինչ  
 կոչում որ ունենայ՝ չկրնար առաջ երթալ՝ առանց  
 ընծայելու նմա՝ այս ինչ աստիճան ուշադրութիւն՝  
 ում անյարմար կ'ընէ զանոնք այս վատ սովորու-  
 թիւնը . այս դասի երիտասարդաց մէջ որք բանի  
 մը չեն պարապիր ( և ասոնց թիւը խիստ մեծ է )  
 կան շատեր որ բանի ալ չեն գար . շարունակ ա-  
 պուշ , մտազբաղ կերպարանք մը զանոնք անհաճոյ  
 դատարկատուններ կ'ընէ : Շատեր գիտեմ որք այս  
 ուշադրութեան պակասութենէն և մտաւոր կա-  
 րողութեանց նուազութենէն ընկերութեան բոլոր-  
 րովին անպիտան դարցած են : Տխուր վիճակ՝ որ

կ'իջեցնէ զմարդ անասունէն ալ վար , և կ'ընէ զնա  
 իրաւամբ արժանի իւր նմանեաց արհամարհանաց՝  
 քան զթութեան :

Այս երկու նախնական պատճառներէն բնա-  
 կանաբար կը հետեւի երրորդ մը՝ այն է դործո-  
 ղութեանց յաճախութիւնը . երբ միանգամ ունա-  
 կութիւնն արմատանայ՝ հոգի և մարմին կը մրցին  
 այս ոճրին վրայ : Հոգին այս գարշելի մտածու-  
 թիւններով պաշարուած տափական շարժումներ կը  
 գրգռէ , և եթէ պահ մ'ուրիշ գաղափարներու  
 վրայ դառնայ՝ բարկ հիւթեր՝ որ կը գրգռեն ծը-  
 նընդական անդամները՝ նորէն զայն կը դարցնեն  
 տղմին մէջ : Իցի՛ւ թէ այս ճշմարիտ դիտողու-  
 թիւններէն օգուտ քաղէին երիտասարդք՝ գուշա-  
 կելով՝ թէ այս բանին մէջ մէկ սխալ քայլը իւր  
 ետեւէն կը բերէ ուրիշ մը , բոլորովին գերի կը  
 դառնան փորձութեան . թէ՛ քանի որ բազմանան  
 հրատուրիչ պատճառներն՝ զիրենք բռնելու կա-  
 րօղ բանավարութիւնը կը տկարանայ՝ և թէ՛ վեր-  
 ջապէս քիչ ժամանակէն կընկղմին չուսութեան  
 ովկիանոսին մէջ , առանց ունենալու ի ձեռին յեր-  
 կութեան լատ մը : Ստոյգ է՝ որ նորահաս տկա-  
 րութիւններ երբեմն ծանր ազդարարութիւններ  
 կուտան անոնց . երբեմն վտանգը զանոնք կ'ահա-  
 բեկէ վայրիկ մը , բայց մուլութեան կատաղութիւնը  
 գարձեալ կը խորասուզէ զանոնք հոն : Սակայն վը-  
 տանգը վերահաս՝ և ի բարելուութիւն դառնալու  
 դիպող ժամանակը կարճ է :

Ի ծընէվ փիլիսոփայութիւն ուսած ժամանա-

կըս , ժամանակ մը՝ որու յիշատակը քաղցր պիտի ըլլայ մինչեւ կենացս վերջ , իմ ընկերներէս մին այն աստիճան մոլեգնութեան հասած էր՝ որ չէր կրնար հեռանալ այս զազրութիւններէն՝ մինչեւ իսկ դաս առած ժամանակ . իւր պատիժը չուշացաւ՝ և մեռաւ ողորմ մահով՝ երկու տարի շանցած :

Հիւանդ մը ինձ այսպէս կը նկարագրէ ասոր յաղթելու դժուարութիւնը՝ ինձ գրած մէկ նամակովը . « շատ ճիգ պէտք է , (ճիշդ իւր խօսքերն են) յաղթելու այն ունակութեան՝ որ ամեն վայրկեան մեր միտքը կ'իյնայ : Ար խոստովանիմ կարմըրելով՝ թէ իգական առարկայի պատկեր մը՝ ինչ տեսակ ալ ըլլայ՝ վրաս իղձ կը ծնուցանէ : Տեսնելու ալ հարկ չունիմ . աղոտոտ հողիս շարունակ հակամէտ է աչքիս ցանկական առարկայներ պատկերացնելու : Ստոյգ է որ ամեն անգամ՝ երբ այս կիրքը վրաս կ'արծարծուի միտքս կը բերեմ ձեր խրատները , կը կռուիմ , բայց այս կռիւն ալ զիս կ'սպառէ . եթէ կարենայիք ձար մը գտնել միտքըս այս առարկայէն ի բաց դարցնելու՝ կը հաւատամ այն ատեն՝ որ բժշկիլս մերձ կըլլայ » :

Արդէն տեսնուեցաւ որ գիջութեան յաճախութիւնը՝ յառաջ կը բերէր կնոջ վրայ հարսնամոլութիւն : Մէկ գաղափարի վրայ շարունակ սեւեռած մնալու ունակութիւնն անընդունակ կընէ զայն ուրիշ մտածում ունենալու . նա բոլորովին կը ախրապետէ անոր վրայ բռնաւորի նման : Շարունակաբար գրգռուած գործարաններ ախտաւորի տրամադրութիւն կ'ստանան՝ որ շարունակ

կը խթէ զանոնք՝ մինչեւ իսկ առանց արտաքին պատճառի : Միզամանի հիւանդութիւններ կան՝ որք շարունակ միգեղու փափաք կ'ազդեն . ծննդական գործարանաց մշտնջենաւոր գրգռութիւնն ալ նոյն հիւանդութիւնն յառաջ կը բերէ անոնց վերայ : Զարմանալի չէ ուրեմն , որ այս երկու պատճառաց՝ բնականին և բարոյականին՝ օժանդակութիւնը մէկ տեղ գալով՝ աս սոսկալի հիւանդութեան մէջ ձգեն զկին : Այս գաղափարը որչափ արժանաւոր է փրկարար սարսափ ազդելու այն կանանց որոց վրայ տակաւին քիչ մը բանավարութիւն և երեսի ջուր մնացած է :

Գիջատէրներուն սպառման մէկ չորրորդ պատճառն ալ՝ առանց սերմի արտաքսման շարունակ անդամին կանգնելն է՝ թէեւ անկատար , որ զիրենք անհանգիստ կընէ կը կարծեն՝ բայց և կ'ըսպառէ չարաչար : Ո եւ է անդամ որ կը ձգտուի՝ ուժոյ վատնում կ'արտադրէ և այս՝ գիջատէրներուն չղար՝ մարմնոյ ողիններն աւելի առատօրէն այն կողմ կը յորդեն , կը ցնդին , որով տկարութիւն կը բերեն . միւս պաշտօններուն պէտք եղածը չեն տար , որով անոնք թերի կը մնան . այս երկու պատճառաց մէկ տեղ գալովն ծանր վնասներ կը ծագին : Ուրիշ վնաս մ'ալ որ այս չորրորդ պատճառէն կը ծագի՝ սերմնաթափութիւն ընողներուն ծննդական անդամին ընդարմացումն է , ուստի կը հետեւի անկարողութիւն՝ կանգնման թերութեամբ , և սլարդ հոսումն . քանզի թուլցած անդամները թող կուտան որ սերմը փախչի՝ քանի որ

գայ, և անդադար կաթկըթի այն հիւթը զոր ամորձիքի գեղձերը կը զատեն. և վերջապէս միզուկին բոլոր ներքին մաշկը հարբուխի տրամադիր կըլլայ՝ որով կանանց սպիտակ հոսման պէս շարունակ հոսում կը պատճառէ, տրամադրութիւն՝ որ չը մոռնանք ըսելու՝ շատ հասարակ է, որ միայն քիթի, կոկորդի, թոքերու մաշկին յատուկ չէ, այլ յաճախ կ'ախտացնէ խոռոչընդերները, որ գլխութենէ կը վրիպի, վասն զի չկարծուիր՝ և սխալ կը դարմանուի՝ վասն զի չբխացուիր: Շատ դիւրին է գտնել զխտոզներու գրուածոց մէջ թէ՛ այս հիւանդութիւնն ուրիշ բան կարծելով դարմանած են:

Վարպետ վիրաբոյժ մը կը պատմէր օր մը ինձ թէ՛ մարդ մը իր խիստ մատաղ հասակէն տրուանաց տալով ինքզինք կարի շուայտութեամբ՝ և զայս միայն փողոցներու անկիւններ ոտքի վրայ ի գործ դնելով՝ սպառման մէջ ինկաւ՝ մէջքի սաստիկ ցաւով և ազդերու ու սրունից ծիւրութեամբ, որու վրայ աւելցաւ նաեւ այս անդամներուն ընդարմացումը՝ որ կերեւէր թէ հետեւութիւնն էր՝ այս աղտոտ հեշտութիւններ գործադրած ժամանակ իւր բռնած դրից: Վեց ամիս անկողնոյ ծառայելէ յետոյ մեռաւ ողորմելի՝ միանդամայն սոսկալի վիճակի մէջ: Այս դիտողութիւնը մեզ չը՛նձայեր հինգերորդ պատճառ մը վտանգաց՝ որ սերմնաթափներու միայն յատուկ են:

Երբ մարդ կորուսանէ իւր ուժը այս երկու միջոցաւ միանդամայն՝ սկարութիւնը առաւել սաստիկ կ'ըլլայ՝ Մարդ մը որ ոտքի վրայ է՝ կամ'նըս-

տած՝ ինքզինք այս վիճակներուն՝ մանաւանդ առաջինին մէջ պահելու համար՝ կարօտութիւն ունի աւելի բազմաթիւ ջիղերու գործունէութեան՝ և այս գործունէութիւնը կենդանական մասերը կը ցնդեցնէ: Տկար մարդիկ՝ որ չեն կրնար վայրիկ մը ոտքի վրայ կենալ՝ առանց սկարութիւնն զգալու, հիւանդներ՝ որ չեն կրնար նստած մնալ առանց նոյն բանը խմանալու՝ մեր ըսածը լիովին կատարացանեն: Իսկ պառկած կամ երկնցած ըլլալու համար՝ հարկ չէ այս գորութիւնները գործածել: Աստի կիմացուի թէ՛ նոյն գործողութիւնը տարբեր կեցուածքի մէջ կատարուելով՝ տարբեր սկարութիւն կ'արտադրէ՝ և այս աւելի կ'ըլլայ ոտքի վրայ:

Ուրիշ վաւերական դիտողութիւններէ՝ մէկ վեցերորդ պատճառ մ'ալ կը սովորիմք՝ որ գուցէ տըկար բան մը երեւի, սակայն լուսամիտ բնագէտները զայն սլիտի չարհամարհեն: Ամեն կենդանի մարմիններ կ'արտաչնչեն. ամեն վայրկեան դուրս կ'ելնէ, գրեթէ մեր մորթի ծակտիկներուն կէսէն, վերջին աստիճան անօտր հիւթ մը՝ և որ աւելի մեծաքանակ է՝ քան թէ միւս արտահանութիւններ: Մի եւ նոյն ժամանակին, ուրիշ տեսակ մը ծակտիք՝ ներս կ'ընդունին զմեզ չըջապատող հեղուկ մարմնոց մէկ մասը և կը տանին զանոնք մեր նըրբերակաց մէջ: Ապացուցուած է՝ որ ինչ ինչ պարագայից մէջ՝ այս ներշնչութիւնը խիստ մեծաքանակ կ'ըլլայ: Ուժեղ մարդիկ աւելի կ'արտաչնչեն, սկարները որ գրեթէ յատուկ միջոցորտ չունին՝ աւելի կը ներչնչեն, և այս արտաչնչուած մասը,

կամ առողջ անձանց այս մորթային արտաշնչութիւնը, տեսակ մը սննդարար և զօրացուցիչ բան կը պարունակէ, որ ուրիշէ մը ներշնչուելով՝ անոր զօրութիւն տալու կը նպաստէ: Մարդ աւելի կ'արտաշնչէ մերձաւորութեան ժամանակ՝ քանզի արեան շրջանին ուժը սաստկացած է: Այս միջոցին արտաշնչութիւնը ամեն ժամանակէ աւելի գործօն և ոգելից է. սա իրական կորուստ մ'է զոր կ'ընէ մարդ և որ տեղի կ'ունենայ՝ ինչ կերպով ալ հոսի սերմը՝ քանզի անոր յարակից յուզմունքէն կ'ախուսուին: Մերձաւորութեան ժամանակ այս արտաշնչութիւնը փոխադարձ կ'ըլլայ՝ և այն ատեն՝ մին կը ներշնչէ միւսին արտաշնչածը: Հաւատարմութեան արժանի դիտողներ այլ եւս տարակոյս չեն թողած այս փոխադարձութեանը վրայ: Այս պարագայիս մէջ մերձաւորողները իրարու կորուստին տեղը կը լեցնեն: Իսկ սերմնաթափը այս առաւելութիւնը չունի, կ'ուտայ՝ և չաւնուր:

Երբ գիտենք կրից ազդեցութիւնը՝ եօթներորդ տարբերութիւն մ'ալ կը գտնեմք կանանց մօտեցողներու և սերմնաթափներուն մէջ. տարբերութիւն՝ որ բոլորովին աննպաստ է վերջիններուն: Բերկրութիւնը՝ որ հոգիէն կ'ուզայ՝ և զոր պէտք չէ չիթեւ պարզ հեշտասիրութեան հետ՝ զոր մարդիկ հաւատարապէս ունին անասնոց հետ՝ և որոնցմէ բոլորովին կը տարբերին, այս բերկրութիւնը, կըսեմ, կ'օգնէ մարսողութեան, կ'երազէ արեան շրջանը, կը նպաստէ բոլոր գործարանական պաշտօններուն, կը կազդուրէ ուժը և զայն

կը պահպանէ: Եթէ սա միանայ սիրոյ հաճոյից հետ՝ կ'օգնէ տեղը բերելու այն ուժը՝ զոր անոնք կըրնան բառնալ, և դիտողութիւնը զայս կը հաստատէ: Այս սկզբան յենլով՝ Վէնէթ՝ որու գըրքին մէջ գեղեցիկ գլուխ մը կայ սիրոյ ծայրայեղ հաճոյից վտանգներուն վրայ, կը հաստատէ՝ թէ գեղանի կնոջ հետ միաւորութիւնն աւելի քիչ կըսպառէ՝ քան թէ տգեղի մը հետ: Եւ կընայ տարակուսիչ ոք՝ թէ բնութիւնն իրեն օբինաւոր ճամբով հայթայթած հաճոյից խորը աւելի բերկրութիւն դրած է՝ քան այն հաճոյից՝ որք իրեն դարչելի են:

Աթերորդ և վերջին պատճառ մը՝ որ սերմնաթափութեան վտանգը կ'աւելցնէ, այն է սոսկմամբ խառն գիղ՝ որ այս գործողութենէն յետոյ կ'ուզայ՝ երբ աղէտներ մարդուն աչքը բացած են ոճրին և անոր վտանգաց վրայ: Եւ ո՞վ քան սերմնաթափներ՝ այս խայթերուն աւելի ենթակայ կ'ըլլայ: Երբ քօղը իյնայ՝ իրենց վարուց պատկերը կը ներկայի իւր ամենէն ահուելի կերպարանօք: Յանցապարտ կը գտնուին՝ այնպիսի ոճրագործութեամբ՝ որու պատիժը չուշանար աստուածային արդարութենէն՝ և որ անմիջապէս կը պատուհասուի մահուամբ:

Ձիրենք շարունակ հալածող ամօթը տարապայման կը սաստկացնէ անոնց թշուառութիւնը: Ոմանց անատակութիւնն սերմնաթափութեան մասին՝ այն աստիճան կը հասնի՝ որ կանանց հետ մերձաւորութիւնն իրրեւ սովորութիւն մը կը նը-

կատեն . ամենէն յանցաւորները զայս չեն կրնար ծածկել, և չեն կասկածիր որ ասոր համար պիտի անարդուին : Յիրաւի, որ սերմնաթափը կը համարձակի խոստովանիլ իւր զազրագործութիւնը : Եւ այն հարկ՝ որ կ'ստիպէ զանոնք զաղտնեաց ըստուերին մէջ ծածկուել, իրենց իսկ աչքին յայտնի ապացոյց մը չէ՞ թէ ոճրագործութիւն է իրենց ըրածը : Քանի՞ քանիներ կ'որած են՝ չհամարձակուով ի վեր հանել իրենց ակտերուն պատճառը : Օնկնայի շատ մը նամակներուն մէջ կը կարդամք . շատեաւ կը նամարիմ մեռնիլ՝ քան քու դեմը երեւի ոչսպիտի խոստովանութենէ յետոյ : Ստուգիւ մարդ տրամադիր է, և պէտք է ըլլայ՝ արդարացնելու այնպիսի ոք՝ որ հրապուրուած այն յօժարութենէն՝ զոր բնութիւնն անկեց ամեն սրտերու մէջ, և զոր ի գործ կը դնէ ինք (բնութիւն) տեսակը պահպանելու համար, այնպիսի ոք՝ որ օրինաց և առողջութեան դժած սահմաններէն անցնելով միայն կը մեղանչէ՝ զի իւր կրքէն մղուած ինքզինք կը մտնայ, մարդ աւելի տրամադիր է զայս արդարացընելու՝ քան թէ զայն՝ որ կը մեղանչէ առաթուր կոխելով ամեն օրէնք, տակն ի վրայ ընելով ամեն զգացում, բնութեան ամեն նպատակներ : Զգալով թէ քանի՞ արհամարհ պիտի երեւէր նա ընկերութեան առջեւ՝ եթէ ճանչցուէր, չարունակ կը տանջուի այս զազրափարով : Եւ կ'լինան այսպիսիք տրամութեան ու յուսահատութեան մէջ, ինչպէս տեսնուեցաւ գըրքիս չորրորդ հատուածին մէջ, և կզգան բոլոր ազնաներ, որ յառաջ կուգան յարատեւ տրամու-

թենէ, առանց ունենալու՝ որ յանցապարտի մը համար ամենէն ահարկու վիճակն է՝ առանց ունենալու, կըսեմք, և ոչ մի պատրուակ արդարացուցման, ոչ մի պատճառ մխիթարութեան : Եւ ի՞նչ կը ծագի տխրութենէն . նրբաթելիցն թուրութիւն, արեան շրջանի դանդաղութիւն, մարտողութեան անկատարութիւն, տածման պակասութիւն, մորթի ծակոտեաց խցումն, որ տըխրութեան մասնաւոր արդիւնքն կը թուի, հիւթերու դուրս դեղումը՝ որ հետեւանք է սեղմումներու : Լեարդի մոտրի ակեղքեր կը գոցուին, կըսէ Սենագ . մարդը կը տարածոյի շոտր մարմնոյն մէջ . կարկամութիւնք, ջգային ցցումներ, անդամալուծութիւնք, ցաւեր, անձկութեան անսահման սաստկութիւն՝ յառաջ կուգան աստի : Անօգուտ է ասկէց աւելի խօսքս երկարել սերմնաթափութեան յատուկ վրտանդաց վրայ . ասոնք պէտք եղածէն աւելի ապացուցուած և իրական են . անցնիմ բուժելու միջոցներուն :

# ՄԱՍՆ Գ.

## Դ Ա Ր Մ Ա Ն Ո Ւ Մ Ն

### Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ը .

Ուրիշ բժիշկներէն առաջարկուած բուժման  
միջոցներ

Քանի մը հիւանդութիւններ կան՝ որոց մէջ  
բժիշկն գրեթէ ապահով է դեղերու յաջողութեան  
վրայ : Այն հիւանդութիւնք՝ որք հեշտախտային  
սպառմանց և առաւելեւ սերմնաթափութեան հե-  
տեւանք են՝ սա կարգէն չեն , և ասոնց մասին ըլ-  
լալիք ակտաւճիւրը՝ երբ անոնք այս ինչ աստիճա-  
նին հասած են արդէն , սարսափ միայն կ'ազդէ :  
Հիպոկրատ մահ վճռած է :

Այս հիւանդութենէն ողորմ մահով մեռնողներ  
տեսայ՝ այնպիսիներ ալ կան՝ որոց ցաւոց ափո-  
փանք մ'իսկ չկրցի տալ : Սակայն այս օրինակներ  
պէտք չէ վշտացնեն . աւելի յաջողներ տեսնուած  
են . իմ անձնական փորձս քանի մ'օրինակ տուաւ  
ինձ :

Նոյն տեղը՝ ուր Հիպոկրատ այս հիւանդու-  
թեան նկարագիրը կ'ընէ , ինչպէս յառաջ բերինք  
վերը , բոյժն ալ կը նշանակէ . «երբ հիւանդն այս  
վիճակին մէջ գտնուի՝ կ'ըսէ , մարմնոյն վրայ տած  
գրէք վերէն ի վար , յետոյ փսխեցուցիչ տուէք  
նմա . ապա գլուխը մաքրող դեղ մը , յետոյ վարէն  
մաքրողական մը : Այս բոյժը պէտք է մանաւանդ  
գարնան ատեն սկսել : Մաքրողականներէ վերջ  
թեթեւ կաթ , կամ իչու կաթ խմցնել , յետոյ կո-  
վու կաթ՝ քառասուն օրի չափ . կաթ խմած ատեն  
միս պիտի չուտէ , իրիկունները ցորենի խիւս տա-  
լու է նմա : Կաթին գործը լմնայլէն վերջ , ամենա-  
փափուկ մտրով սնուցանելու է զնա՝ քիչ սկսե-  
լով , և այս միջոցաւ գիրցնելու սկիւր Տարի մը հետի  
պէտք է մնայ որ և է զեղխութենէ , որ եւ իցէ չա-  
փազանց մարդէ , բաւականապալ պէտք է չըջադա-  
յութիւններով՝ որոց մէջ պիտի զգուշանայ ցուրտէ  
և արեւէ » :

Ինչպէս կը տեսնուի , Հիպոկրատ կակսի բոյժը  
փսխեցուցիչով և մաքրողականով : Իւր հեղինա-  
կութիւնը կրնայ օրինաց տեղ բռնել , բայց այս օ-  
րէնքը շատ պարագայի մէջ վնասաբեր կրնայ ըլ-  
լալ : Այս դժուարութենէն դիւրին է ազատիլ բը-  
ժըշկի մը՝ երբ դիտէ՝ որ Հիպոկրատ մաքրողական  
կը հրամայէ անոր համար միայն , որպէս զի դար-  
ցրնէ յորդութիւնը՝ զոր կը կարծէր թէ գլխէն կ'ըջ-  
նէ ողնայարին վրայ , և ուրիշ տեղ մը տուփական  
ծայրայեղութեամբ ակտացողները կը դատէ այն  
անձանց ցանկին մէջ՝ որոց բնաւ մաքրողական տալ

պէտք չէ. զի ոչ միայն չեն կրնար սնունց որ եւ իցի  
օգոտս ընել, այլ ընդհանրապէս կրնան սնունց վնա-  
սել խի: Ուստի այս վերջինը պէտք է իբրեւ ընդ-  
հանուր կանոն ընդունիլ. առաջինը բացառութիւն  
է, հիմնուած դրութեան մը վրայ՝ որու սխալ ըլ-  
լան ստուգուած է այսօր:

Հօֆմանի քննական ճառերու մէջ՝ զոր արդէն  
յառաջ բերած եմ յաճախ, երկու դիտողութիւն-  
ներ կան, որք շատ զգուշալի կ'ընեն փոխեցուցիչ-  
ներու գործածութիւնը:

Պ. Պրահավ աւելի բուժման դժուարութիւն-  
ները քան թէ զայն ձեռք բերելու միջոցները կար-  
ծես կը նշանակէ: «Բուժման քիչ յոյս կայ. կաթին  
ազդեցութիւնը չուտով կանցնի, ձիով չըջագայու-  
թեան մարդու մը օգուտ չըներ գրեթէ բնաւ այս  
տեսակ հիւանդներու. և կը տրանջեն թէ այս դե-  
ղերը կը տկարացնեն գիրենք. ստուգիւ մարմնա-  
մարզը աւելի կ'առատացնէ անոնց երազափորձին  
հոսումը, և զանոնք աւելի ուժաթափ կ'ընէ: Երբ  
առաւօտ կ'ըլլայ՝ անկողնէն կեննեն քրտնաթաթաւ  
և քնով աւելի տկարացած. համեմաւոր դեղերն  
ալ չեն մարտեր, որոց արդիւնքը իրենց դարձեալ  
վնասաբեր են: Այս պարագայիս մէջ միակ օգ-  
տակար բաներն են՝ աղէկ կերակուրներ, մարմ-  
նական չափաւոր մարզ, ոտքը տաք ջրի մէջ դնել,  
և զգուշութեամբ շփումները» . կրնայ փորձ-  
ուիլ հետեւեալ դեղերուն արդիւնքը. 1. թեթեւ և  
չոր սնունդ՝ թռչնոց, եզան, ոչխարի, հորթու,  
ուլի միսէ՝ խորոված՝ քան թէ խաշած: Ամենա-

պատուական դարեջուր, քիչ քանակութեամբ .  
գինի քիչ, բայց խիտ զօրացուցիչ տեսակէն: 2.  
Շատ մարմնամարզ, քիչ քիչ աւելցնելով, մինչեւ  
որ մարմինը յոգնի՝ բայց միշտ անօթի փորուն:  
3. Խուսկի ծխոյ վրայ բռնած ֆանելայով իրիկուն,  
առտուն կանոնաւորապէս շփել մէջքը, փորին վա-  
րը, ցայլելու ոսկորները, ցայլերը, երկուորեաց  
պարկը:

Բժշկին աւաջին նպատակը պէտք է ըլլայ ուժը  
տեղը բերել և տալ մարմնային նրբաթելից իրենց  
կորուսած առաձգութիւնը: Տաք, խուսափող, հա-  
մեմային, բարկ կամ հաճելի հոտ ունեցող դեղերը  
չեն յարմարիւր ատոնց. մեղմ կերակուր պէտք է՝  
և այն տեսակ, որ տեղը բերէ այն տածիչ մածու-  
ցիկ գոյացութիւնք զորս անկարգ արտահանում-  
ներն սպառած են. այսպէս են եզի, հորթու, պա-  
րարտ աքաղաղի խաշուկ՝ քիչ մը գինիով, կիտ-  
րոնի հիւթով, աղով, հնդիկ ընկուղով և մեխա-  
կով: Ասոր վրայ կրնան աւելնալ նաեւ յաջողու-  
թեամբ արտաշնչումներ դիւրացնող դեղեր՝ և ա-  
նոնք՝ որք մարմնոյ մանրաթելից թմբած առաձ-  
գութիւնը կը կենդանացնեն: Սերմնաթափի հա-  
մար ըրած մէկ ուրիշ խորհրդակցութեան մէջ, կը  
պատուիրէր ամեն առաւօտ՝ մէկ երորդ Սէլթէրի  
ջրով կտրած իչու կաթ խմել, որոչեալ քանակու-  
թեամբ:

Անօգուտ է յիշատակել աստ ուրիշ հեղինակաց  
դիտողութիւններ և պատուէրներ:

Շատ գեղեցիկ տեսութիւններ կան՝ այս հի-

ւանդութեան օգտակար՝ Բոհսի ալ մեռալին բոսթիք  
գրքին մէջ՝ որու հեղինակն է Պ. Ալէօթօ, բժիշկ  
Գաղղիոյ Մանկանց, որ յետ մեծ անուն վաստկե-  
լու, իբր անդամադնին և բնախօս, այս գործով  
առաջին կարգի փորձ բժշկի կարգ անցաւ: Ողնա-  
յարի հալ ու մաշի վրայ գրած յլութենքը այսպէս  
կրակին. Գաղղ մօրայիտիս, ախտացուցիչ ջերմու-  
թիւն՝ հիւանդութիւն՝ որ մէկ խօսքով ըսենք,  
խիստ յաճախ կը պատահի, որու վրայ ոչ ոք խօ-  
սած էր, զոր բժիշկներ սխալ կը դարմանեն՝ ինչ-  
պէս ցաւօք յայտնեցի, և որու ախտանիշերը, բը-  
նութիւնը և դարմանատարութիւնը առաջին ան-  
գամ կը բացատրուին Պ. Ալէօթօն՝ հետեւեալ գը-  
լութենքով. *Վիրկանկոսթի*, սպառումն՝ և *Անկախ*  
զոր կրնամք թարգմանել արեան պակասութիւն,  
պատուական գլուխ մը՝ որ ամբողջապէս հեղինա-  
կին գրչէն ելած է:

Պ. Արվիս՝ որու գրուածը չկրցի ձեռք բերել  
գործոյս առաջին սպազութիւնը չեղած՝ ամենէն  
աւելի մանրամասնօրէն խօսած է բուժման վրայ:  
Ուրախութեամբ տեսայ որ երկուքիս կարծիքն ալ  
մէկ էր, և միեւնոյն դեղերը կը գործածէինք, մա-  
նաւանդ քինա և պաղ ջրի լուացում. և այս հա-  
մակամութիւնը նպատաւոր է մեր երկուքիս հե-  
տեւած գրութեան: Հոս միայն իւր երկու վճիռ-  
ները պիտի յառաջ բերեմ, որոց մէջ իր վարդապե-  
տութեան էութիւնը բովանդակուած է, քանի մը  
բացատրութիւններ պիտի յաւելում՝ անոնց վրայ՝  
իմ գործողութեանս եզանակը հաստատելու համար:

«Այս հիւանդութեան բոյժը, կըսէ այս ճար-  
տար բժիշկը, երկու իրերէ կախում ունի, նախ՝  
թէ ինչ բանէ խորչելու է, և երկրորդ՝ թէ ինչ  
ընելու է. դեղերը բնաւ ազդեցութիւն չեն ու-  
նենար՝ եթէ մեծ ուշադրութիւն չընծայուի ամեն  
այն բանին՝ որ հիւանդն է բնութեան կամ եթէ  
ուշ չգրուի ապրելու կերպին բոլոր ճիւղերուն: Ա-  
ռողջ օդէն կարեւորն է. սննդառութիւնը պէտք  
է զօրացուցիչ ըլլայ՝ առանց ջեռուցանելու. քունը  
չատ երկար պէտք չէ ըլլայ, պատշաճ ժամերուն  
քնանալ պէտք է: Չախաւոր մարմնամարդ ընել՝  
մանաւանդ ձիով: Աթէ բնական արտահանութիւն-  
ներն անկանոն են՝ կանոնաւորել. հիւանդը պէտք  
է ջանայ զբօսցնել ինքզինք՝ ընկերութեամբ կամ  
անմեղ հաճոյքներով: Բոլոր դեղերը պէտք է պալ-  
սամային (այսինքն զօվարար) և զօրացուցիչ երկու  
կարգերէն առնուին:»

Փոխանակ թէ յի, որուն համար կըսէ թէ միշտ  
մըտասկար է, կը հրամայէ Միքիսի եւ անանոյթի  
թրջում՝ դնելով ամեն մէկ դաւաթին մէջ զբզալ  
մը պարամային խառնուրդ՝ որ բաղկանայ՝ սերէ  
կամ հաւկըթի դեղնուցէ՝ մէկ տեղ հարած՝ երկու  
երեք կաթիլ կինամոմոնի (*Թարչի*) իւղով. այս ըմ-  
պելի մը կըլլայ, քմաց և ստամոքսի միանգամայն  
ալ անձամբ, և այս դեղն ստուգիւ պալսամային և  
զօրացուցիչ է: Բաց հոս դիտողութիւն մը պիտի  
ընեմ, որ կրնայ օգտակար ըլլալ, այն է թէ Պ.  
Արվիս իւր սպասարած զօրացուցիչներուն կարգը

կը դասէ կապարէ հանուած դեղեր: Ինձ պարտք կը համարիմ ազգարարել, հակառակ Պ. Նըվիսի հեղինակութեան՝ և ուրիշ մէկ քանի արժանապատիւ բժշկաց՝ թէ կապարային դեղոց ի ներքուստ գործածութիւնը ճշմարիտ թոյն մ'է, ըստ միաբան վիայութեան բժշկաց. ստոր շատ տխուր հետեւանքները տեսած եմ. և շողակրատներու անամօթ յանդգնութիւնը մեզ կը ցուցնէ ամեն օր նոյն օրինակ փորձեր: Նթէ կ'ուզուի ստոր գործածութիւնը ուրիշ մէկ քանի թոյներուն պէս հաստատ պահել, գոնէ այս դեղէն անոնց միայն տալու է՝ որք կարօղ են անոնց վտանգները և ազդեցութիւնները ճանչնալ, և առանց զգուշութեան թող չնշանակուին հասարակութեան սահմանուած դրքերու մէջ:

Վերջ կուտամ այս հատուածիս՝ հոս դնելով այն մեթոս՝ որու կը հետեւի Պ. Սթօուք՝ այս տեսակ հիւանդութեանց մէջ. շատ պարզ և ազդու է այն: Բաղդատելով բոլոր այս մեթոտները՝ պիտի տեսնուին՝ որ անոնք ամենքն ալ նոյն սկզբանց վերայ հիմնուած են, մի եւ նոյն նպատակին կը ձրգտին, և իրարու յար եւ ման միջոցներ կը գործածեն՝ նմանութիւն՝ որ մեթոտին գովեստն է, և անոր վրայ վստահութիւն ազդողը: « Նախ սկսելու է, կըսէ Պ. Սթօուք՝ սնուցանել զանոնք սննդար արգանակներով. բրինձ, վարսակի, գարիի ճաւար եփած՝ արգանակի կամ կաթի հետ, և կաթ՝ շատ օգտակար են. սակայն գիտելի է որ քիչ, և յաճախ խմցնելու է: Նթէ ստամոքսն այն աստիճան

տկարացած է՝ ինչպէս կը պատահի՝ երբ հիւանդութիւնն շատ յառաջ գացած է՝ մինչ չկրնար վերցընել այս կերակուրներն առանց մեծ նեղութեան՝ պէտք է ստնտու բռնել հիւանդին, և այս շատ անգամ ամենածանր վիճակի հասնողն ազատած է: Թուլցած մանրաթելից ուժ և կենդանութիւն տալու է, երկաթադեղով, քինայով և կինամոմնով խառն գինի խմցնելով: Երբ հիւանդն ուժ զգայ շրջագայելու չափ, խիստ օգտակար է իրեն երթալ գիւղի կամ լեռան ամենամաքուր օդ ծծել: »

Հեղինակին գործողութեան եղանակը  
կամ (բռաքիբը)

Քանի մը հիւանդութիւններ կան՝ որոց մէջ դժուար է ճշգրիտ կերպով իմանալ անոնց պատճառը, հետեւաբար դարմանը որոշել և դեղատուութիւնը կանոնաւորել՝ բայց որք բաւական դիւրաւ կը բուժին՝ եթէ միանգամ ասոնք ճանչցուին. սակայն այսպէս չէ ողնայարի մաշտղութիւնը: Բժիշկն կը ճանչէ հիւանդութիւնը, գիտէ անոր պատճառը. սա՛ ինչպէս կ'ըսէ Պ. Ղըվիս, մաշտղութեան մէկ մասնատոր տեսակն է, որոս պատճառն է ջիդերոս ընդհանուր տիպարոթիոնը: Այսպէս՝ նիշը դիւրին է, դեղատուութեան էական կտորին վերայ եւս կարծեաց անհամաձայնութիւն չկայ. սակայն յաճախ ամենալաւ դեղատուութիւնը չյաջողիր՝ ասոր համար իսկ աւելի պէտք է անոր մանրամասնութիւնները որոշել: Մանրաթելերուն ընդհանուր թուրութիւն, ջրային դուրութեան տկարութիւն, հոսանքաներուն աւրուիլը՝ ասոնք են արտին պատճառները, Սա կուգայ մարմնական բոլոր գործարանաց տկարացումէն, հարկ է իրենց ուժը վերագարձնել. այս է միակ նիշը: Ասոր ստորաբաժանումներն են՝ զիտնալ տկարացած զանա-

զան մասերը. բայց՝ որովհետեւ մի եւ նոյն դեղերը ասոնց ամենուն պաշտօնը միահաղոյն կը կատարեն՝ անօգուտ է զանոնք մի առ մի հոս թուել. արդէն գրքիս ընթացքին մէջ բաւական բացատրած եմ:

Անոնք՝ որ բժշկութեան անդէտ են՝ և որք սակայն՝ բժիշկներէ աւելի կը խօսին անոր վրայ՝ կը կարծեն թէ արտը ճանչելէ յետոյ բան մը չէ զայն դարմանել՝ և թէ՛ լաւ կերակուրներով և սթափականներով՝ շուտով կը զօրանայ հիւանդը. տխուր փորձեր ցուցած են ամենամեծ բժշկաց թէ՛ էն դժուար գործը հոս է:

Շատ դիտիւն է, կ'ըսէ Կորթէր, ուժը պահպնենք. զայն տեղը բերնոս գրեթէ հնարը չ'կայ: Այս բանը դիւրաւ կը հասկցուի՝ երբ խորհի ոք՝ թէ կերակուրները և դեղը ուրիշ բան չեն՝ այլ միայն գործիքներ՝ զորս բնութիւն կը գործածէ ինքզինք դարմանելու, իւր կորուստը լեցնելու և մարմնոյ մէջ պատահած խանգարումներն ուղղելու համար: Եւ ի՞նչ է բնութիւն. մարմնոյ գորութեանց հասարթոսը՝ որք անդաշնակօրէն բաժնուած են: Անասական գորութիւնն է սա՝ որ համեմատաբար բաշխուած է մարմնոյ ամեն մասանց մէջ: Երբ գորութիւնը ըսպառած է՝ ըսել է որ նոյն իսկ բնութիւնը կը պակսի, գործաւոր ճարտարապետն է որ այլ եւս գաղբեր է գործելէ՝ ուզածնուգ չափ նիւթ տուէք իրեն՝ կարողութիւն չունի զանոնք գործածելու: Եթէ կուգէք՝ թաղեցէք զինք չ'նքին քարին, փայտին և շաղախին տակ՝ դարձեալ մատ մը յառաջ չերթար պատին շինութիւնը: Նոյն բանն է նաեւ

մարմնոյ զօրութեան եղծումէն յառաջ եկած հիւ-  
ւանդութեանց համար: Աերակուրները չեն կազ-  
դուեր, և դեղերը չեն ազդեր: Ստամոքսներ տե-  
սայ՝ այն աստիճան տկարացած՝ որ կերակուրները  
չէին կրնար պատրաստել եփել, ճիշդ ինչպէս չեն  
կրնար ընել փայտէ ամաններ. երբեմն հոն կը տե-  
ղաւորուին իրենց սեպհական ծանրութեան օրինօք,  
և երբ վերջէն նոր քանակութիւն մը գրգռէ ստա-  
մոքան իւր բեռով, կը տեսնես որ անոնք (կերակուր-  
ները) կսկսին դուրս ելնել՝ թէթեւ ճգամբ, ետեւէ  
ետեւ, բոլորովին իրարմէ զատուած: Երբեմն ալ՝  
քիչ մ'աւելի ժամանակ հոն կենալով՝ կ'ապականին  
և փախումով դուրս կ'ելնեն, այն փիճակի մէջ՝ որ  
իրբ թէ գրուած ըլլային փտտելու՝ արծաթէ կամ  
յարձապակէ կոնքի մը մէջ. ի՞նչ կը յուսացուի  
անուղներէ այսպիսի պարագայներու մէջ: Ամեն  
անձի վրայ սպառումն այս աստիճան մեծ չ'ըլլար.  
կան ոմանք՝ որոց վրայ զօրութիւնը կը տկարանայ  
միայն՝ առանց բոլորովին եղծուելու. այն ժամա-  
նակ ապաւէն յուսալ կարելի է՝ կերակրոց և մին-  
չեւ իսկ դեղերու կողմէ: Բնութենէն մնացածը  
(այսինքն մարմնական զօրութիւնը) օգուտ կը քաղէ  
առաջիններէն (կերակուրներէն), և դեղերն ալ այն  
տեսակէն ըլլալու են՝ որոնք մարելու վրայ եղող  
կենսական գործունէութիւնը արծարծելու ամե-  
նայարմար դատուած են. ասոնք արտաքին: օգ-  
նութիւններ են զորս կուտանք ճարտարապետին  
իւր գործը շարունակելու համար՝ կարելի եղածին  
չափ նուազ գործածելով իւր զօրութիւնը, կամ այս-

պէս ըսենք՝ մտրակ՝ մ'է, զոր կուտանք ճիւղն՝  
որպէս զի ճիգ մ'ընէ՝ ելնելու խրուած տեղէն.  
բայց ո՛րչափ ճարտարութիւն և խոհեմութիւն  
պէտք է ի մի ակնարկ դատելու տղմուտին խո-  
րութիւնը, կենդանիին ոյժը, և զանոնք կուտու  
համար: Եթէ գործողութիւնն իւր կարողութե-  
նէն վեր է, իրաւ է որ այս խթանը զայն կ'ըս-  
տիպէ ջանք մ'ընելու՝ բայց՝ եթէ այս ճիգը չ'կըր-  
նայ զայն ապահով ճամբան հանել՝ ասով ալ աւելի  
կ'սպառի իւր զօրութիւնը:

Աերմատախորթեամբ եկած տկարութիւնը՝  
մասնաւոր դժուարութիւն մը կուտայ զօրացուցիչ  
դեղերու ընտրութեան մէջ՝ դժուարութիւն՝ որ  
ուրիշ պարագայի մէջ չը պատահիր. այսինքն՝ ա-  
մենամեծ խնամով զգուշանալ պէտք է այն դեղե-  
րէն՝ որք գրգռութիւն պատճառելով՝ կրնան մար-  
մինը արթնցնել: Աենդանի էակաց կազմութեան  
մէկ օրէնքն՝ խիստ տարբեր անկենդաններէն և ա-  
նոնց օրէնքներէն՝ այս է որ երբ շարժումները կը  
յաճախին, յաճախութիւնը աւելի զգալի կ'ըլ-  
լայ շարժմանց ընդունակ մասերուն վրայ՝ քան  
թէ ուրիշ տեղ: Արդ սերմատախորթներու վրայ՝ ա-  
մենէն աւելի դիւրագրգռուները ծննդական ան-  
դամներն են. ուրեմն գրգռիչ դեղոց ազդեցու-  
թիւնն աւելի յայտնի կ'ըլլայ այս մասերուն վրայ,  
և ասկէ յառաջ եկած վտանգները մեծ զգուշու-  
թիւն պէտք է ազդեն գործածուած միջոցներուն  
վրայ: Ի՞նչ տեսակ պէտք է ըլլան ուրեմն (դեղերը):  
Ահա զայս պիտի քննեմ՝ ապրելու եղանակը ման-

բամասնաբար առաջի դնելէս յետոյ : Այս միակնա-  
մասնութեան վեջ սյխոի հետեոյիմ վնց համարուն իրաց  
սովորական բաժանման . ասոնք են՝ օդ, կերա-  
կուր, քուն, շարժում, բնական արտահանութիւնք  
և կիրք :

## ՕԳ

Օդ մեր վրայ ունի այն ազդեցութիւն՝ զոր  
չուրն ունի ձկանց վրայ, կրնամք ըսել անկէց ա-  
ւելի : Անոնք որ գիտեն, թէ ինչ աստիճան ընդար-  
ձակ է այս ազդեցութեան սահմանը, որ անգէտ  
չեն՝ թե կերակրասերները կը ճանչեն ոչ միայն գե-  
տը՝ այլ գետին այն տեղը ուրկէ ձուկ մը բռնած  
են՝ լաւ կզգան՝ թէ որչափ կարեւորութիւն ունի  
հիւանդին համար այս կամ այն օդ ծծելը : Անոնք,  
որ իրենց կենաց մէջ անգամ մը մտած են սեն-  
եակ մը՝ ուր մարդ կը բնակի առանց օդը փոխե-  
լու, անոնք՝ որ ճահիճներու քովէն անցեր են տաք  
օդին, որ վարժուած են խորածոր տեղերու, անոնք  
որ բազմամարդ քաղաքէ մը գեղ ելած են, որք՝ օդ  
ծծած են այգուն կամ կէս օրին, անձրեւէ առաջ  
կամ վերջ, բոլոր այս անձինք, կ'ըսեմ, կը հասկը-  
նան թէ օդն ինչպէս կ'ազդէ առողջութեան վրայ :  
Տկարներն աւելի պէտք ունին մաքուր օդի՝  
քան ուրիշներ . սա գեղ մ'է՝ և միակ դեղը, գու-  
ցէ, որ կազդէ առանց բնականին (մարմնոյ զօրու-

թեանց) օգնութեան, առանց անոր ուժը գործա-  
ծելու, ուստի և վերջին աստիճան կարեւոր է այս  
մասին ամեն զգուշութիւն : Ամբողջական ուժա-  
թափութեան յարմար օդն է՝ չոր և բարեխառն  
օդ . խոնաւ, շատ տաք օդը վտանգաւոր է . այս  
տեսակէն հիւանդ մը գիտեմ՝ որ օդը սաստիկ  
տաքցած ատեն՝ բոլորովին ուժաստատ կ'ըլլայ, և  
որուն առողջական վիճակն աւելի կամ նուազ ջե-  
րտա օրերուն հետ կը փոխուի : Սաստիկ ցուրտ օ-  
դէն աւելի քիչ կը վախցուի, և այս սղ բնական  
է . տաքութիւնը կը թուլցնէ արդէն շատ թոյլ  
մանրաթիւերը, եւ չափազանց հալած հիւթերը կը  
լուծէ . ցուրտը՝ ընդհակառակն՝ կը դարմանէ այս  
երկու չարիքները :

Օդին մէկ ուրիշ էական յատկութիւնն է՝ ծան-  
րացած չըլլալ վնասակար մասնիկներով, կորուսած  
չըլլալ՝ մարդաբնակ տեղերու մէջ մնալով՝ այն տե-  
սակ մը կենդանարար յատկութիւնը որ նմա միակ  
ազդուութիւն տուող բանն է՝ և զոր կրնամք կո-  
չել տնկոց և անասնոց հաւասարապէս անհրաժեշտ  
կենսական ոգին . այս տեսակէն է այն օդը զոր կը  
ծծեմք օդասուն, բուսաւէտ և ծառախիտ գեղի  
մը մէջ : Ի՛հիւանդն բնակեցնել պէտք է, կ'ըսէ Ա-  
րիթէոս, մարդերու, ազբիւրներու և առուակաց  
մօտ . ասոնցմէ դուրս ելած բուրումն և այս ա-  
ռարկայից ազգած զուարթութիւնը կը զօրացնեն  
հոգին, կը կենդանացնեն ուժը, և կը նորոգեն  
կեանքը : Քաղաքի օդը՝ անգաղար ներշնչուելով և  
արտաշնչուելով, միշտ ծանրացած կարգ մը շոգինե-

րով, գարշահոտութեամբ՝ երկու անպատեհութիւն միանգամայն ունի. նախ՝ քիչ կենսական զօրութիւն կը պարունակէ, երկրորդ՝ մլասակար մասնիկներով բեռնաւորուած է: Իսկ գեղի օդը ասոր հակառակ երկու յատկութիւններ ունի. կոյս օդ մ'է սա, և լի տնկոց ամենաթոշուն, հաճելի, ամուրաբար հիւթերով և գետնի շոգիով որ ինքնին խիստ առողջարար է: Սակայն անօգուտ է լաւ օդի մէջ բնակութիւն հաստատել՝ երբ մարդ օդը չծծէ: Սենեակներու օդը՝ եթէ շարունակ չնորոգուի՝ գրեթէ ամեն տեղ նոյնն է. այն ատեն փոփոխութիւնն ուրիշ բան չըլլար՝ բայց եթէ քաղաքի գոց սենեակէն անցնիլ գեղի գոց սենեակը:

Արձակ դաշտերու վրայ միայն հնար է վայելել առողջարար մթնոլորտի մը բովանդակ առողջարարութիւնը: Աթէ խօթութեան կամ տկարութեան պատճառաւ կարելի չըլլայ ի դաշտ փոխադրուիլ՝ պէտք է, օրը մէկ քանի անգամ նորեգել սենեկին օդը՝ ոչ թէ պարզապէս բանալով դուռը, պատուհանը՝ որով քիչ կը նորոգուի՝ այլ սենեկին մէջ օդոյ հեղեղ մը մտցնելով՝ և այս կ'ըլլայ՝ մէկ քանի հակառակ տեղերէ օդ ներս առնելով: Չկայ հիւանդութիւն մը որ չպահանջէ այս զգուշութիւնը. բայց պէտք է զերծ պահել հիւանդը օդոյ չափազանց ներդործութենէն՝ և այս ալ դժուար բան մը չէ: Նոյնպէս վերջին աստիճան կարելոր է առաւօտեան օդը ծծել. անոնք որ ասկէ զրկուելով՝ կը մնան չորս պատի մէջ խզգըռուած մթնոլորտով՝ կամաւ կը հրաժարին ամենէն

հաճելի, և դուրսէ ամենէն զօրացուցիչ դեղէն: Գլխերուան զովութիւնը դարձուցած է օդոյն՝ անոր ամբողջ կենսական յատկութիւնը, և ցօղը՝ որ քիչ քիչ կը շոգիանայ՝ բեռնաւորուած բոլոր բալասանով ծաղիանց՝ որոց վրայ կեցած է՝ զայն ըստուգիւ դարմանական կ'ընէ: Մարդ կը ծփայ տընկոց հոյզի մը մէջ՝ զոր անդադար կը ծծէ՝ և որու բարերար ազդեցութիւնը անհնար է ուրիշ բանի հետ փոխանակել: Համբատութիւն, զովութիւն, կորով, ակտրժակ զոր մարդ այս պատճառաւ կ'ըզգայ բոլոր օրուան մէջ, ամեն մարդու գիտցած փորձն են՝ իմ ամեն ըսելիքներէն՝ աւելի զօրաւոր: Գեռ վերջերս տեսայ ասոր խիստ զգալի արդիւնքը քանի մը ակտաւոր անձանց՝ մանաւանդ ակտոնդանոտներուն (Վերազը) վրայ: Առոնք երբ առաւօտեան օդը ծծէին՝ շատ աւելի զուարթ կ'զգային զիրեք օրուան մնացած ժամանակ, և զանոնք տեսնելու վարժուող անձի մը շատ դիւրին էր հասկընալ այս նշանէն թէ՝ որչափ կարելոր է այս ազդեցութիւնը ողնայարի ծիւրութեամբ հիւանդացողներուն՝ որք խիստ յաճախ սեւամաղձոտ կ'ըլլան: Չուարթութեան դարձը միայն ինքնին կը ցուցնէ անխաբ կերպով՝ առողջութեան մէջ ընդհանուր բարւոքում մը:

## ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

Կերակրոց ընտրութեան մէջ հետեւեալ երկու կանոններով ընթանալու է: Միայն այնպիսի կե-

րակուրներ ուտել՝ որք պզտիկ զանգուածով շատ սնունդ պարունակեն՝ և դիւրաւ մարսուին : Զգուշանալ անոնցմէ՝ որոնք բարկ համ ունին : Հարկ է ստամոքսին դարցնել իւր բոլոր զօրութիւնը , և չկայ բան մը որ աւելի եղծէ կենդանական մանրաթելին զօրութիւնը՝ քան բռնի ձկտում մը . այսպէս՝ երբ կերակրոց շատութեամբ ստամոքսը պլրուելի՝ ամեն օր կը տկարանայ . ասկէ գտա՝ եթէ շատ լինայ՝ տկար անձինք անճրկում , անձկութիւն , տկարութիւն և մեղմաղձութիւն կլինան , որ իրենց հիւանդութիւնը կը սաստկացնէ : Այս երկու անպատեհութեանց առաջքը կ'առնուի նշանակած կերպովս ընտրելով կերակուրները՝ և ամեն անգամին քիչ՝ բայց յաճախ ուտելով : Անհրաժեշտ է՝ որ իրենց պարունակած սնուցիչ ազդեցութիւնը դիւրաւ հաղորդեն : Ստամոքսը չէ կարօզ մարսել ինչ որ դժուարամարս է , իւր վերջին աստիճան տկար գործունէութիւնը բոլորովին կը ջնջուի կերակուրներով՝ որք կամ շատ կարծր են՝ կամ անոր ուժը տկարացնելու բնութիւն ունին :

Այս սկզբանց յենելով դիւրին է յարմար և անյարմար կերակրոց ցուցակ մը շինել : Վերջի դասին կը վերաբերին՝ բնականաբար խիստ և անմարսելի մետր , ինչպէս են խոզենին , բոլոր ծեր կենդանիներունը , ինչպէս անոնք՝ զորս արհեստով կարծրացուցեր են աղի՝ կամ ծուխի միջոցաւ , և որք այս պատճառաւ բարկ համ ստացեր են . այն միտեր՝ որ շատ իւղոտ են . ուրիշ ո եւ իցէ իւղեր՝ որք ստամոքսին մանրաթելերը կը թուլցընեն ,

մարսիչ հիւթոց արդէն տկարացած գործունէութիւնը կը նուաղեցնեն , անմարսելի կը մնան , խրցումն կը բերեն , իրենց մնալովը կծու բնութիւն մը կստանան , և շարունակ գրգռութիւն պատճառելով յառաջ կը բերեն անձկութիւն , խիթ , քնհատութիւն , սրտի գոցուիլ , տենդ : Զկայ բան մը՝ ուրկէ աւելի զգուշութեամբ հրաժարիլ պարտաւորին տկար ստամոքսի տէրեր՝ որչափ իւղոտ կերակուրներէ . խմորեղէններ , մանաւանդ եթէ իւղով չաղուած ըլլան՝ ուրիշ տեսակ դժուարամարս կերակուրներ են՝ և անտանելի՝ տկար ստամոքսներու : Բանջարեղէնները՝ ուռեցք պատճառելով կը պրկեն ստամոքսը , արեան շրջանը կ'արգիլեն միանգամայն մերձակայ մասերուն մէջ՝ և վնասակար կը դառնան . այսպէս են՝ ընդհանրապէս ամեն տեսակ կաղամբները , փոճոկաւոր ընդեղէնները , և անոնք՝ որք սաստիկ բարկ համ և հոտ ունին , յատկութիւն մը՝ որով աւելի վնասակար կըլլան՝ բացի իրենց պատճառած փուքէն :

Պտուղները՝ որք այնչափ առողջարար են ծանր և բորբոքախառն հիւանդութեանց , խցումներու , մանաւանդ լեարդի և ուրիշ շատ հիւանդութեանց մէջ , ամենեւին չեն գար այս ախտերուն . այլ կը տկարացնեն՝ կը թուլցնեն , կը ջլատեն ստամոքսին զօրութիւնը , կը յաւելուն արեան լուծումը՝ որ արդէն շատ ջրոտած է . անոնք անկատար մարսուելով՝ կ'եփին ստամոքսին և փորոտեաց մէջ , և այս եփը սաստիկ փուք կը սլաճաւէ՝ որուն կը յարդրէ ահագին ձկտում , որով արեան շրջանը բո-

լրովին կը խանգարի: Պտուղները՝ նոյնպէս կը թողուն մարտողութեան նախնական աւելներուն մէջ թթու. նիւթ մը՝ որ կրնայ շատ ցաւալի հետեւանք ունենալ. ուստի պէտք է բոլորովին հրաժարիլ անոնցմէ: Հում բոյսերը, քացախը, ազդեալուրը միեւնոյն անպատեհութիւններն ունին, ուստի անոնցմէ եւս հրաժարիլ պէտք է:

Թէպէտ արդիւրեւ կերակրոց ցուցակը երկար է՝ ներելի կերակրոցն աւելի եւս երկար է: Ասոր մէջ կը գտնուին մատաղ, աղէկ տեղեր արածած և լաւ սնած անասնոց մսերը. այսպէս են մանաւանդ հորթին, մատաղ ոչխարին, տղայ եզան, վառեկի, աղաւնիի, հնդկահաւի, կաքաւու մսերը: Արտոյտը, սարիկը, լրամարգ, ուրիշ որսական մսերը թէպէտ բոլորովին չեն արգելուիր՝ անխափր ամեն օր ալ ներելի չէ ուտել: Նոյն կարգէն է և ձուկը:

Մսին ոչ միայն տեսակին ընտրութիւնը՝ այլ նաեւ եփը մեծ գգուչութեան պէտք ունի: Ամենէն աղէկ կերպն է՝ մաղմաղ կրակով խորովել՝ որ անոնց հոյզը մնայ և չչորնայ, կամ զանոնք իրենց բուն աւելով եփել՝ ծանր ծանր:

Առատ ջրով խորոված մսերը՝ իրենց բոլոր սքնունդը կուտան ջրին՝ և սնուցիչ յատկութիւնը կը կորուսանեն. շատ անգամ ուրիշ բան չմնար՝ այլ միայն մտտ մանրաթերթ, զուրկ իրենց հոյզէն՝ և ջրով ծանրացած, ակտրժակի անհամ՝ և ստամոքսի անմարսելի: Շատ անգամ կը տեսնուի՝ որ սկար մարդիկ՝ որչափ ալ քիչ ուտեն անկէ՝ ըս-

տամոքսի սանտիկ նեղութիւն կզգան: Միտերը որչափ վնասուի ըլլան՝ այնչափ նուազ կը դիմանան այս կերպ եփուելուն. այս պատրաստութիւնը՝ հիւանդաց համար՝ խիստ մտերու միայն կը յարմարի՝ որպէս զի անոնց օգտակար մասը հանուի:

Միւր որչափ խնամով եփուի՝ դարձեալ շատերու դժուարամարս կուգայ. այն ատեն մարդ կատիպուի մսին հոյզը միայն տալ անոնց: Միւր թեթեւ մ'եփելէ յետոյ կը քամեն. բայց որովհետեւ ասոր հոյզը շուտ ալ կ'աւրուի՝ պէտք է հետը կտոր մը հաց և պուտիկ մ'ալ կիտրոնի հոյզ խառնել, և կամ քիչ մը գինի: Ասիկա ամենէն սնունդարար խառնուրդը կըլլայ: Եթէ քանի մը եփած խեցեփին ճզմուին այս մսի ջուրին մէջ, անոր համը կ'աղնուացնեն և գուցէ աւելի զօրացուցիչ կընեն. բայց ատոնք ալ երկու անպատեհութիւններ ունին. նախ՝ որ գրգռիչ են քիչ մը, երկրորդ՝ արգանակը աւելի շուտով աւերուելու ենթակայ կընեն. ուստի այս երկու նկատմամբ գգուչութիւն ընելու է: Հացը և բուսեղէնները չունին յատկութիւն փոքր զանգուածով մեծ արտնակ սնունդ պարունակելու, բայց իրենց գործածութիւնը՝ մանաւանդ հացինը անհրաժեշտ է՝ ոչ միայն առաջին ատենելու համար շարունակ միս ուտելէն գալիք գգուանաց՝ այլ նաեւ արգիլելու համար փտութիւնը՝ որ մատկերութեան մէկ հետեւանքը կ'ըլլայ՝ եթէ նա չխառնուի բուսականով: Եթէ այս գգուչութիւնը չըլլուի՝ շուտով նախնական խողովակներուն մէջ դուրս կ'եննեն ինքնածին ալիալի-

ներ (տեսակ մ'աղեր) և ասոր ետեւէն գալիք բուրբ գէշութիւններ : Այս սննդեան եղանակէն ամենամեծ վնասներ հասած են՝ փորձով գիտեմ՝ տրկար անձանց՝ որոց ասոր հետեւելու խրատ տրբուած էր : Այս բանին ամենէն սովորական աստանիչերէն մին է՝ ծարաւ՝ որով կ'ատիպուին ջուր խմել չարունակ, և այս կը տկարացնէ զիրենք . ասկէ զատ՝ ջուրը դժուարաւ կը խառնուի մարմնոյ աւիչներուն հետ, վասնզի այս խառնուրդը կատու ունի նուրբ խողովակներէն՝ որք շատ թոյլ են, և եթէ՝ դժբաղդարար, ինչպէս յաճախ կը պատահի՝ քիչ շարժում ընող հիւանդաց, երիկամանց գործունէութիւնը նուազի՝ հեղուկները կանցնին մորթային հիւսքին մէջ և նախ՝ ջրալից ուռեցքներ յառաջ կը բերեն, ապա ամեն տեսակ ջրդողութիւններ :

Այս վտանգներէն վախ չմտար՝ եթէ միշտ խառնուի բուսական սննդաութիւնը կենդանականին հետ : Ամենէն ընտիր խտեղէններն են՝ դալար արմատներ, եղերդի (*հիլտոյս*) տեսակներ, կանկառ և ծներեկ (*գոռզոսնուգ*) : Կան այնպիսիներ՝ որք թէեւ կակուղ են՝ սակայն կը նեղեն, վասնզի չափազանց կը զովացնեն, ստամոքսի ուժը կը թրմբեցընեն :

Ալիւր պարունակող հունտեր՝ եթէ յարգարուին և մտի ջուրով կաթնապուրի տեսակ եփուին՝ շատ ախորժահամ կերակուր կ'ըլլան . այս կերակուրը սնունդի երկու դասերուն (մեղէն և խտեղէն) մէջ գտնուած ամենէն սրատուական մասը կը պա-

րունակէ, և խառնուրդը առաջըր կառնու երկու կերակուրներէն (բուսական, կենդանական) զատ զատ տրուելով արտադրուելիք վնասին . արգանակը չթողուր որ ալիւրը քացիկ, ալիւրը չթողուր որ արգանակը փտի : Կիտողութիւն ընող հեղինակներն ուշադրութեամբ կարգացողը կը տեսնէ՝ որ Եւրոպայի հիւսիսային կողմը հիւանդութիւններն աւելի գէշ են՝ քան թէ մէջ տեղուանք . պատճառն այն չէ՞՞ արդեօք որ հիւսիսայիններն աւելի միս կուտեն քան ընդեղէն :

Վերը պտուղներուն վրայ դրած արգելքէս չը հետեւիր, որ ստամոքսի քիչ շատ զորութիւն տակաւին ունեցողները՝ երբեմն երբեմն քիչ մը բան չուտեն՝ տեսակին և հասունութեանն ուշադրութիւն ընելով . ջրոտ պտուղներն այնչափ աղէկ չեն դար :

Չուերը՝ կենդանական սնունդէն են, և վերջին աստիճան օգտակար . չափազանց կը զօրացնեն և դիւրամարս են, սա պայմանաւ որ քիչ՝ կամ բնաւ չեփուին՝ վասնզի երբ ճերմակը կարծրանայ՝ ալ չը լուծուիր . ծանր, դժուարամարս կ'ըլլայ, և չզօրացներ . ան ատեն շատ մարսող՝ և ոչ թէ բռնաւ չը մարսող ստամոքսի կերակուր կ'ըլլայ . հաւկիթ ուտելու ամենէն լաւ կերպն է՝ հաւէն դուրս իյնալուն պէս կլնել՝ չեփած, կամ թերխաշ ուտել, երկու երեք անգամ եռացած ջրի մէջ խօթելէ յետոյ, կամ հարելով՝ չեռացող՝ այլ տաք արգանակի մէջ :

Վերջապէս՝ վերջին տեսակ մը կերակուր ալ կաթն է . սա իր վրայ կը միացնէ ամեն պահանջ-

ուած յատկութիւններ, վախնալու բան մը չունի .  
ամենէն պարզն, վարսելու ամենէն հեշտն և ամե-  
նէն արագ կաղզուողն է . ի բնութենէ կազմ  
պատրաստ ըլլալով արհեստական պատրաստու-  
թեամբ աւրուելու վախ չունի . անդարար է՝ մտի  
հիւթին պէս՝ և նեխութեան ենթակայ չէ անոր  
պէս . ծարաւութեան առաջքը կ'առնու, թէ կե-  
րակուրի և թէ խմելիքի տեղ միանգամայն կը  
բռնէ . ամեն անջատմունք կ'ողբերէ, հանդարտ  
քնոյ կը պատրաստէ . միով բանիւ այս պարագա-  
քին մէջ պահանջուած ամեն պայմանները կատա-  
րելու յարմար է : Ինչո՞ւ համար ուրեմն չենք գոր-  
ծածեր զայն միշտ ամեն կերակուրի տեղ . - ասոր  
յատուկ պատճառաւ մը միայն, որ շատ անգամ  
անոր ազդեցութիւնը կ'այլայլէ՝ և յուսացուածէն  
բոլորովին տարբեր արդիւնք մը յառաջ բերել կու-  
տայ անոր :

Այս պատճառը անոր ենթակայ եղած մաս-  
նաւոր լուծումն է : Եթէ շուտով ջմարսի, եթէ  
երկար ատեն մնայ ստամոքսին մէջ՝ կամ երկար ա-  
տեն չը մնալով խակ՝ հոն իւր լուծման յարմար  
նիւթեր գտնէ՝ ճիշդ նոյն փոփոխութիւններ կը  
կրէ՝ ինչ որ կը պեսնեմք անոր վրայ մեր աչաց  
առջեւ . կողեղէն, պանրային և չճային մասերը կը  
բաժնուին իրարմէ . շիճուկը շուտով փորհարու-  
թիւն կը բերէ, երբեմն մէգի կամ արտաշնչման  
ճամբայներէն կ'անցնի դուրս կերնէ առանց սը-  
նուցանելու . միւսը մասերը՝ եթէ մնան խակ ըս-  
տամոքսին մէջ՝ քիչ ատենէն կ'աւրեն զայն . ակս-

տեր, ուռեցքներ, թալուկ, խիթք կը պատճառեն .  
եթէ առջի բերան ասոր անհանգստութիւնը չի-  
մացուիր՝ պատճառն այն է՝ որ փորոտիներէն կը  
անցնին՝ ուր կրնան թէպէտ ժամանակ մը մնալ  
առանց զգալի վնաս պատճառելու՝ սակայն հոն  
արտաքոյ կարգի բարկ համ մը կ'ստանան, և ժա-  
մանակէ մը վերջ այնպիսի վնասներ յառաջ կը բե-  
րեն՝ որ կաթին երկար մնալովն նուազ փոսնգա-  
ւոր չեն ըլլար :

Այսպէս, կրնամք իբրեւ հաստատ կանոն մը  
ասմաննել՝ որուն զգուշութեամբ հետեւիլ պէտք է՝  
երբ ծանր պարագայներու մէջ կաթ ուտել հրա-  
մայուի՝ թէ՛ թէպէտեւ կաթն ամենաողիւրամարս  
կերակուր մ'է՝ սակայն իւր դժուարամարսութիւնը  
ծանր հետեւանաց պատճառ կ'ըլլայ : Աերբ զուր-  
ցեցինք այն դժուարութիւնները զորս Պրոհաւ կը  
գտնէր անոր գործածութեան մէջ . բայց անոնք  
որչափ ալ մեծ ըլլան՝ օգուտներն այնչափ աւելի  
մեծ են՝ որ կ'արժէ ամեն հնարք ի գործ դնել առ-  
ջիններուն յաղթելու՝ և բարեբաղդաբար միջոցներ  
ալ չեն պահալիր : Ասոնք երկու կարգի կը վերած-  
ուին . - կերակրոյ մասին ուշադրութիւն՝ և դեղեր .  
վերջիններուն քննութիւնը յաջորդ մէկ հաստու-  
ածովը կ'ընեմք :

Կերակրոյ ուշադրութիւնն է . 1. կաթին ընտ-  
րութիւնը . ինչ տեսակ կաթի որոշում տրուի՝ պէտք  
է զայն մատակարարող էգը առողջ և լաւ խնամ-  
ուած ըլլայ . 2. կաթ խմելու միջոցին պէտք է ըզ-  
գոյշ կենալ այն կերակուրներէն՝ որ զայն կրնան

թթուեցընել, ինչպէս են՝ ամեն տեսակ պտուղ-  
ներ՝ թէ հում՝ թէ եփուեն, և ընդհանրապէս ամեն  
թթուահամ բաներ. 3- պէտք է զայն խմել ու-  
րիչ կերակուրներէ հեռաւոր միջոցներով՝ զի բնաւ  
խառնուող չսիրեր. 4. - քիչ խմել ամեն անգա-  
մուն. 5. - ստամոքսը, փորին վարը և սրունքները  
վերջին աստիճան տաք պահել. 6. - մինչեւ իսկ ամենէն  
ընտիր կերակուրները խիստ չափաւոր ու-  
տելը ( առանց այս վերջին զգուշութեան բոլոր  
միւսներն անօգուտ են ): Կաթ խմած միջոցին ըս-  
տամոքսը հոգնեցնել չգար. ամենափոքր աւելորդ  
բեռը, ամենաթեթեւ անմարսողութիւնը հոն ա-  
պահանութեան սերմ մը կը թողու՝ որ անմիջա-  
պէս կ'աւրէ կաթը, և ամենէն ազնուագոյն կե-  
րակուրն շատ անգամ սոսկալի թոյնի կը փոխարկէ,  
կամ գոնէ միշտ մլասաբեր կը դարցընէ :

Ի՞նչ տեսակ կաթ նախամեծար է. այս հարց-  
ման պատասխանելու համար՝ կաթերու զանազան  
տեսակաց քննութեան պիտի չձեռնարկեմ. ասիկա  
գործս աւելորդ զարտուղութեամբ բեռնաւորել  
կըլլայ. ասոր վրայ արդէն բաւական օժանդակ  
տեղեկութիւններ ունիմք : Այսօրուան գործած-  
ուած կաթերն են՝ կնկան, այծին և կովուն : Իւրա-  
քանչիւրն իւր տարբեր յատկութիւններն ունի : Այս  
յատկութիւններն իրարու հետ բաղդատուելով և  
հիւանդութեան աստիճանն ու տեսակը որոշուելով  
միայն կրնայ վճռուիլ ի՞նչ տեսակ կաթ գործա-  
ծելու հարկը : Քիչ պարագայ կը պատահի՝ յորում  
կովու կաթը ուրիշ ամեն կաթի տեղ չբռնէ : Կնոջ

կաթը ընդհանրապէս աւելի զօրացուցիչ կը նը-  
կատուի. ասիկա ամենէն մեծ վարպետներուն  
կարծիքն է. բայց այս կարծիքը խախուտ հիման  
մը վրայ կը դնեն՝ այն է՝ կնոջ՝ միս ուտելու սո-  
վորութիւնը, առանց խորհելու՝ որ դարձեալ ի-  
րենք նախապատիւ կը համարին կաթն ուժեղ  
գեղջկուհիի մը որ բնաւ՝ կամ խիստ քիչ միս կու-  
տէ, և միայն հացով ու բանջարով կ'ապրի : Սա-  
կայն կարծեմ սա օգտակար կերպով կրնայ փոր-  
ձուիլ. սորա արտադրած գեղեցիկ բոյժերը տա-  
րակոյս չեն թողուր իւր ազգուութեանը վրայ :  
բայց իրեն մտանաւոր անպատեհութիւնն ունի,  
այսինքն՝ բուն ծիծէն խմել պէտք է : Կալիէն ար-  
դէն ճանչցած է այս զգուշութեան հարկը, և ծաղ-  
րելով զանոնք որ չեն ուզեր այս բանին հնազան-  
դիլ՝ կը խրկէ զանոնք իշոռ պէս մատակ իշոռ կաթ  
խմելու : Բայց այս կաթին ամանը այսինքն ստինք՝  
չի՞ դրդուեր այն տենչը զոր թմրեցնել կուզեմք, և  
ենթակայ չե՞մք ըլլար նորոգել տալու այն իշխա-  
նին դիպուածը որու պատմութիւնը Կապիվաջչիօ  
աւանդած է մեզ : Այս իշխանին երկու սանտու  
բռնեցին. ասոնց կաթն քանի մ'ամսէն այն աս-  
տիճան գերազանց աղբեցութիւն ըրաւ՝ որ իշխանն  
զանոնք երկուքն ալ ի պահանջել հարկին նորէն  
իրեն թարմ կաթ տալու փնձակի մէջ դրաւ : Կր  
կարծուի թէ իշու կաթը կնոջ կաթին ամենէն  
ւելի նմանն է. բայց թող ներուի ինձ ըսել՝ որ  
ասիկա աւելի կարծեսց՝ քան փորձառութեամբ  
արդիւնք է : Սա ամենէն աւելի ջրալիցն՝ և ըստ

այսմ՝ թուլացուցիչն է . ցաւալի սխալ մ'է զայն ամենէն զօրացուցիչ կարծելը : Ամենօրեայ դիտողութիւններ հակառակը կապացուցանեն և կը յայտնեն թէ՛ ոչ միայն ամենէն ազդուն չէ՛ այլ գուցէ ամենէն նուազ զօրացուցիչն է : Ես աստի միշտ լաւ արդիւնք տեսած չեմ, և մինակ ես չեմ : Ինձ այնպէս կը թռնի, կը գրէր ինձ Պ. Տը Հալլէն, թէ իշոյ կաթը քիչ ակզամ սպաստած օգոտը կոտայ : Անօգտակարութիւնն ալ մեծ պակասութիւն մ'է՛ այնպիսի դեղի համար՝ որոյ վրայ ամենէն ծանր հիւանդութեանց բուժման յոյս կը դրուի : Պ. Հօֆման կը հրամայէր զայն այնպիսի պարագայից մէջ՝ երբ սպառում և տենչ միանգամայն կայ :

Կերակրոց վերաբերեալ խրատները չվերջացուցած յառաջ բերեմ Արադիտի խորհուրդը, այսինքն թէ՛ զանոնք իրար խառնելու չէ :

Ամեն մարդ՝ առանց այս խրատին վրայ երկար բացատրութեան հարկ թողլու, գիտէ թէ՛ ո՛րչափ անհնար է բոլորովին տարբեր կերակրոց միեւնոյն ժամանակի մէջ կատարելապէս մարտուիլ : Այս խառնուրդը այն պատճառներէն մին է՝ որք կը վտանգեն ամենէն կորովի մարդոց առողջութիւնը՝ և կ'սպաննեն տկարները . ուստի որչափ զգուշութեամբ խորշին ասկէ՛ դարձեալ քիչ է :

Ուրիշ զգուշութիւն մ'ալ որ նուազ կարեւոր չէ . և սակայն բոլորովին անտես եղած է՝ կերակուրը խնամով չծամելն է . ասիկա այնպիսի հարկ մ'է՛ զոր ամենէն զօրաւոր ստամոքսներ չեն կրնար երկար ժամանակ անտես ընել, առանց զգալի

կերպով տկարանալու, և տկարներն՝ առանց բոլորովին անկատար մարսելու : Երկար դիտողութիւն ըրած ըլլալու է մէկը որ հասկնայ թէ ինչ աստիճան կարեւոր է առողջութեան՝ խնամօք ծամելը : Ստամոքսի ամենէն յամառ ցաւերու և խիստ հինցած թուլութիւններու՝ միայն աս ուշադրութեամբ բժշկութիւնը տեսած եմ : Ասոր հակառակ տեսած եմ խիստ առողջ մարդոց հիւանդանալը՝ երբ իրենց ակռաները մնասուելով՝ չէին կրնար կատարելապէս ծամել կերակուրը, և որոնք այն ատեն կ'սկսէին իրենց առողջութիւնը գտնել՝ երբ ակռայնին բոլորովին թափելով լինտերնին կը խստանային և ակռայի սրչոտն կը վարէին :

Ըմպելիներն ալ գրեթէ կերակուրներու չափ կարեւոր մասն են ասրելու եղանակին :

Պէտք է խորշիլ այն ըմպելիներէն՝ որք կրնան աւելցնել տկարութիւնը և թուլութիւնը, մնացած քիչ շատ մարտող զօրութիւնը նուազեցնել, հիւթերուն բարկութիւն հաղորդել, և արդէն սաստիկ գրգռեալ ջղային դրութիւնն աւելի եւս շարժել : Բոլոր տաք ջրերը առաջին թերութիւնը կ'արտադրեն, թէյը՝ ամենքը միանգամայն . խահուէն՝ վերջին երկուքը . ուստի մեծ զգուշութեամբ պէտք է ատնցմէ հրաժարիլ :

Ոգելից ըմպելիներ՝ որ հարեւանցի նայուածքով՝ այնպէս կերեւին թէ օգտակար են, որովհետեւ՝ ճիշդ տաք ջրի հակառակ ազդեցութիւն ունին՝ որուն վտանգը յիրաւի կը նուազեցնեն՝ եթէ քիչ մը անոր հետք խառնուին՝ ասոնք ալ ուրիշ

մեծ անպատեհութիւններ ունին, որոց համար պէտք է խորշել անոնցմէ՝ կամ գոնէ խիստ քիչ անգամ գործածել զանոնք: Իրենց գործողութիւնը խիստ բուռն և խիստ վաղանցիկ է. անոնք զօրացնելէ աւելի կը գրգռեն և եթէ երբեմն կը զօրացնեն՝ իրենց յաջորդող տկարութիւնն աւելի մեծ կ'ըլլայ քան չխմած ժամանակին. ասկէ զատ՝ ըստամոքսի գնտիկներուն այնպիսի կարծրութիւն մը կուտան՝ որ անոնցմէ կը բառնայ ակործակի կարեւոր եզած զգայունութեան աստիճանը. գարձեալ կը գրկեն մարտիչ հեղուկներն այն լոյծ բնութեանէն՝ որ անհրաժեշտ է անոնց անօթութեան զգացողութեանն օգնելու համար, ասոր համար է որ խման մարդիկ ուտելու զգացողութիւն չունին: Այն ակնինք որ, կ'ըսէ մեծանուն հեղինակն՝ զոր յիշեցի, ակնն որ կը խմեն կերակորէ վերջ, մարտդակն տկարութեանց օգնելու մտք, ասկի զատ ուրիշ կերպ չիկն կրնար մտածել ակոր հակառակն ընելու՝ և մարտիչ գորտիժիւնները եղծելու համար:

Ամենէն ըստ ըմպելին է՝ խիստ յատակ ջուր կիտուակէս խառնուած այնպիսի գինիի հետ՝ որ ոչ գլուխ զարնէ և ոչ թթու ըլլայ. առաջինը ըզգալի կերպով կը գրգռէ ջրային դրութիւնը, և յառաջ կը բերէ հիւթերուն մէջ վաղանցիկ անօթութիւն որուն հետեւութիւնն է պրկել նրբերակները՝ յետոյ աւելի թուլցնել և հիւթերուն քայքայումը աւելցնել. երկրորդ տեսակն կը տկարացնէ մարտողութիւնը, կը գրգռէ՝ և մէզի չափազանց առատութիւն կուտայ, որով հիւանդները

ուժաթափ կ'ըլլան: Ամենէն ընտիր գինիներն անոնք են՝ որ նուազ աղ և ոգի ունին, աւելի հող և իւղ ունին, և ասոնք են՝ որ կը կոչուին ազնիւ և պարարտ գինի. այս տեսակէն են՝ Պուրկօնըյի, Ռօնի, Նէօշաթէլի, քանի մը տեսակ կարմիր գինիներ, կրավի հին ճերմակ գինիներ, Բօնթագիէն ընտիրները, Սպանիոյ, Փուրթուկալի և Գանարեան կղզեաց գինիներ. և գտնել հնար եղած տեղը Թօքէյի, որ աշխարհիս բոլոր գինիներէն գուցէ գերազանցն է թէ առողջարար և թէ զուարթ յատկութեանց մասին: Սովորական գործածութեան համար Նէօշաթէլինէն ընտիրը չկայ:

Աղէկ ջուր չգտնուած տեղը՝ հնար է զայն ուղղել թորելով, մէջը երկաթ նետելով կամ մէջը համեմանք թրջելով, ինչպէս են՝ կինամոմոն, անխոն, կիարոնի կեղեւ: Հասարակ գարեջուրը վնասակար է. Մեօնը՝ որ թէ սննդարար և թէ զօրացուցիչ մուղ մը (իշխասս) է հուճեցուցող կըրնայ մեծ ծառայութիւն ընել. ոգիով լի ըլլալով՝ գինիի չափ կը կենդանացնէ և անկէ աւելի կը սքնուցանէ, կրնայ թէ խմելիքի և թէ կերակուրի տեղ բռնել:

Օգտակար խմելիքներուն կարգը կրնայ դասուիլ չօրոյաթը՝ որ շատ մասամբ կը վերաբերի կերակրոյ դասին. քարասն իր մէջ շատ սննդարար նիւթ կը պարունակէ՝ և եթէ չաքարի և համեմանքներու հետ խառնուի՝ իբրեւ իւզալից սնունդ իր արտադրելիք վնասին առաջը կ'առնուի: « Կաթով և չօքօլաթը, կըսէ Պ. Լըվիս՝ եթէ գործածուի, ըս-

«տամոքսը չբեռնաւորելու չափ՝ պատուական նա-  
«խաճաչ մ'է սպառման ենթակայ մարդոց : Երեք  
«տարեկան տղայ մը գիտեմ, որ այս հիւանդու-  
«թեան վերջին աստիճանը հասած էր, և ուրկէ  
«ձեռք քաշած էր բժիշկը՝ սակայն աղէկցաւ իւր  
«մօրը ձեռք՝ քիչ քիչ, այլ յաճախ չօքօլաթ մի-  
«այն ուտելով : Ստուգիւ շատ տկար անձեր կան՝  
«որոց կարի պատշաճաբար կրնայ յանձնարարուիլ  
«այս սնունդը : «Շատերու ալ չափազանց կը  
«վնասէ» :

Ընդհանուր կանոնը՝ որ եւ իցէ խմելիքի մէջ՝  
չատէն զգուշանալն է . չափազանցութիւնը կը սը-  
կարացնէ մարսողութիւնը՝ թուլցնելով ստամոքսը,  
մարսիչ նիւթերը խղրելով և կերակուրները լաւ մը  
չմարսուած դուրս նետելով . սա կը թուլցնէ ամեն  
մասերը, կը լուծէ սնուցիչ հիւթերը, յաճախ մէզի  
կամ քրտինքի ենթակայ կ'ընէ՝ որով մարդ կ'ըս-  
պառի : Սպառումէ յառաջ եկած շատ հիւանդու-  
թիւններ տեսայ՝ որոնք մեծապէս թեթեւցան՝ ոչ  
այլ ինչ դեղով՝ այլ միայն խմելիքը նուազեցնելով :

## ՔՈՒՆ

Քնոյ վրայ մեր ըսելիքը երեք կէտի մէջ կամ-  
փոփի . - անոր տեսողութիւնը, յարմար ժամանակը  
և խաղաղ քուն մը քաշելու պէտք եղած զգուշու-  
թիւնները :

Ամեն չափահաս անձի՝ եօթն կամ առ առա-

ւերն ութ ժամ քուն կը բաւէ (1) . ասկէ աւելի քը-  
նանալ կամ աւելի երկար ատեն անկողնի մէջ մը-  
նայն վտանգաւոր բան է . սա ճիշդ կարտադրէ  
այն վնասներ, զորս յառաջ կը բերէ չափազանց  
հանդիստը : Ասկէ աւելի երկար քնանալը միայն  
անոնց ներելի է, որ ցորեկին շատ և տաժանելի  
չարժումներ կընեն . այլ այս կարգի մարդիկ չեն  
աւելի պառկողները . անոնք են ընդհակառակն՝ որք  
ամենէն աւելի նստողական կեանք կանցնեն : Ուստի  
պէտք չէ յիշեալ սահմանէն անցնիլ, բայց միայն  
այն ժամանակ՝ երբ մարդ չափազանց տկարացած  
ըլլալով՝ բաւական զօրութիւն չունի՝ անկողնէն  
երկար ատեն ելած մնալու : Այսպիսի պարագայի  
մէջ կարելի եղածին չափ շատ պառկելու է : Որչափ  
քիչ քնանայ մարդս, կըսէ Պ. Լըվիս, բունն այնչափ  
տանջի քաղցր եւ զօրացողիչ կըլլայ : Ապացուցուած է  
որ գիշերուան օգը ցորեկուան օգէն նուազ ա-  
ռողջարար է՝ և թէ՛ ուժաթափ հիւանդները ի-  
րիկուն աւելի ենթակայ են անոր աղքեցութեան՝  
քան առտուն : Աւստի պէտք է քնոյ զոհել այն  
ժամանակ յորում օգը նուազ առողջարար է՝ որով  
մեզի աւելի վնասակար կ'ըլլայ՝ և յորում մեր  
նողրտը սակաւ ըլլալով՝ մենք աւելի եւս կ'ապա-  
կանենք : Ուրեմն պէտք է կանուխ պառկիլ և կա-

(1) Նշանաւոր բժիշկ եւ առողջաբանութեան  
դասատու Ռիան գաղղիացից կըսէ թէ քնոյ չափը  
չորոշուի . միայն պէտքն է այս մասին կանոն  
տուողը :  
Ծ . Թ :

նուրս ելնել. սա այնպիսի աշխարհածանօթ կանոն մ'է՝ որուն վրայ երկար բարակ պնդելը անհամութիւն կ'ըլլայ. սակայն այնչափ զանց եղած է այս՝ ասոր՝ կարծուածէն աւելի անազին հետեւանքը այնչափ նուազ հասկցած կը թուին մարդիկ՝ որ ներելի է զայն անծանօթ ենթադրելով՝ պնդել անոր կարեւորութեանը վրայ՝ մանաւանդ աստուար մարդոց համար: Եթէ ժամը տասնին պատկիս, եւ պետք չէ որ ասից արեջի ոռչ մնաս, բուն Պ. Լըվիսի խօսքերն են, պետք է ամառը չորսին կամ հինգին ելնես, անոր վեցին կամ եօթնին: Բացարձակապէս հարկ է, կը յաւելու, արգիշն այս հիշուողութեամբ (այսինքն ողնայարի ծիրութեամբ) անտաքչոց առաւօտուն երկար ատեն անկողնին մէջ մնալը: Մինչեւ անգամ կը փափաքի որ առջի քունը անելէն վերջ անկողնէն ելնելու սովորին. և կ'ազատէ թէ այս սովորութիւնը որչափ ալ դժուարին երեւի ի սկզբան՝ քիչ ժամանակէն դիւրին և հաճելի կը դառնայ: Շատ աստուար մարդիկ կան՝ որ առաջին խորունկ և քաղցր քունէն արթնցած ժամանակ առողջ կզգան իրենց անձը և բոլորովին կը թուրան՝ եթէ այնուհետեւ վերստին քնանան. եթէ չպառկին՝ այնչափ ապահով են բոլոր օր առողջ անցնելու՝ որչափ լաւ գիտեն թէ տաղտկալի ժամանակ մը պիտի անցընեն՝ եթէ այս նախկին մրախէն յետոյ՝ երկրորդին անձնատուր ըլլան:

Քունը այն ժամանակ հանդարտ է՝ երբ գրգռութեան պատճառ չկայ. ուստի պէտք է պատճառ չտալ: Ամենէն կարեւոր երեք զգուշութիւն-

ներն են. 1. Շատ տաք օդի մէջ չպառկիլ, և, ոչ շատ՝ ոչ քիչ ծածկուիլ: 2. Պառկած ժամանակ ոտուրները պաղ չ'ըլլան, որ շատ սովորական պատահար մ'է տկար անձերու. և որ՝ շատ պատճառաւ իրենց կը մնասէ. այս նկատմամբ ճշիւ գործադրելու է Հիպոկրատի կանոնը. զով տեղ քնանալ եւ զգողութեամբ ծածկուիլ. և 3. որ ամենակարեւորն է՝ ստամոքսը չբեռնաւորել. չկայ բան մը որ այնչափ աւելի խանգարէ քունը, զայն խռոված, ցաւագին և տկարացուցիչ ընէ՝ որչափ գիշերային դժուարամարտութիւն: Լքումն, տկարութիւն, զգուանք, ծանձրոյթ, հետեւեալ օրը խորհելու և բանի մը պարապելու անկարողութիւնը ասոր անխորշի հետեւանքներն են:

Ընդհակառակն չկայ բան մը որ աւելի ազդու կերպով օգնէ քաղցր, խաղաղ, շարունակ և կազդուրիչ քնոյ մը՝ քան թեթեւ ընթրիքը: Թօքմութիւն, աշխուժութիւն, զուարթութիւն վաղուին, ասոր բնական հետեւանքն են:

Քնոյ միջոցը՝ կըսէ Պ. Լըվիս՝ տաժման՝ և ոչ թէ մարտողութեան միջոցն է. ասոր համար մեծ խտուրտիւն կը բանեցնէ իր հիւանդաց ընթրիքին համար. կը պատուիրէ անոնց՝ և ամենամեծ իրաւամբ՝ իրիկուն բնաւ միս չ'ուտել. միայն քիչ մը կաթ և քանի մը պատառ հաց կը հրամայէ, և այս պառկելէ երկու ժամ առաջ, որպէս զի նախնական մարտողութիւնը աւարտի՝ քնոյ անձնատուր ըլլալէ առաջ:

## ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Մարմնամարզը բացարձակապէս կարեւոր է . տկար անձանց քիչ մը ծանր կ'ուզայ այս , և եթէ տխրութեան հակամէտ են՝ խիստ դժուար է դանոնք ստիպել շարժում ընելու : Սակայն տկարութենէ եկած ախտերը անգործութեամբ չափազանց կ'աւելնան . ստամոքսին , փորոտեաց , նրբերակաց թեւերը կը թուլնան , աւիշները ամեն տեղ կը մօրանան՝ որովհետեւ հաստատուն մասերը բաւական զօրութիւն չունին պէտք եղած մղումը անոնց տալու . ասկէ կը ծագին դադարումներ , խցումներ , գեղղումներ . սննդեան հալումը , տածումը , անջատումը այլ եւս չեն կատարուիր . արիւնը ջրոտ կը մնայ , զօրութիւնը կը պակսի , և ախտին բոլոր նշանները կ'աւելնան : Մարմնամարզը բոլոր այս չարեաց առաջքը կ'առնու՝ արեան շրջանը ոգեւորելով . գործարանային բոլոր պաշտօնները այնպէս կանոնաւոր կը կատարին՝ ինչպէս երբ մարդ իրօք զօրութիւն ունենար . և այս գործարանաց կանոնաւորութիւնը շատ չափեր՝ իրական ոյժ ալ կ'ուտայ . ուստի շարժման արդիւնքն է ուժին փոխանորդել և զայն վերահաստատել : Իւր օգուտներէն մին ալ բացի արեան շրջանի երազումէն՝ այն է՝ որ միշտ նոր օդ վայելել կուտայ : Ով որ բնաւ չը շարժիր՝ կ'ապականէ իւր շրջակայ օդը և վնասարեք կ'ընէ ինքեան . իսկ շարժուն անձը միշտ

կը փոխէ զայն : Շարժումը շատ անգամ դեղի տեղ կը բռնէ . իսկ աշխարհի բոլոր դեղերն ի միասին չեն կրնար շարժման տեղը բռնել :

Առաջին օրերուն զգացուած հոգնութիւնը շատ անգամ կը վնասեցնէ հիւանդները . բայց եթէ այս առաջին խոչընդոտին յաղթելու չափ քաջութիւն ունենան՝ պիտի փորձով հասկնան որ՝ ըստուգիւ այս բանին մեջ է որ առաջին քայլերը դժուար կողմնակալն :

Հետիոտս վարժութիւնը չէ մի միայն օգտակարը . ձիովը խիստ աւելի աղէկ է վերջին աստիճան տկարներուն , կամ անոնց՝ որոց ստորին փորի ընդերները և կուրծքը վնասուած են . եթէ տկարութիւնը խիստ աւելի ըլլայ՝ կառքով շարժագայութիւնն աւելի նախամեծար է , հերիք է որ չափազանց կամաց չ'երթայ կառքը : Երբ եղանակը չը ներքեր դուրս ելնելու՝ պէտք է տունին մէջ շարժում ընել , կամ քիչ մը դժուարին աշխատութեամբ , կամ մարմնամարզի խաղով , ինչպէս է գնտախաղը՝ (1) որ բոլոր մարմնոյն միանգամայն շարժում կ'ուտայ :

Քնոյ , ախորժակի , զուարթութեան վերադարձը շարժման բնական հետեւութիւնն է . բայց

(1) Վօլան . այս խաղը մեր սովորական գնդակի խաղը չէ , այլ սուրկեցիի (մանդար աղանձ) եւ ուրիշ ասոր նման մարմնոց վրայ փետուրներ խօթելով՝ գործիքով մը կը գարնեն անոր եւ նետուն կը նետեն՝ ու այսպէս կը խաղան : Ծ . Թ .

պէտք է զգուշանալ դժուարին վարժութիւն ընելէ՝ ճաշին անմիջապէս վերջ . և կերակուր չուտել՝ երբ վարժութենէ յետոյ տաքցած է մարդ . այլ մարմնամարզը ճաշին առաջ ընել, և կերակուր չը կերած քանի մը վայրկեան հանգչիլ :

## ԱՐՏԱՀԱՆՈՒԹԻՒՆՔ

Արտահանութիւններն կը խանդարին միւս մարմնական պաշտօններուն հետ՝ և իրենց խանդարումը կենդանական մեքենային անկանոնութիւնը կը բազմապատկէ . հարկ է ասոր ուշադրութիւն ընել՝ ժամանակին դարմանելու համար : Մեր խնամոց գլխաւորաբար կարօտ արտահանութիւններն են՝ կկղանք, մէզ, արտաշնչութիւն (միրթի) և թուք : Ասոնք կանոնաւոր պահելու՝ կամ իրենց պէտք եղած վիճակին բերելու համար ամենէն լաւագոյն եղանակն է հետեւել այն պատուէրներուն գործ աւանդեցի ապրելու եղանակին միւս առարկայներուն վրայ : Երբ մարդ այս մասին ճշդապահ ըլլայ՝ արտահանութիւնք՝ որոց առաւել կամ նուազ կանոնաւորութիւնը մարտողութեան լաւութեան կամ յոռութեան օգտաւն է՝ ըստ բաւականին կանոնաւորապէս կը կատարուին : Ամենէն աւելի օգնութեան պէտք ունեցողը՝ իբրեւ ամենէն կարեւորը՝ արտաշնչութիւնն է՝ որ շատ դիւ-

րաւ կը խանդարի տկար անձանց վրայ : Ասոր կօդնուրի՝ կանոնաւորապէս շիւրջով մորթը վրձինով կամ ֆանելայով . երբ այն չափազանց դադրած է՝ դայն ոգեւորելու ամենէն ապահով միջոցն է՝ ամբողջ մարմնոյն վրայ բուրդ հաղնիլ անմիջապէս : Զգուշանալու է չափազանց հազուելէ՝ որպէս զի չըլլայ թէ մարմինը քրտնի՝ որ մեծապէս կը վնասէ արտաշնչման . մարմնոյն նրբուղիները այսպէս բռնադատուելով աւելի տկար կը մնան՝ և յետոյ նրուազ ճշդութեամբ կը կատարեն իրենց պաշտօնը . զգուշանալու է նաեւ քիչ հազուելէ՝ որ նոյնպէս կ'արգիլէ որ եւ իցէ մորթային արտահանութիւն : Մարմնոյն այն մասը զոր ամեն ոք՝ և առաւելեւ տկար անձինք պարտաւոր են տաք պահել՝ ոտուրներն են՝ այս ամենադիւրին զգուշութեան ոչ ոք անհոգութիւն պիտի ընէր՝ եթէ գիտնար թէ ինչ աստիճան կարեւորութիւն ունի սա մարմնոյն մեքենային պահպանութեան մասին :

Ոտքէն յաճախ պաղ առնելը ամենավատթար պարբերական հիւանդութեանց տրամադրութիւն կը բերէ . շատերու վրայ ալ անմիջական ազդեցութիւն կ'ունենայ . սակայն ամենէն աւելի՝ կործարիցաւի, խիթերու և խցումի ենթակայ եղողներն զգուշանալու են ասկէ յառաջ գալու վտանգներէն : Զոհարար քուրմերը՝ որ ստիպուած էին միշտ բոկոտն քալել տաճարի քարայտակին վրայ՝ յաճախ ստիպալի խիթերու ենթակայ կ'ըլլային :

Շողիկը շատ անգամ խիստ առատ դուրս կուգայ տկար անձերէ . լորձուների գործարմանց թու-

լացունք պատճառ կ'ըլլայ այս առատ անջատման :  
 Եթէ հիւանդները շարունակ դայն դուրս թքենն՝  
 ասկէ երկու վնաս կը յառաջանայ . մէկը՝ որ կը նի-  
 հարնան այս արտահանութեամբ , երկրորդ՝ այս ա-  
 Վիլը որ այնչափ կարեւոր է մարտդութեան գոր-  
 ծոյն՝ առանց որոյ սա անկատար կ'ըլլայ՝ կը պակ-  
 սի , որով գործողութիւնը դժուարին և գէշ կ'ըլլայ :

## ԿԻՐՔԵՐ

Վերը տեսնուեցաւ հոգւոյ և մարմնոյ սերտ  
 միութիւնը , և թէ՛ ի՛նչ ազդեցութիւն ունի միոյն  
 բարեկեցութիւնը միւսին վրայ . տեսնուեցան տըխ-  
 րութեան աղետալի հետեւանքները : ուստի գը-  
 րեթէ աւելորդ կը համարիմ յաւելուլ որ խիստ ըզ-  
 գուշանալ պէտք է հոգւոյ անհաճոյ երեւցած ըզ-  
 դացողութիւններէ՝ և թէ վերջին աստիճան կա-  
 րեւոր է անոր միայն հաճելիներ ներկայացնել՝ ա-  
 մեն հիւանդութեանց՝ մանաւանդ ողնայարի մա-  
 շողութեան տեսակ հիւանդութեանց մէջ , որք ըստ  
 ինքեան հակամէտ կընեն զմարդ տխրութեան ,  
 տխրութեան՝ որ յուի չըջանով մը զանոնք աւելի  
 կը սաստկացնէ : Բայց՝ շատ անգամ հիւանդները՝  
 այս ալ դարմանատարութեան մէկ դժուարու-  
 թիւնն է՝ կամաւ անձնատուր կ'ըլլան իրենց հի-  
 ւանդութեան այս ատտանջանին (տխրութեան) ,  
 և մարդ չկրնար զանոնք համոզել որ ջանան ա-

սոր յաղթել : Բաց աստի պէտք չէ ինքզինք խա-  
 րել և կարծիլ թէ զուարթ ըլլալու համար՝ հէ-  
 րիք է որ պատուիրուի զուարթ ըլլալ . ծիծաղը չը  
 հրամայուիր , ինչպէս և շարագիւրուիր . և մարդ այն-  
 չափ չկրնար իւր տխրութիւնը արգիլել՝ որչափ  
 չկրնար արգիլել՝ որ ջերմի ատտազարկը (Ակուիէթ)  
 կամ ակուպի ցաւը չբռնէ : Ինչ որ կրնամք պա-  
 հանջել հիւանդներէն՝ այս է թէ՛ ընդունին տըխ-  
 րութեան դէմ տրուած դեղերը՝ ինչպէս կ'ընդու-  
 նին ուրիշ հիւանդութեանց վերաբերեալները : Այս  
 դեղն ոչ այնչափ ընկերական կեանքն է այս պա-  
 րագայիս մէջ , (տեսանք որ ընկերականութիւնը  
 այս կարգի մարդոց անհաճոյ էր մասնաւոր պատ-  
 ճառներով) որչափ կացութեան փոփոխութիւնը :  
 Աւարկայներու յարաժամ փոփոխութիւնը գաղա-  
 վարաց յաջորդութիւն մը յառաջ կը բերէ՝ որով  
 իրենց միտքը կզբօսնու . իրենց պէտք եղածն ալ  
 այս է : Չկայ բան մը որ աւելի վտանգաւոր ըլլայ  
 մէկ գաղափարի վրայ միայն զրադեղու տրամադիր  
 մարդոց՝ քան անգործութիւնը և դատարկութիւ-  
 նը . ասկէ աւելի վտանգաւոր բան չկայ մանա-  
 ւանդ մեր հիւանդաց (1) . կ'արժէ որ անոնք ա-  
 մեն խնամք ի գործ դնեն խորչելու անգործու-  
 թենէ և ինքնիրեն մնալէ :

Դաշտային մարմնամարզեր , գիւղական աշխա-  
 տութիւններ ուրիշ ամեն բանէ աւելի զանոնք կըզ-  
 բօսցընեն : Պ. Լըվիս կը պահանջէ որ՝ եթէ կա-

(1) Սերմնարափութեամբ հիւանդացողներն Մ. Թ.

րելի է՝ հիւանդն իւր սեռէն միայն առարկայներ տեսնէ, որ, մինակ չմնայ, որ, բնաւ անոնց թող չտրուի իրենց խորհրդոց մէջ ընկղմիլ, որ, իրենց չներուի՝ ոչ ընթերցումը և ոչ մտաւոր այլ աշխատութիւն. ասոնք, կ'ըսէ, բոլորն ալ գլխաւոր պատճառներ են՝ որ կսպառեն միտքը և կ'ուշացնեն բոյժը: Ես իրեն համակարծիք չեմ ամեն ընթերցում արգիլելու մասին: Պէտք է՝ գոնէ իրենց աչքին տկարութեանը պատճառաւ՝ արգիլել որ երկար ժամանակ անընդմիջարար չկարդան, մտադբաղութիւն պահանջող ամեն ընթերցումէ հեռի կենան, փախչին այն տեսակ գրքերէ որ կըրնան իրենց յիշողութեան ներկայել այն գաղափարներ, այն առարկայներ՝ որոց յիշատակը փափաքելի է բոլորովին մտքէ հանել. սակայն այնպիսի ընթերցումներ՝ որք առանց վտանգաւոր պատկերներ իյուշ ածելու, առանց անոնց միտքը շատ սրաղեցնելու կսփոփեն զանոնք հաճելի կերպով՝ և անգործ կենաց սոսկալի ձանձրոյթին առաջքը կ'առնուն՝ ներելի են:

## ԴԵՂԵՐ

Ճիշդ նախընթաց յօդուածի կարգին պիտի հետեւիմ հոս. նախ պիտի նշանակեմ այն դեղերը որոցմէ պէտք է խորշիլ, ապա զանոնք՝ որոց պէտք է հետեւիլ: Կուրս ձգելիք դեղերուն մէկ մասը նշանակած եմ արդէն՝ այսինքն անոնք՝ որք գրգռիչ

տաք և թռչող են: Ասոնց մէկ կարգն ալ կայ՝ որք առջինին բոլորովին հակառակ ըլլալով, նոյնպէս ֆլասակար են, այսինքն արտաքսիչ դեղեր: Արդէն ըսի որ քրտինք, լորձուք, առատ մէզը ու ժաթաթաթ կընեն հիւանդը: Ալ նորէն չպիտի խօսիմ այս արտահանութեանց վրայ. ամեն ոք կ'զգայ թէ զասոնք գրգռող դեղերը պէտք է ի բաց մերժել. կը մնայ քննել արիւն առնուլը և նախնական ուղիներու արտահանութիւնները: Ախտագիտութեան պահանջումն հիւանդին ուժը տեղը բերել ըլլալով՝ դեղերու յարմարիլը կամ ոչ՝ դատելու համար՝ հերիք է նայիլ թէ՛ այս արտահանութիւններն յարմար են այս պաշտօնը կատարելու: Կարճ պիտի խօսիմ: Երկու պարագայ կայ՝ որոց մէջ արիւն առնուլը կը կազդուրէ. ուրիշ պարագայներու մէջ կը տկարացնէ. այսինքն՝ կամ երբ մէկը չափազանց արիւն ունենայ՝ զոր չունին մաշողութեան ենթակայ անձինք, կամ երբ արիւնը բորբոքիչ խտութիւն մը ստացած է, որով իր պէտք եղած պաշտօնին անյարմար ըլլալով՝ արագարար կ'եղծանէ ոյժը. սա կորովի անձերու յատուկ հիւանդութիւն մ'է, անոնց՝ որոնց մանրաթելերը ձիգ են, և արեան շրջանը ուժով է: Իսկ մեր հիւանդները (մաշողականի ենթակայները) ձիգ ասոր հակառակ պարագայի մէջ կը գտնուին. արիւն առնուլը անոնց ֆլաս միայն կը պատճառէ: Անոնք որ կ'աշխատին այսպիսի հիւանդներն առողջացնել արիւն առնելով՝ թող բազըատեն իրենց մեթոսը այն կանոնին հետ, որ հիմուած է ամենէն լու-

սամիտ տեսականին և ամենէն բազմաթիւ ու հասուն գործնական դիտողութեանց վրայ, զորս նոյն իսկ գործին հիմէն կը քաղեմ, և թող հասկնան թէ ինչ յաջողութիւն կրնան սպասել իրենց ընթացքէն:

Նախնական խողովակներ պարպող դեղերը կը զօրացնեն՝ երբ այս ճամբայներուն մէջ այն ատիճան նիւթ ժողոված ըլլայ՝ որ իր շատութեամբը նեղէ բոլոր ընդերաց գործողութիւնը՝ կամ երբ ստամոքսին և նախնական փորոտեաց մէջ նեխած նիւթեր կան՝ որոնք սովորաբար սաստիկ տկարութիւն կը բերեն: (1)

Սյսպիսի պարագայներու մէջ կրնան արտաքսիչները գործածուիլ, այն պայմանաւ՝ որ իրենց հակառակ բան մը չը գտնուի, եթէ ուրիշ միջոցով հնար չ'ըլլայ թեթեւցնել նախնական խողովակներ, կամ եթէ՝ շուտ չը պարպուելէն վտանգ պիտի ծագի: Սյս երեք պայմանները խիստ քիչ անգամ կը գտնուին՝ այն մարդոց վրայ՝ որք մաշողութեան վիճակի ենթարկուած են, որոց վրայ տկարութիւնը և նախնական ուղիներու ուժաթափութիւնը միշտ հակառակ կ'ուզայ մաքրողական-

(1) Կը խրատենք մեր ընթերցողները որ առանց բժշկի հասանութեան ո՛չ արիւն առնել տան շաղակրատ տգիտներու եւ ոչ մաքրողական գործածեն ի դեպս եւ յանդէպս՝ քանզի ես աջօրս տեսած եմ անխոնձմութեամբ մաքրողական առնողներու մահը. ո՛ր մնաց արիւն առնելու պիտի փութուի գործողութիւնը: Ծ. Թ.

ներու և փոխեցուցիչներու: Շատ անգամ ուրիշ միջոց մը հնար է գործածել զանոնք հետզհետէ պարպելու համար. այս է՝ փորի պնդութիւն չը տուող՝ այլ միայն զօրացնող դեղ առնել. այս կարգէն են՝ շատ մը դառնահամներ (անը իշամ) որք՝ գործարանաց ոգեւորում տալով՝ կրկին բարերար ազդեցութիւն կ'ունենան՝ մարսել՝ ինչ որ կարելի է և դուրս տալ աւելորդը:

Վերջապէս քիչ անգամ կը պատահի որ ասոնք շուտով չը պարպուելով վտանգ պատճառեն. այս վտանգը տեղի կ'ունենայ երբեմն ծանր հիւանդութեանց մէջ. նիւթերուն բարկութիւնը որ տաքութեանէն կ'աւելնայ՝ և մանրաթելերու սոսկալի մեծ հակազդեցութիւնը կրնան բուռն ախտանիշեր պատճառել, որք տեղի չունին երբէք հիւժող ախտերու համար, որոց մէջ բուն արտաքսիչ դեղերն ընդհանրապէս անկարեւոր են՝ իբր տկարացուցիչ՝ և որք՝ ինչպէս ըսի՝ շատ անգամ իրենց դէմ հակամիջ դեղեր ունին:

Ուժաթափութիւնը, գործունէութեան պակասութիւնը պատճառ կ'ըլլան այս նիւթերու դիզուելուն. եթէ մաքրողականով պարպուին՝ իրենց ներգործութիւնը կ'անցնի, բայց զիրենք յառաջ բերող պատճառն աւելի կը սաստկանայ. այն ատեն հարկ կ'ըլլայ՝ թէ՛ արդէն կեցած ախտը բուժել՝ թէ՛ դեղի պատճառածը: Եթէ ասոր շուտով դարման չը տարուի՝ գործը առաջուրէն աւելի շուտով կը նորոգուի: Եւ եթէ նորէն մաքրողական գործածուի՝ երկրորդ անգամ ախտին սաստկու-

Թեան պատճառ կը տրուի . ասկէ զատ՝ փորոտիք՝ այս ընթացքով ծուլութիւն մը կատանան՝ որով չեն կրնար իրենց պաշտօնները կատարել . և այն աստիճան կ'ըլլայ մարդ՝ որ արհեստով միայն արտահանութիւններ ունենալու կը պարտաւորի . մէկ խօսքով, տկար մարդոց վրայ՝ նախնական խողովակներու բռնի պարպումը՝ ուրիշ կերպով չի նըուազեցներ արդիւնքը՝ բայց եթէ պատճառը սաստկացնելով՝ և չսփոփեր վայրիկ մը՝ բայց միայն հիւանդութիւնը վատթարացնելով : Սակայն շատեր կը հետեւին այս մեթոտին . հիւանդներն ասկէ կ'ախորժին . ասոր ազդեցութիւնը աւելի արագ կը թուի . և սուղիւ , բաւական է որ ուժոյ անկումը սաստիկ չ'ըլլայ՝ հիւանդները մաքրողականներով առժամանակեայ սիտոփում կը գտնեն . աստը նորէն կը դառնայ՝ յերաւի՝ բայց աւելի կը սիրեն զայն ընծայել իրենց սիրած դեղին անբաւականութեան՝ քան ազդեցութեան . ասկէց զատ հիւանդները ներկային սիտոփանքն աւելի կ'ընտրեն , և քիչ բժիշկներ կը համարձակին ասոր ընդդիմանալ : Սակայն շատ կարեւոր է՝ թէ բժշկութեան և թէ բարոյագիտութեան մէջ՝ ներկայն ասպարհային զոհել գիտնալ . այս օրինաց անգործադրութիւնը կը լեցնէ զաշխարհ թշուառներով և խտտածէտներով :

Զգուշանալիք դեղերը նշանակելէ յետոյ կը հարցնենմք . ի՞նչ ընել պէտք է : Արդէն վերը ցուցի թէ դեղերն ի՞նչ յատկութիւն ունենալու են - զօրացնել՝ աւանց գրգռելու : Անոնցմէ այնպիսի-

ներ կան՝ որք այս երկու պահանջումները կրնան գոհացնել . սակայն ասոնց ցուցակը երկար չէ , և ամենէն ազդուներն՝ ապահովապէս սա երկուքն են . - գեկգինա եւ պաղ ջրի թաղեր : Այս դեղերուն առաջինը՝ մէկ դարէ աւելի է որ , բացի իւր տենդահալած զօրութենէն՝ կը նկատուի իբրեւ ամենէն զօրացուցիչ ամոքարար դեղերէն մին : Արդի ամենէն հոչակաւոր բժիշկները զայն իբրեւ բուն դեղ կը համարին ջրային հիւանդութեանց մէջ : Պ . Լըվիս զայն նախամեծար կը նկատէ ամեն դեղերէ . և Պ . Սթէհըլէն կ'ըսէ թէ ինք զայն ամենէն ազդուն կը հաւատայ : Քսան դարերու ճշգրիտ և մանրախոյզ փորձեր ապացուցեր են՝ որ պաղ ջրի բաղնիքներն նոյն յատկութիւններն ունին : Տօքթէօն Պէյնաու ասոր գործողութեան փորձն ըրած է մասնաւորապէս սերմնաթափութենէ և տուփական ծայրայեղութենէ յառաջ եկած անկարգութեանց վրայ , մասնաւոր այնպիսի մէկուն վրայ՝ որ բացի անկարողութենէ և պարզ հոսումէ , այն աստիճան տկարութիւն ունէր՝ մասնաւորապէս սաստկացած արիւն առներով և մաքրողականներով՝ որ հիւանդէն գրեթէ ձեռք քաշելու վրայ էին :

Պ . Լըվիս չի երկմտիր աւելի վստահ կերպով հաստատելու անոնց ազդեցութիւնը : « Ամեն դեղերու մէջ , կըսէ , թէ ներքին ըլլայ , թէ արտաքին՝ չկայ մէկը որ հաւասարի պաղ ջրոյ բաղնիքներու : Ասոնք կը զովացնեն , կը կազդուրեն ջրղերը և կ'օգնեն արտաշնչման՝ ամեն ներքին

«դեղէ աւելի ազդուութեամբ. եթէ պէտք եղած «զգուշութեամբ գործադրուին՝ աւելի ներգործիչ «են ողնայարի մաշտղութեան մէջ՝ քան թէ բո- «լոր միւս դեղերն իմիասին գալով» : Սա եւս պէտք է դիտել, որ ինչպէս վերն ըսի օդին համար, պաղ բաղնիքներն մասնաւոր առաւելութիւն մ' ու- նին՝ այն է թէ իրենց գործողութիւնը կախում չունի այնչափ կազմական զօրութենէն՝ որչափ միւս դեղերն ունին. այս վերջիններն միայն կեն- դանի բնութեան վրայ կ'ազդեն, իսկ պաղ ջրի լուացումներն ոգի կուտան մինչեւ իսկ մեռած մանրաթեւերու :

Քէնքինայի և պաղ ջրոյ բաղնիքը մէկ տեղ նշանակուելուն պատճառն իրենց հաւասար զօ- րութիւն ունենալն է. ասոնք միեւնոյն արդիւնքն յառաջ կը բերեն, և մէկտեղ դալով կ'առողջաց- նեն այնպիսի հիւանդներ զորս ուրիշ դեղեր գէշ- ցնելէ ուրիշ բան պիտի չլրնային ընել :

Զօրացուցիչ, ամոքիչ, տենդահալած ըլլալով՝ ասոնք կը կազդուրեն ուժը, տենդային և ջրային տաքութիւնը կը նուազեցնեն և կը հանդար- տեցնեն անկարգ շարժումները որք յառաջ կու- դան ջրային դրութեան՝ ցնցման տրամադիր ըլլա- լէն : Ար դարմանեն ստամոքսին տկարութիւնը, և խիստ շուտով կը փարատեն անիչ յառաջ եկած ցաւերը : Ախորժակ կը բանան, մարսողութիւնը և տածումը կը դիւրացընեն, կը վերահաստատեն ի- րենց սաշտօնին մէջ բոլոր անջատումները՝ մանա- ւանդ արտաշնչումը՝ որով շատ ազդու կ'ըլլան

հարբային և մորթային հիւանդութեանց մէջ. միով բանիւ տկարութենէ յառաջ եկած բոլոր հի- ւանդութեանց դարման կ'ընեն՝ հերիք է որ հի- ւանդը ոչ յամառ խցում ունենայ՝ ոչ բորբոքում, ոչ ներքին պաղար կամ կեղձ պայմաններ՝ որք մի- այն, գրեթէ միայն պաղ ջրի բաղնիքին արգելք կ'ըլլան, բայց որոնք յաճախ վնաս մը չ'ունին քէն- քինային :

Նս քէնքինան այսպէս տուած եմ հեղուկ վի- ճակի մէջ. մէկ ունկի չափ (1) դնել տալով տասեր- կու ունկի ջրոյ՝ կամ հիւանդութեան պահանջին նայելով՝ կարմիր գինիի հետ՝ երկու ժամու չափ գոց ամանով եփել, ապա օրը երեք ունկի չափ խմել :

Պաղ ջրոյ լուացումներն իրիկուններն ընել կը հրամայեմ, երբ ճաշը ամբողջապէս մարսուած է. ասոնք կ'օգնեն խաղաղ քուն մը քաշելու. պա- տանի սերմնաթափ մը խնամեցի՝ որ գիշերներն քուն չ'ունէր, առաւօտ քրտնաթաթաւ տկարա- ցած կ'ենէր. վեցերորդ լուացման յաջորդող գի- շերուն՝ հինգ ժամ քնացաւ և սպա ելու առանց քրտինքի՝ և աւելի ալէկ :

Երկաթն երրորդ դեղ մ'է որ խիստ յաճախ կը գործածուի տկարութեանց ամեն տեսակներուն մէջ. ուստի հարկ չկայ երկարօրէն պնդել անոր զօրացուցիչ յատկութեանը վրայ : Որովհետեւ ա-

(1) Մեկ ունկին՝ Ֆրանս. Օնս՝ գրեթէ ուր տը- րամի չափ է : Ծ. Թ.

մենեւին գրգռող չէ՝ շատ յարմար կ'ուզայ այս տեսակ հիւանդութիւններուն : Զայն կամ իր բուն ձեւով կուտան կամ հեղուկի մէջ թրջելով . բայց ամենէն պատուական բաղադրութիւնք են՝ բնութեան պատրաստած հանքային ջրերը՝ մանաւանդ Սբայի ջրերը , ծանօթ գորացուցիչ դեղերէն ամենէն աւելի գորացուցիչներէն մին , այնպիսի գորացուցիչ մը՝ որ ոչ միայն չի գրգռեր՝ այլ մարմնոյ հիւթերուն ունեցած բարկ ազդեցութիւնները կը մեղմացնէ : Խէժեր , դմուռներ , դառնահամ դեղեր , մեղմ համեմանքներ նոյնպէս կը գործածուին : Պարագայներէն կախում ունի այս դանազան դեղերուն ընտրութիւնը : Առաջին նշանակածներս ամենէն նախապատիւն են . սակայն այնպիսի պարագայներ կուգան՝ երբ ուրիշներ տալ հարկ կ'ըլլայ . այս դեղերը կրնան ընտրուիլ ընդհանրապէս ջրերու գորացուցիչ տեսակներէն , իբրեւ կողմնացոյց բռնելով վերը նշանակած զգուշութիւններս : Ստիկա ջրային հիւանդութիւն մ'է՝ և պէտք է որ այս անուամբ դարմանուի . շատ անգամ այս մըտօք դարմանած և աջողած են բժիշկներ՝ առանց պատճառը հասկնալու : Ստուգիլ՝ ինչպէս տնհերքելի աղացոյցներով ալ հաստատած եմ , այս պատճառին անհասկնալի մնայր՝ հետեւաբար պահանջած դարմաններն չը գանուիլը՝ երբեմն ապարդիւն թողած է ըստ երեւութիւն լաւ կերպով նշանակուած դեղերը . և բժիշկն իսկ չէ կրցած թափանցել այս անյաջողութեան պատճառին : Սբայի ջրերուն և քէնքինային մէկ առաւելութիւնն ալ

սա է՝ որ կաթը ստամոքսին դիւրատար կ'ընեն : Սբայի՝ և ուրիշ մէկ քանի ջրերն այս յատկութիւնն ունին :

Վերը տեսնուեցաւ որ Պ. Հօֆման կը հրամայէր իչու կաթ խմել՝ մէկ երրորդին չափ Սէլթէռի ջրին հետ խառնելով : Պ. տը լա Մէթսի աւանդած է մեզ Պ. Պըռհալլի մէկ գեղեցիկ դիտողութիւնը . Այս սիրուն դոքսը , բառ առ բառ կը թարգմանեմ , ամուսնական գործողութենէ դուրս ելած էր , և որին զինք անքս մտոյցի հոն՝ Սբայի ջրի հետ խառն կաթ գործածել տալով : Ստամոքսի տկարութիւնը որ մարտողութիւնը սապտիկ կը ծուլացնէ , թթուներ , մաղձին գործունէութեան տկարութիւնը , ստորին-փորին ընդերաց գոցուիլը , գլխաւոր պատճառներ են որ կ'արգիլեն կաթին մարսիլը և չեն թողուր զայն գործածել : Այն ջրեր՝ որ այս պատճառները մէջ տեղէն կը վերցնեն՝ հարկաւ անոր մարտումը կը դիւրացնեն . և քէնքինան՝ որ նոյն պահանջումները կը կատարէ՝ կրնայ օգտակարապէս խառնուիլ կաթին հետ : Այս դեղերը կրնան կաթէն առաջ գործածուիլ՝ անոր ճամբայները պատրաստելու համար , որ միշտ հարկ է՝ կամ անոր հետ ի միասին :

Եթէ ամեն ջանք ի դերեւ ելնէ կաթը ստամոքսին ընդունել տալու համար , կրնայ փորձուիլ կարագի կաթը . ես զայս տուի յաջողութեամբ երիտասարդի մը՝ որու համար՝ սեւամազութեան տարրը ինձ կասկածելի կ'ընէր ամբողջ կաթին մարտումը : Մաղձայինները այս տեսակն ախորժակով կը խմեն և միշտ օգուտը կը տեսնեն . ասիկա

նախամեծար պէտք է համարուի կաթէն՝ ամեն անգամ՝ երբ շատ տաքութիւն, քիչ մը ջերմ, օժիկ խիստի տրամադրութիւն կայ. ասիկա մասնաւորապէս գործածելի է՝ երբ տուփական ծայրայեղութիւններն սաստիկ տենդ կ'արտադրեն՝ նրման անոր՝ որմէ մեռաւ Ռափայէլ (1): Թէպէտ տկարութիւն կայ՝ զօրացուցիչ դեղերը կրնան վընասել, արիւն առնուլը վտանգաւոր է: Հոչակաւոր ճօնաթըն՝ որ Պ. Ջիէպէնտրօֆ անուսով մեռաւ, ութսուն տարիէ աւելի առաջ՝ ազդու կերպով պաշտպանած էր զայս՝ այսպիսի պարագայի մէջ: Շատ զովարար դեղերը չեն յաջողիր՝ ինչպէս կ'ապացուցանէ Պ. Վանտէրմօնտ, և ինչպէս են անձամբ տեսած եմ. այլ կարագի կաթը շատ լաւ կ'աջողի. հերիք է որ չափազանց իւզոտ չըլլայ՝ կը կակուղցնէ, կ'ամոքէ, ծարաւը կ'անցնէ, և կը զովացնէ. այս վերջինը մանաւանդ խիստ կարեւոր է այս պարագային մէջ՝ յորում ուժը անհաստատի արագութեամբ կը կորնչի: Պ. Կիլլերիսթ որ կաթը բանի տեղ չի դնէր թոքի հիւանդութեանց մէջ՝ չափազանց կը գովէ կարագի կաթը նոյն պարագային համար: Գրեթէ ամեն բոյժերու մէջ՝ կաթը գլխաւոր սնունդ եղած է. իսկ քենքինան, երկաթը, հանքային ջրերը և պաղ ջրի լուացումը դեղերն եղած են: Քանի մը հիւանդներ

(1) Իտալիայի եւ համայն աշխարհի ամենևն հոգակաւոր նկարչին համար Եյյալու ե հեղինակին այս ակնարկութիւնը: Ծ. Թ:

կաթի վարժեցուցի բոլորովին. մէկ քանիներ ալ օրը մէկ կամ երկու անգամ կը խմէին:

Մննդական անդամներն ամենէն ուշ կը գըտնեն իրենց ուժը. շատ անգամ բնաւ իսկ չեն գըտներ, թէպէտ մարմնոյ մնացեալ մասերն իրենց կոբովը գտած կ'երեւին. կրնայ այս առթիւ ապահովապէս գուշակուիլ՝ թէ ամենէն աւելի մեղանջողը պիտի մեռնի:

Ես միշտ աւելի դիւրին բժշկած եմ զանոնք՝ որ չափահաս գտնուած ժամանակ՝ ծայրայեղ շուռայտութեամբ իրենց անձը մաշեցուցած էին քիչ ժամանակի մէջ՝ քան զանոնք՝ որ քիչ քիչ սպառած էին՝ բայց պատանեկութեան առաջին շրջանէն ըսկըսեալ՝ որով արգելք եղած էին իրենց անձան և պէտք եղած ուժը ստանալուն: Առաջինները կըրնամք ենթադրել իբրեւ ենթակայ եղած սարսափելի հիւանդութեան մը՝ որ անոնց բոլոր ուժը ըսպառած է. բայց գործարաններն իրենց պէտք եղած կատարելութիւնն ստացած ըլլալով՝ թէպէտ և շատ փնասուած են՝ սակայն և այնպէս պատճառին դադարումը, ժամանակը, ապրելու եղանակը, դեղերը կրնան զանոնք կազդուրել: Իսկ երկրորդները (պատանիներ) չեն թողած որ իրենց կազմութիւնը կատարելագործուի, և ի՞նչպէս ուրեմն կրնայ իրենց ուժը տեղը գալ: Հարկ կ'ըլլայ որ արհեստն ի գործ դնէ չափահասութեան ատեն՝ ինչ որ անոնք չեն թողած բնութեան ի գործ դնել մանկութեան և արբունքի ժամանակ: Ասկէց կը տեսնուի թէ ո՞րչափ երազական է այս ան-

ձանց յոյսը . և փորձառութիւնն ինձ կը ցուցնէ ամեն օր թէ այն երիտասարդներ որ անձնատուր եղած են այս զազրութեան ի մանկութենէ և արբունքի զարգացման ժամանակ՝ ժամանակ մը՝ որ բնութեան մէկ տաղնապալից շրջանն է՝ որուն համար իր բոլոր ուժերուն պէտք ունի, այս երիտասարդները, կըսեմ, պէտք չէ յուսան որ ուժեղ և կորովի պիտի ըլլան, և շատ երջանիկ պէտք է համարեն իրենց անձը՝ եթէ կարենան մեծ հիւանդութիւններէ և ցաւերէ ազատ լսեղձ առողջութիւն մը վայելել:

Անոնք որ անազան ուրեմն կը զղջան՝ այն հասակին՝ երբ կազմական մեքենան կը բանի՝ եթէ ազէկ լարուած է՝ բայց որ ատեն՝ նորոգութիւն քիչ կ'ընդունի, անոնք ալ պէտք չէ մեծ յոյս ունենան . քառասուն տարեկանէն անդին քիչ կը պատահի նորոգում:

Երբ գինիի հետ քէնքինա կը պատուիրեմ՝ բոլորովին կաթի վրայ չեմ ձգեր հիւանդը, այլ դեղն առաւօտ առնել կուտամ՝ և կաթն իրիկուն: Քանի մը հիւանդներ ունեցայ՝ որոց համար հարկ եղաւ այս կարգը փոխել. եթէ առաւօտ գինի խմէին՝ կը փոխէին շարունակ:

Երբ հանքային ջուր գործածեմ՝ քանի մը շիշ նախ զուտ կը խմցնեմ՝ ապա կաթի հետ խառնած: Երբ հիւանդութիւնը հինցած ըլլայ՝ ընդհանրապէս պիտոժէտութեան կը դառնայ. այն ատեն պէտք է նախ զայն ջնջել՝ ապա ուժը կազդուրելու ջանալ: Այս պարագային է՝ որ արտաքսիչ-

ներն երբեմն անհրաժեշտ կերպով պիտանի կ'ըլլան՝ և մեծ ազդութիւն կը բանեցնեն: Զօրացուցիչներ, սնուցիչներ, կաթը եթէ հրամայուին այս պարագայներուն մէջ՝ յամր տենդի ենթակայ կ'ընեն՝ և հիւանդը քանի գործածէ զանոնք՝ կը տկարանայ: Երբ արագ ծայրայեղութիւններ յանկարծ այն աստիճան տկարացնեն հիւանդը՝ որ անոր կենացն սպառնան՝ պէտք է զօրաւոր սթափական դեղերու դիմել, Սպանիական գինի տալ՝ քիչ մը հացով, սննդարար արգանակներ՝ թարմ հաւկիթով խառն, հիւանդը անկողինը դնել, և ստամոքսին վրայ դնել թիրիակով տաքցած գինիի մէջ թաթխուած ֆանէլաներ:

Գարիի ջրոյ քիչ մը կաթի հետ եփելը, քանի մ'անգամ ոտուրներ եզկ ջրի մէջ դնել, և իրրեւ կերակուր, հորթի արգանակ ալիւրով խառնուած՝ ահա ասոնք են ճշմարտապէս հարկ եղած դեղերը:

Անօգուտ է ասկէց աւելի մանրամասնութեանց մտնել բուժման վրայ. որչափ ալ երկար գրէի՝ դարձեալ անօգուտ պիտի ըլլար հիւանդին առանց բժիշկին օգնութեան՝ որ պէտք չ'ունի երկարաբանութեանց: (1) Ապրելու եղանակին վրայ աւելի մանրամասն գրեցի՝ զի միայն սա՝ պատճառին դադարման հետ միանալով՝ ինքնին կարող է բը-

(1) Այս դարմանատարութեան մասէն յայտնեցի՝ սոյն Բ. տպագրութեան մէջ՝ այն հատուածներն որք բոլորովին անօգուտ էին գրքիս նպատակին՝ վասն զի բժշկաց միայն վերաբերեալ էին:

ժըլիել հիւանդը՝ եթէ աստը շատ յառաջադիմած  
չէ՝ բաց աստի՛ ամեն ոք կրնայ այս կանոնին հը-  
պատակիլ անվտանգ ։

Գրքիս այս մասը ընցնելու համար ինձ կը մը-  
նայ պահպանող կամ զգուշացուցիչ բոյժն ալ հոս  
դնել ։ Զգացի որ այս յօդուածը կը պակսէր գոր-  
ծոյս առաջին տպագրութեան մէջ՝ և թէ՛ իրական  
պարապ մ'էր այս ։ Մարդ մը՝ հոչակաւոր գրական  
հասարակապետութեան մէջ (1) իր գործերովը՝ և  
առաւել եւս յարգելի իւր տաղանդով, գիտու-  
թեամբք, և անձնական արժանեօք քան իւր համ-  
բաւով և այն պաշտօնով զոր արժանապէս կը վարէ  
Միւլիսի մէկ գլխաւոր քաղաքին մէջ, Պ. Իզըլէն,  
պետական քարտուղար ի Պալ, (անշուշտ կը ներէ  
իւր անունը յիշել) զգացուց ինձ այս պարապը՝  
խիստ քաղաքավարական կերպով ։ Աստ յառաջ  
պիտի բերեմ իւր նամակին հատուածն ամենամեծ  
յօժարութեամբ՝ աւելի անոր համար՝ որ իւր ու-  
զածը որոշ կերպով կը նշանակէ ։

« Կը փափագէի, կը գրէ ինձ, ձեր ձեռքէն ե-  
լած տեսնել այնպիսի գործք մը՝ որու մէջ բա-  
ցատրէիք այն ամենէն ապահով և նուազ վտան-  
գաւոր միջոցները՝ որոնցմով ծնողք իրենց դաստի-  
արակութեան շրջանին մէջ՝ և երիտասարդք ալ ի-  
րենք իրենց ձգուած ժամանակ կարենային պահ-  
պանել իրենց անձը լաւագոյն եղանակաւ՝ բռնն

(1) Գրագիտական աշխարհին գրական հասա-  
րակապետութիւն ալ կ'ըստի ։

տենչանքներէն՝ որք կը մղեն զիրենք չափազան-  
ցութեանց՝ ուստի կը ծնին այնչափ ահաւոր հի-  
ւանդութիւններ՝ կամ անկարգութեանց՝ որ թէ  
մարդկային ընկերութիւնը և թէ իրենց անձնա-  
կան երջանկութիւնը կը վրդովեն ։ Զեմ կասկածիք  
որ ժուժկալութեան մասնաւորապէս օժանդակող  
անունդ մը կայ . կը հաւատամ որ այսպիսի պա-  
հեցողութիւն մը սովորեցնող գիրք մը՝ միաճառով  
պղծութեան արտադրած հիւանդութեանց նկա-  
րագրին հետ՝ ամենէն աւելի արժէք պիտի ունե-  
նար՝ քան թէ այս նիւթիս վրայ գրուած ո եւ իցէ  
բարոյախօսութիւն ։ »

Անտարակոյս իրաւունք ունի . չկայ բան մը որ  
աւելի կարեւոր ըլլայ՝ քան իւր պահանջած յաւել-  
ուածը . բայց չկայ դարձեալ աշխատութիւն մը որ  
անկէ աւելի դժուար ըլլայ՝ երբ բաժնէնք զսա ոչ  
միայն բժշկական՝ այլ և բարոյական դաստիարա-  
կութեան միւս մասերէն ։

Այս յօդուածին վրայ առանձինն ճառելու հա-  
մար՝ եթէ ուզէ ոք պէտք եղածին պէս ճառել՝  
հարկ պիտի ըլլար՝ յառաջ բերել, հաստատել բազ-  
մաթիւ սկզբունքներ՝ որք շատ պիտի երկարէին  
այս պզտի գործս և որոնք իրեն խիստ օտար ալ  
են ։ Իսկ եթէ մէկ քանի խրատներ աւանդէինք՝  
զատելով զանոնք հարկ եղած սկզբունքներէն և  
բաժանումներէն՝ ոչ միայն անօգուտ բան մ'ըրած  
պիտի ըլլայինք՝ այլ գուցէ և վնասակար . ուստի  
աւելի լաւ է այս ճառը մասն համարել այնպիսի  
ընդարձակ գործի մը՝ որուն նպատակն ըլլայ գը-

րեւ թէ՛ բարեխառն կեանքն ի՛նչպէս յառաջ կուգայ և ի՛նչպէս երիտասարդք կը յաջողին տոկուն առողջութիւն մ՛ունենալ՝ նիւթ մը որ թէպէտ և գրուած է ճարտար հեղինակներէ՝ սակայն դեռ շատ կայ որ սպառի և որու վրայ բազմաթիւ կարեւոր բաներ կան աւելցնելու՝ ինչպէս նաեւ այս տարիքին վերաբերեալ հիւանդութեանց վրայ :

Ուստի հակառակ իմ փափագիս՝ չի պիտի կըրնամ հոս մօտիլ այս յօդուածին : Ինչ որ կրնամ ըսել՝ այս է թէ, դատարկասիրութիւնը՝, անգործութիւնը, անկողնի մէջ երկար ատեն պառկելը, չափազանց կակուղ անկողինը, չափազանց սննդաբար, համեմաւոր, աղած, գինեխառն սնունդը, կասկածելի բարեկամներ, լկտի գրուածներ, գըլխաւոր պատճառներ ըլլալով ծայրայեղութեան մը դուրս՝ ամենայն զգուշութեամբ խորշելու է ասոնցմէ : Մտուողը շատ անգամ մեծ կարեւորութիւն ունի, և ասոր պէտք եղած ուշադրութիւնը չընծայուիր շատ անգամ : Պատանիներ դաստիարակելու պաշտօն ունեցողները պէտք է աչաց առջեւ ունենան Ս. Հերոնիմոսի գեղեցիկ դիտողութիւնը : Հեյնստեյ (1) դարբնոցը, էտեյ հրաքոսիտերը և Ոլիմպոս շեռը սյնչայի առեյի բոցով չեն բորեն կիր՝ որչայի նրիտասարդներ՝ որք կը յղիսնան գեր և պարարտ ուտելիքներով և կզմայիլն գիկիով :

Ս,մենէն ազգու պահպանող, միակ անսխալը՝ ա-

(1) Կրակի աստուած՝ Է. Արամագոյայ դարբինը : Ծ. Թ :

ներկրայապէս կրնամ ըսել՝ այն է՝ զոր կը ցուցնէ մեծ մարդն որ ամենէն լաւ ճանչցաւ իր նմանները և անոնց ճամբայները, որ տեսաւ՝ ոչ միայն ինչ որ են անոնք՝ այլ նաեւ ինչ որ եղած են, և ինչ որ պարտին ըլլալ, և ինչ որ աւելի կրնային ըլլալ՝ այն՝ որ ամենէն աւելի ճշմարտապէս սիրեց զանոնք, ամենամեծ ջանքեր ըրաւ անոնց լաւութեան, որ զոհ եղաւ անոնց համար՝ (1) որ անոնցմէ ամենասոսկալի կերպով հալածուեցաւ : « Զգուշութեամբ հսկեցէք երիտասարդին վրայ՝ ընաւ մինակ մի թողուք զայն՝ ոչ գլխեր, ոչ ցորեկ, գոնէ իր սենեակին մէջ պառկեցէք : Երբ անգամ մը ինքզինք տայ այն սովորութեան՝ որ երիտասարդաց ամենաժանտ սովորութիւնն է՝ ա՛լ մինչեւ գերեզմանը կը տանի անոր տխուր հետեւանքը . անոր սիրտը և մարմինը միշտ հիւժեալ ջլատեալ կը մնայ » :

Սյս ախտին անճնատուր եղողին ուղղութեան համար եթէ ազգու բան մը կայ՝ այն ալ վրտանգին նկարագիրն է . սոսկալի պատկեր՝ որ ահով ու սարսափով պաշարելու ամենայարմարն է : Ահա անոր գլխաւոր մասերը . - կազմական մեքենային ընդհանուր անկում, մարմնոց բոլոր զգայաբանաց՝ և հոգւոյն բոլոր կարողութեանց տկարացումն . երեւակայութեան և յիշողութեան կորուստ, ապշութիւն, անարգութիւնը, ամօթը, վատանունութիւնը որ ասոր (ապշութեան) ետեւէն կուգան, բոլոր գործարանային պաշտօններուն խանգարում,


(1) Սոկրատը կ'ակնարկէ կերեւի քէ : Ծ. Թ :

դադարում․ ցաւ՝ երկարատեւ, ծանր, արտառոց․  
 զգուեիի հիւանդութիւնք, ծանր և միշտ նորոգ-  
 ուող կոկիծներ, ծերութեան ամեն ախտեր՝ երի-  
 տասարդութեան մէջ, անկարողութիւն ամեն այն  
 աշխատութեանց պարապելու՝ որոց համար ծնած  
 է մարդ․ աշխարհի վրայ բեռ ըլլալու անպատիւ  
 վիճակը, տանջանքներ՝ որոց ինքզինք ամեն օր են-  
 թակայ կ'ընէ, զգուանք՝ ամեն պարկեշտ հաճոյից  
 մասին, ճանճրոյթ, ուրիշներու՝ և իւր իսկ դէմ  
 ատելութիւն, կեանքէն զարչում, մէկ վայրկեանէն  
 ի միւս ինքզինք սպաննելու վախ, անձկութիւն մը՝  
 վատթար քան իւր ցաւերը, խղճի խայթ՝ վատ-  
 թար քան անձկութիւն՝ խայթեր որ օր օրի ա-  
 ւելնալով և հարկաւ նոր զօրութիւն առնելով՝ երբ  
 հոգին ոչ եւս տկարացած է մարմնոյ կապերով՝  
 գուցէ մշտնջեան տանջանք և անշիջանելի հուր  
 պիտի դառնան․ ահա համառօտ պատկեր վախ-  
 ճանին՝ որ պահուած է անոնց՝ որք այնպէս կը  
 վարուին՝ իբր թէ այն վախճանէն չեն վախնար։  
 Դարմանատարութեան հատուածը չը լմնցուցած՝  
 հարկ կը համարիմ իմացնել այս տեսակ հիւանդաց,  
 և անոնց ալ՝ որ հինցած հիւանդութիւններ ունին՝  
 մանաւանդ երբ այս հիւանդութիւններ ուժաթա-  
 փութեամբ խառն կուգան՝ որ պէտք չէ յուսան թէ  
 քանի մ'օրէն կրնան բժշկուիլ այն ախտերէն՝ ո-  
 ռոնք տարիներու արդիւնք են։ Պէտք է գիտնան  
 որ բոյժը երկար և ճանճրալի է՝ և հպատակին  
 ճշդութեամբ վարմանց ամեն կանոններուն․ այս  
 կանոններն երբեք չափազանց մանրակրկիտ կ'երե-

ւին իրենց՝ վասնզի չեն հասկնար անոնց կարե-  
 ւորութիւնը․ պէտք է միշտ միտքերնին բերեն՝ թէ  
 խտապահանջ բուժման ճանճրութիւնը բան մը չէ՝  
 եթէ բաղդատուի ամենաթեթեւ հիւանդութեան  
 հետ։ Թող ներուի ինձ ըսել աստ որ՝ եթէ կը տես-  
 նուին երբեմն բուժելի հիւանդութիւններ՝ որք  
 գէշ դարմանուելուն պատճառաւ չեն բուժիր՝  
 խիստ շատեր ալ կան՝ որք հիւանդին անհնազան-  
 դութենէն անբուժելի կը մնան, հակառակ բժշկին  
 մատուցած ամենալաւ օգնութեանց։

# ՄԱՍՆ Դ.

ՆՄԱՆ (ԳԻՋՈՒԹԵԱՆ) ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՔ



Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ժ.

## ԵՐԱԶԱՓՈՐՁՈՒԹԻՒՆՔ

(ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳԻՋՈՒԹԻՒՆՔ)

Բացատրած եմ արդէն տուիական ծայրայեղութիւններով և սերմնաթափութեամբ խիստ առատօրէն սերմ արտաքսուելուն վտանգները, և ըսած եմ գրքիս սկիզբը որ սերմը կրնայ նաեւ կորսուել հեշտական երազներով և պարզ հոսում կոչուած հիւանդութեամբ. համառօտիւ պիտի քըննեմ այս երկու հիւանդութիւնները:

Մարմնոյ և հոգւոյ կապակցութիւնն այն աստիճան սերտ է՝ որ զգայարանաց՝ քնով շղթայակապ եղած ժամանակն իսկ հոգին՝ ցերեկին անոնցմէ իրեն հաղորդուած գաղափարներով կրնայ զբաղիլ: Այս միութեան մէկ օրէնքն ալ այն է՝

որ առանց միւս զգայարանաց շղթայակապ կարգը չիօթելու՝ կամ պարզ ըսելով՝ առանց արտաքին տպաւորութիւններն զգալի ընելու անոնց՝ հոգին կրնայ քնոյ մէջ այնպիսի շարժումներ ծնուցանել՝ որով գաղափարաց իրեն թելադրած կամեցողութիւնն ի գործ դնէ: Այսպէս եթէ տուիական գաղափարներով տոգորուած ըլլայ՝ եթէ հեշտային երազներու պարապի՝ իրեն պատկերացած առարկայները ծննդական գործարանաց վրայ նոյն շարժումները կ'արտադրեն՝ ինչ որ պիտի ընէին արթնութեան և գործողութիւնն երեւակայութեան մէջ կատարուելուն հետ՝ նիւթապէս ալ կը կատարուի:

Նրբեմն այս գործարաններն հոգիէն առաջ կը գրգռին՝ յայնժամ միայն երեւակայութիւնը կ'արթընցընեն, երազներ առաջ կը բերեն՝ որ նախընթացներուն պէս կը վերջանան: Այս սկզբունքներով կը մեկնուին երազափորձութեան զանազան տեսակները:

Ասոնց առաջին տեսակն է այն՝ որ կը ծագի սերման չափազանց առատութենէն. այս կը պատահի չափահաս, արիւնային, կորովի, զգաստ մարդոց: Անկողնին ջերմութիւնը՝ հիւթերը անօսրացնելով և սերմնային հեղուկը ամենէն աւելի անօսրանալու տրամադիր գտնուելով՝ գրգռուած փանիչտիկները կը բռնադատեն երեւակայութիւնը՝ որ պատրանքը տեսնելու միջոցներ չունենալով՝ անոր անձնատուր կ'ըլլայ բոլորովին. մերձաւորութեան գաղափարը՝ անոր վերջնական արդիւնքն՝

սերմի ցայտումն յառաջ կը բերէ : Այս պարագային մէջ սոյն արտաքսումը հիւանդութիւն մը չէ , այլ առաւել՝ նպաստաւոր յեղաշրջում մը՝ շարժում մը՝ որ կ'ազատէ հիւթէ մը՝ որու չափազանց առատութիւնը և փակումը կրնար վնասել . և թէպէտ քանի մը բժիշկներ՝ որ միայն իրենց տեսածին կը հաւատան՝ զայս չեն ընդունիր՝ սակայն և այնպէս ճշմարիտ է՝ որ այս հեղուկը իւր առատութեամբը կրնայ վնասել՝ արանդամի յօնութիւն ( արանց վրայ ) և կամ հարսնամոլութիւն ( կանանց վրայ ) յառաջ բերելով : Դառնամ երազափորձութեանց :

Տեսանք թէ սերմի առատութենէ արտադրուած պարպումն ըստ ինքեան հիւանդութիւն մը չէ . բայց կրնայ վնաս պատճառել՝ եթէ յաճախի՝ և մանաւանդ երբ վնասելու չափ սերման առատութիւն չկայ : Արդէն դիտել տուած եմ՝ որ մէկ արտահանումը ուրիշի մը տեղ կը բանայ՝ և սովորութեան ազդեցութիւնն այն աստիճան մեծ է՝ որ շարժմանց կրկնութիւնները զանոնք աւելի դիւրին յառաջ գալու տրամադիր կ'ընեն՝ և ամենաթեթեւ պատճառով մը կ'արտադրուին : Այս դիտողութիւնը մեծ կարեւորութիւն ունի՝ կենդանական կազմին ներդաշնակութիւնը լաւ ըմբռնելու համար՝ որու վրայ կալիէն՝ մանաւանդ Մաթի գեղեցիկ բաներ ըսած են՝ և սակայն դեռ ամբողջ չապէս բացատրուած չէ : Շարժմանց յաճախութեանէն սա անպատեհութիւնը կը ծնի՝ որ ալ ունակութիւն մը կը դառնայ սերմին պարպուիլը՝ մին-

չեւ իսկ բնաւ հարկ չեղած ժամանակ : Սաթիրիւս՝ Կռակուօրիէքս մականուանեալը՝ քսան և հինգ տարեկան հասակէն յաճախ երազափորձերու բռնուեցաւ . երբեմն ցորեկին ալ կը հոսէր սերմը : Երեսուն տարեկան հասակին մեռաւ մաշողութեամբ :

Պ. Ջիմմեռման ինք կը պատմէ թէ՝ խիստ հանձարեղ մարդ մը երազափորձութիւններով կորուսած էր բոլորովին իր մտաց գործունէութիւնը , և մարմինն ալ Պըռհաւի նկարագրած վիճակին հասած էր ճիշդ ու ճիշդ : Վերը պատմեցինք այն վրնասները զորս դիտեց Պ. Հօֆման երազափորձութիւններէ յետոյ : Ամենէն սովորական ակտանիլը՝ քանի որ ակտը մեծ յառաջադիմութիւն ըրած չէ՝ այս է՝ շարունակ նեղութիւն մը՝ մանաւանդ առաւօտուն՝ և սաստիկ մէջքի ցաւ : Քանի մ'ամիս առաջ ինձ ցուցին յիսնամեայ այդեպան մը՝ որ երբեմն չափազանց կորովի եղած էր՝ և զոր երեք չորս ամիս ի վեր յաճախ պատահող երազափորձութիւնները սոսկալի կերպով տկարացուցած էին՝ այնպէս որ օրը մէկ քանի ժամ միայն կրնար աշխատիլ . շատ անգամ այս ալ չէր կրնար ընել՝ և մէջքի ցաւէն անկողին կ'իյնար . օր օրի կը նիհարնար : Քանի մը խրատներ տուի , չ'գիտեմ թէ գործադրեց , և ի՞նչ արդիւնք ունեցան :

Մարդ մը դիտեմ՝ որ ծանր հարբուխ մ'ունենալով ինքզինք աղէկ չը նայեցաւ . և քանի մը շարաթ խուլցաւ . ասիկա երբ երազափորձ ըլլար միւս օրն աւելի կը խուլնար՝ սաստիկ թուր-

Թեամբ հանդերձ : Ուրիշ մ'ալ կը ճանչեմ՝ որ ուրիշ պատճառներէ տկարացած՝ երբ երազափորձ կ'ըլլայ՝ այն աստիճան կը թուլնայ և կ'ընդարմանայ՝ որ ժամու մը չափ անդամալուծի պէս կը մընայ , և քսան և չորս ժամ սաստիկ տկար կը գըտնուի :

Սյս առաջին տեսակ երազափորձերու կարգը կը դասուին անոնցն ալ՝ որոնք յաճախ արտաքսման վարժուած ըլլալէ վերջ՝ մէկէն ի մէկ կը կըտրեն՝ ինչպէս էր այն կնոջ երազափորձը՝ զոր կը պատմէ Կալիէն : Սյս կիճն այրի էր ժամանակէ մը ի վեր և սերմին արգիլումն արգանդի հիւանդութիւններ կը բերէին վրան . գիշեր մը քնոյ մէջ՝ մէջքը, բազուկները և սրունքներն երերցուց սաստկապէս՝ և թանձր սերմ մը թափեց՝ ճիշդ ինչպէս մերձաւորութեանց ատեն : Կաքաւիչ կին մը դիպուածով վիրաւորուեցաւ թեթեւակի՝ ձախ ծիծին մօտէն . վիրարոյժը բաւական խիստ ժուժկալութիւն մը պատուիրեց . արգիլեց անոր որ հեռի կենայ այն հաճոյքներէն՝ զորս յաճախ սովոր էր վայելել :

Սյս ժուժկալութեան հպատակեցաւ՝ միանգամայն չը պահելով կերակրոց զգուշութիւնը . այս զրկման երկրորդ իրիկուն՝ երազափորձ մ'ունեցաւ՝ որ յաճախ կրկնուելով յաջորդ գիշերներ , զայն ըզգալի կերպով տկարացնել սկսան՝ և մէջքի ցաւ պատճառեցին իրեն : Ա՛լ էրքին բոյժը յառաջ կերթար՝ և բոլորովին պիտի աղէկնար՝ եթէ ինքզինքնայէր կերակրոց և խմելիքի մասին : Ա՛լ իրարոյժը

հաստատ կեցած իր սկզբանց վրայ՝ դարձեալ արգելքը կը շարունակէր , անորմէ արիւն կառնէր և մաքրողական դեղ կուտար : Կինը ձանձրացած և տկարացած՝ թողուց դեղերը և նորէն իւր առջի վարմունքը սկսաւ . տկարութիւնն և ցաւերը չուտ մ'անցան :

Սակայն այս դիտողութենէն պէտք չէ հետեւցնել թէ ամենամեծ վիրարոյժներուն սկզբունքը սխալ է՝ որոնք կ'արգիլեն վիրաւորելոց մերձաւորութիւն ընել : Չկայ փորձ բժիշկ մը՝ որ անձամբ տեսած չ'ըլլայ թէ այն որչափ վնասակար է վիրաւորելոց : Ասոր մէկ օրինակը միայն պիտի պատմեմ՝ յորում սերմնաթափութիւնը մահ պատճառեց՝ և որուն պատմութիւնը ժ. Պասպրիս տը Հիլտէն աւանդած է մեզ : Քօմէ Սթօլան կտրած էր երիտասարդի մը ձեռքը որ ջախջախուած էր հրազինու հարուած է մը : Որովհետեւ բժիշկն անոր չափազանց եռանդոտ ըլլալը գիտէր՝ արգիլեց որ բնաւ կնկանը չը մօտի՝ և կնկան ալ խմացուց ասոր վտանգը . բայց երբ ամեն վախ անցաւ՝ և բուժումը լաւ յառաջ կ'երթար՝ հիւանդը մերձաւորութեան իղձ զգալով՝ և տեսնելով որ կինը չը համապատասխաներ՝ ձեռքով սերմնաթափութիւն ըրաւ . ասոր ետեւէն եկան տենդ , ցընորք , ջղաձգութիւն և ուրիշ սաստիկ ցաւեր՝ որոցմով մեռաւ չորս օրէն :

Երիտասարդ ամուսնացեալ մը տեսայ՝ որ երկանիւ կառքի մը նստարանէն խենդի պէս վար ցատկելով՝ քովընտի ինկաւ . ետեւի անիւն անցաւ

ուտքին վրայէն՝ կրունկին և սճեղին մէջ տեղ . ոչ խորտակեցաւ ոտքը , ոչ ոսկորը խախտեցաւ . այլ սաստիկ կերպով ճմլուեցաւ ոտքը . հինգ օրէն վերջ աղէկնալով՝ սկսաւ այնպէս վարուիլ՝ որ իբր թէ վտանգի մը չէր հանդիպած : Նրկու ժամ յետոյ բոլոր սրունքն ուռեցաւ սարսափելի ցաւերով՝ և սոսկալի տենդ մ'եկաւ՝ որ գրեթէ երեսուն ժամ տեւեց : Նորէն դառնանք :

Այս գլխոյս սկիզբը հոգւոյ և մարմնոյ կապակցութեանց վրայ խօսածէս կը հասկըցուի դիւրաւ թէ ինչու համար սերմնաթափները յաճախ ենթակայ են երազափորձութեանց . իրենց հոգին շարունակ տողորած տուփական մտածութիւններով՝ գիշեր նորէն իր դիմաց կը պատկերացնէ նոյն առարկայներ , և հեշտական երազին կը յաջորդէ արտաքսում մը՝ որ միշտ թեթեւ պատճառի մը կը նայի դուրս ելնելու՝ երբ դործարաններն այս աստիճան դիւրագրգռութեան հասնին :

Ուստի հարկ է ժամանակին դարմանել զայս և չթողուլ՝ որ ինչ պատճառէ ալ եկած ըլլայ՝ հիննայ : Նրբ երազափորձը հիննայ՝ դժուարաւ կը բուժի : Չկայ այնպիսի հիւանդութիւն մը , կըսէ Պ . Շ . Փման , որ առեղի տանջակր պատճառե հիւանդաց , եւ դժուարութիւն յարուցակե բժշկին դիմաց՝ քան հիւանդ եւ սովորութիւն դարձած երազափորձը . մանաւանդ երբ անէն օր պատահի : Ամենէն շատ դեղերը գրեթէ միշտ պարսպ կընեն՝ եւ յաճախ առեղի վնաս կը պատճառեն քան օգուտ :

Այս հիւանդութեան վրայ գրող բոլոր բժիշկ-

ները շատ դժուար է կըսեն ասոր բժշկուիլը . և զայս դարմանող բոլոր բժիշկներն ալ փորձով համոզուած են՝ և պէտք չէ զարմանալի թուի այս : Նթէ բժիշկը չ'յաջողի վերստին տալ գործարանաց իրենց ոյժը՝ կամ նուազեցնել անոնց գրգռութիւնը՝ մէկ երազափորձէ ի միւս երազափորձ տեւող ժամանակը՝ որ անհնարին է , կամ յանկարծ առաջն անուլ տուփական երազներու՝ որ անկարելիէն վար չմնար , պէտք է տալահով ըլլալ որ երազափորձը պիտի գայ նորէն , և պիտի ջնջէ նախընթաց երազափորձէն ի վեր տրուած դեղին ամենափոքր օգնութիւնը . ուստի մէկ երազափորձէն ի միւսն խիստ աննշան արդիւնք մը ձեռք կը բերուի , մինչդեռ ահագին ազդեցութիւն պէտք է՝ զգալի օգուտ մը յառաջ բերելու համար :

Գելիոս Աւրելիանոս հաւաքած է ինչ լաւ բան որ գրած են նախնիք ասոր դարմանատարութեանը վրայ : Կը պահանջէ՝ 1 . որ հիւանդները ի բաց մերժեն կարելի եղածին չափ՝ տուփական որեւէ իցէ գաղափար . 2 . զովարար և կարծր անկողնի վրայ պառկին , մէջքի վրայ կապարէ բարակ թիթեղ մը դնեն . հիւանդութեան կեդրոն եղած բոլոր մասերուն վրայ դնեն սպունգներ՝ թաթխած քացախ ուտ ջրի մէջ , կամ զովարար բաներու , ինչպէս են պարսլթ , ազասիս , իթոզիսթը , բզիլիսթը . 3 . այն տեսակ կերակուրներ ուտեն կամ ըմպելիներ խմեն՝ որք կը զովացնեն և կը սխմեն : Անոնց կը պատուիրէ՝ 4 . զօրացուցիչ դեղեր . 5 . պալ ջրի լրացում , բնաւ չպառկիլ կռնակի վրայ , այլ միշտ

քովի կամ փորի վրայ : Այս խրատը լի է ազէկ բաներով . բայց ախտագիտութեան բուն պահանջումն է հոս սերմի առատութիւնը նուազեցնել և երազներու առաջքն առնուլ : Կերակրոց ժուժկալութիւնը և վարմանց ընդհանուր կանոնը աւելի կրնան զայս բուժել՝ քան դեղեր : Ամենէն յարմար կերակուրներն են՝ բուսականները՝ պտուղներն ալ մէկտեղ առնելով : Միսերու մասին՝ քիչ սնդարար տեսակները : Երկու պարագային մէջ ալ նայելու է որ ընտրուած կերակուրները բարկ նիւթ չուենեան իրենց մէջ : Արդէն ասկէ առաջ զուրցեցինք թէ այս տեսակ կերակուրներն ինչ աստիճան կ'օգնէին հանդարտ քնանալու . խստիւ յանձնարարելու է զայս երազափորձութեամբ տանջուածներու՝ որոց յոյժ պէտք է այս հանդարտութիւնը : Այս տեսակ անձինք պէտք է իրիկունները կերակուր չուտեն՝ կամ գոնէ շատ թեթեւ ուտեն . միայն այս զգուշութիւնը ամեն դեղերէն աւելի օգուտ կընէ : Անմարտելի միսեր , ծխած միսեր՝ մանաւանդ երբ իրիկուն ուտուին՝ ճշմարիտ թոյնմ' են այս ախտին համար . նորէն կը կրկնեմ՝ եթէ չորոչէն թեթեւ ընթրիք ընել՝ առանց մսեղէնի՝ բոլոր միւս դեղերն անօգուտ են : Գինին , ողելից ըմպելիք , խահուէն շատ կը վնասեն : Ամենէն պատուական խմելիքն է զուտ ջուր : Զգուշանալու է մէզի առատութիւն պատճառով բաներէ : Յայտնի է որ միզամանին ձկնումը երազափորձութեանց պատճառներէն մին է :

Այն պատուէրը՝ զոր կաւանդէ Մէլիոս՝ կալուզ անկողիններէ խորջելու մասին՝ շատ մեծ կա-

րեւորութիւն ունի . պէտք չէ բնաւ որ փետուրներ գտնուին անոր մէջ . յարգը աւելի ազէկ կը յարմարի , քան թէ ձարը ( զըլ ) , և քանի մը հիւանդներ տեսայ՝ որք շատ օգուտ տեսան անկողին վրայ կաշի փռելով : Կրնակի վրայ չպառկելու մասին տուած խորհուրդն ալ կարեւոր է . այս դիրքը կը վնասէ՝ քունը աւելի խռովելով՝ և ծննդական մասերը առաւել տաքցնելով :

Իայց այս վերջին երկու պարագայներուն վերայ շատ վստահելու չէ . այնպիսի պարագայներ կան՝ որոց դէմ ամենէն լաւ դեղերն անօգուտ կ'ըլլան : Պ. Հօֆմանի պատմածն ասոր մէկ օրինակը կրնայ ըլլալ . և պէտք է կանխաւ հիւանդաց տալ այն խրատը՝ զոր ինք կուտար իւր հիւանդէին . այսինքն թէ առանց դեղերու երկար ատեն շարունակութեան՝ պէտք չէ արդիւնք սպասել . կամ՝ կերակրոյ զգուշութիւն կարեւոր դատուած պարագայից մէջ իսկ՝ երկարատեւ ժուժկալութեամբ միայն հնար է զգալի փոփանք իմանալ : Եթէ դեղեր գործածել հարկ ըլլայ՝ կերակրոյ զգուշութեան համաձայն ըլլալու են :

Երազափորձին մէկ տեսակն ալ՝ սեւամաղձոտներու պատահածն է : Այս տեսակ անձանց արեան շրջանը տկար կ'ըլլայ , մանաւանդ ստորին - փորի երակներուն մէջ . ասով այն մասերը որ արիւն կուտան երակներուն՝ շատ անգամ կը լեւան , ջիղերը դիւրաւ շարժում կ'ընդունին՝ իրենց հիւթերը կամ աւիշները բարկ բնութիւն մը կ'ստանան , որ շատ աւտով կը գրգռեն . իրենց քունը երազներով կը

խոսովի սովորաբար . ահաւասիկ երազափորձի բաւական պատճառներ . ասոր համար՝ այս տեսակ մարդիկ չափազանց ենթակայ են այս հիւանդութեան : «Նրեւակայութիւնը, կ'ըսէ Պրոհաւ, շատ ճանգամ սերմի արտաքսում կը պատճառէ քնոյ «մէջ : Խիստ աշխատասէր գրագէտներ՝ և փայծաղնոտներ (տարագ հիլլիթի օլան) ենթակայ են այս պատահարին, և սերման հոսումն այն ատի-«ճան շատկեկ կ'ըլլայ՝ որ կ'իյնան ծիւրութեան «մէջ : Այս հիւանդութիւնն առաւել անոր համար ծանր հետեւութիւններ կ'ունենայ այդպիսի մարդոց՝ որովհետեւ չափազանց նեղութիւն կ'իմանան՝ երբ այս տեսակ ծայրայեղութեանց անձնատուր ըլլան :

Միայն մէկ միջոց կայ բուժման՝ այն է գըլլխաւոր հիւանդութիւնը զարնել : Նախ արեան դադարումը ոգեւորելու է, յետոյ գործածել պաղ ջրի լուացումներ, և այն փրկարար կեղեւը (1) զոր Աստուած մեզի համար պահպանէ : Ահա այն ատեն կուգայ կարգը այս երկու զօրեղ դեղերուն՝ որոց վրայ երբեմն կրնայ աւելցուիլ նաեւ երկաթը : Եթէ երբէք կերակրոց ընտրութեան մասին ուշադրութիւն ընել հարկ ըլլայ՝ այն ալ մասնաւորապէս այս պարագային մէջ պէտք է : Սեւամաղձոտները ընդհանրապէս շատ տկար մարտողութիւն կ'ունենան . կերակուրները՝ եթէ թերի մարսուին՝ փրքացուցիչ ուռեցքներ կը բերեն՝ որոնք արեան շըր-

ջանը խանգարելով՝ տրամադրութիւն կուտան երազափորձի՝ երկու կերպով . 1 . նեղելով արեան շըջանը ծննդական երակներուն մէջ . 2 . քնոյ խաղաղութիւնը վրդովելով՝ և այսպէս երազ պատճառելով : Աստի կը հասկցուի թէ ինչո՞ւ Պիթագոր կ'արգիլէր իւր աշակերտաց փքացուցիչ կերակուրներ ուտելը՝ զորս իրաւամբ կը նկատէր իբրեւ վնասակար՝ թէ հոգւոյ պաշտօններուն որոշ և զօրեղ կատարուելուն՝ և թէ զգաստութեան : Բացի այս երկու պատճառներէն՝ թող ներուի ինձ յանդըզնիլ մէկ երրորդ պատճառ մ'ալ (երազափորձի) նշանակել՝ զոր երկու հիւանդներու վրայ տեսնել կարծեցի : Այս պատճառն է՝ հոսանուտ նիւթերէն դուրս ելած օդին՝ խոռոչ մարմիններուն մէջ լեցուիլը որով անդամին կանգնում և հեշտական եռք յառաջ կուգայ : Ամեն ոք գիտէ թէ՝ մեր մարմնոյն բոլոր հեղուկները սողորուած են այս հոսանուտով (այսինքն օդով) . բայց սա կայ թէ՝ քանի որ այս հեղուկները կատարեալ առողջ վիճակի մէջ են՝ օդը անոր հետ խառնուած մարմնացած ու զրկուած է իւր առաձգութենէն : Նրեւելի բնագէտներ այնպէս կը կարծէին թէ միայն երկու միջոց կայ այս առաձգութիւնը մարմնոց օդին տալու համար՝ այսինքն՝ նախ կենդանական մարմնոյն վրայ երեցած ջերմութենէն աւելի սաստկազոյն աստիճանով ջերմութիւն մը, և երկրորդ՝ փտութիւն : Բայց ծաւալած օդէն յառաջ եկած հիւանդութեանց վրայ բազմաթիւ դիտողութիւններն՝ ասպցուցին որ բացի վերոյիշեալ երկու միջոցներէն՝

(1) Քենքիման :

հոսանուտներն ուրիշ կերպով ալ կրնային ապակա-  
նիլ՝ որով միեւնոյն արդիւնքն ստանալ, և այս  
ապականուտներ աւելի յաճախ կ'երեւէին սեւա-  
մաղձոտներու վրայ . այսպէս զարմանալի չէ որ խո-  
ռոջ մարմիններն այս հիւանդ օդին ծաւարմանն  
կեղրոն դառնան . ընդհակառակն գիտնալու է՝ որ  
ամեն մասերէն աւելի ասոնք (այսինքն խոռոջ մա-  
սեր) աւելի ենթակայ են այդ օդին . և եթէ մին-  
չեւ ցարդ ուշադրութիւն եղած չէ՝ պակասու-  
թիւնը ոչ թէ դիտողութիւն չը գտնուելուն այլ  
դիտող չը գտնուելուն տալ պէտք է : Արդ՝ պէտք  
է խորշիլ այն կերակուրներէն՝ որոնք աւելի օդ  
պարունակելով անհանգիստ կ'ընեն՝ թէ նախնա-  
կան ճամբայներուն և թէ արեան մէջ փուք լեց-  
նելով :

Ամեն մարդ գիտէ թէ նոր գարեջուրը՝ որ չա-  
փազանց փքացուցիչ է՝ սաստիկ կերպով կը կանգ-  
նեցնէ անդամը . և այս գործիս վերջին տպագրու-  
թեանէն յետոյ՝ տեսայ որ Պ. Թիէրի Ֆրանսայի ա-  
մենէն գիտնական բժիշկներէն և հռչակաւոր բը-  
րայթիսիկներէն մին հասկցեր է որ փուքերէ կանդ-  
նում կը պատճառի :

## Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Յ

### Պարզ հոսումն

Հոսումը, կ'ըսէ Կալիէն՝ որ մինակ պարզ տե-  
սակը գիտէր, սերմնս վազերն չ'առանց կանգնումի  
(արանդամին) : Ամեն դարուց շատ հեղինակներ կը  
խօսին ասոր վրայ՝ նոյնպէս Մովսէս՝ ամենէն հնա-  
գոյնը : Հիպոկրատայ դիտողութեանց մէջ կը գըտ-  
նուի լեռնականի մ'օրինակը՝ որուն հիւանդու-  
թիւնը հիւժում եղած ըլլալու է՝ և որմէ մէջ և  
սերմ կը վազէր ակամայ :

Այս հոսման վտանգները շատ մեծ են . ար-  
դէն տեսնուեցաւ՝ Արեդէի ասոր վրայ ըրած նկա-  
րագրութիւնը . *Ինչպէս կարելի է, կ'ըսէ, որ մարդ  
չը տկարանայ՝ երբ կենաց զօրութիւն տուողն անդա-  
դար կը կորստի . միայն սերմն է մարդոյն զօրութիւնը :*  
Սէլը՝ որ արեթէէն առաջ կ'ապրէր՝ վճռակի կեր-  
պով կ'ըսէ թէ՝ սերմի հոսումը՝ որ առանց հեշտա-  
կան զգացման կ'ըլլայ՝ զմարդ մաշոգութեան կ'ա-  
ռաջնորդէ : Ժան, Զաքարիայի որդին, որ Ադ-  
թիւարիիւս անունով աւելի ծանօթ է, այն գրքին  
մէջ՝ զոր շարադրեց ի պատիւ դեսպանին՝ զոր կ.  
Պօլսոյ Կայսրն կը խրկէր Հիւսիսային կողմ՝ վեր  
յիշատակած հեղինակներուս պէս կը խորհի - եթէ  
սերմն հոսումը՝ որ տեղի կ'ոռնենայ ստանց կանգնումի

եւ զգացողութեամբ տեսե ժամանակ մը՝ սեռչոյցտ մաշողութիւն եւ մաս կը բերե, վասն զի հիւթերոսն ամեկն պաշտամային մասը եւ հեկրասեմիակ ոգիները կը վատնուին :

Նորագոյն հեղինակներն ալ նոյնպէս կը խորհին : « Բոլոր մարմինը կը նիհարնայ , կ'ըսէ Սէնէրթ , « մանաւանդ կռնակը . հիւանդները կը տկարանան , « կը չորնան , կը դեղնին , կը ծիւրին , մէջքի ցաւ « կ'ունենան , աչուքնին խորունկը կ'իյնայ : » Պ. Պրոհաւ կը դասէ այս հոսումը անդամալուծութեան պատճառներուն կարգը . և այս տեղը հոսած նիւթըն իբրեւ բուն սերմ կ'ընդունի : Անդամալուծութիւնը , կ'ըսէ որ հոսումէն կուգայ , անբուժելի է՝ վասն զի մարմինը կ'ըսպառէ :

Պ. Քէօմբֆի մէկ խիստ գեղեցիկ ճառին մէջ օգտակար դիտողութիւններ կը գտնուին այս մասին : Այս հիւանդութիւնը շատ հեռաւոր պատճառներէ կրնայ կախում ունենալ : Ամենէն մտաւոր պատճառներէն գրեթէ մին է՝ վաղու հեղուկներուն բնութեան թերութիւնը՝ հեղուկներ՝ որ շատ անօր՝ և յաճախ բարկ են . երկրորդ՝ ծննդական մասանց չափազանց թուլութիւնը : Հեղուկներուն թերութիւնը կը ծագի անոնց անկատար հալումէն որ կը պատճառի ընդհանուր տկարութենէն . ասոր այն տեսակ զօրացուցիչներ կը տըրուին՝ որոնք նոյնպէս յարմարին գործարանաց տըկարութեան . այս դեղերուն ընտրութիւնը մեծապէս կախում ունի հիւանդութեան պարագայներէն : Աւելորդ է այսուհետեւ երկար բարակ յիշել

լաւագոյն հեղինակաց դրածները : Ինչ դեղեր որ գրքիս ընթացքին մէջ նշանակեցինք սերմնաթափութեան միւս հետեւանքներուն դէմ՝ ասոր ալ սեփական են . այսինքն պող ջրի լուացում , քէնքինան , երկաթը , միւս զօրացուցիչները : Պ. Պրոհաւ կըսէ՝ որ լերդատունկը ( բէյի օրոս ) շատ օգտակար է հինցած հոսման դէմ՝ որ գործարանաց թուլութենէն կուգայ : Երբեմն հիւթերը միւսնոյն մասին վրայ սովորութեամբ շարունակ վազելէն արգիլելու համար՝ լուծողական կուտան նախ և առաջ . մինչեւ անգամ մեծ բժիշկներէն ու մանք այս դեղին մասնաւոր յատկութիւն մը կընծայեն աս հիւանդութեան մէջ : Փորձը՝ աւելի քան դատողութիւնը , ասոր հակառակը ցուցած է ինձ : Եւ վերը յիշած հեղինակներուս գործերն աչքէ անցընողները պիտի տեսնեն թէ լուծողական չեն պատուիրեր :

Քանի մը դէպքերու մանրամասնութիւնը աւելի լաւ ըմբռնել կրնայ տալ ասոր ճիշդ լուծումը : Թիմէ օրինակ մը յառաջ կը բերէ որ աս տեղը շատ յարմար կուգայ : « Երիտասարդ մը , կըսէ , որ փաստաբանութիւն կուսանէր , արիւնային խառնուած ունենալով՝ օրը երկու երեք անգամ սերմնաթափութիւն կընէր , և երբեմն ալ աւելի . ասկէ հոսում առաջ եկաւ և մարմինը բոլորովին տկարացաւ : Այնպէս համարեցայ թէ հոսումը առաջ եկած է սերմնային խողովակաց թուլութենէն և տըկարութիւնն ալ սերմին յաճախ վատնումէն՝ որ փճացուցած էր բնական ջերմութիւնը , հում նիւ-

Թեր հաւաքած էր, ջղային դրութիւնը վտանգած՝ հոգին ապշեցուցած, մարմինը տկարացուցած էր» : Անոր պատուիրեց զօրաւոր գինի մը, սխմող և համեմաւոր դեղերու հետ՝ կարմիր գինիի դիրտով, նոյն բնութիւնն ունեցող թմբադեղ մը, և սպեղանի մը՝ շինուած վարդախլղէ, սոսինձէ (սազըզ), բորակէ, հայկաւէ և ձերմակ մեղրամոմէ : « Հիւանդն առողջացաւ մէկ ամիսէն այս ամօթալի ակտէն, և խրատեցի որ ապագային ետ կենայ այս վատ ցոխութենէն, և յիչէ յաւիտենականին սպառնալիքը որ կը մերժէ հեշտասէրները երկնից արքայութենէն» :

Պ. Սթէհըլէյն յրօֆկաուորը գրագէտ մը կը յիչէ՝ որ սերմի ակամայ հոսում ունէր առանց տըւփական գաղափարի, և զոր առողջացուց գինի գործածելով երկաթի և քէնքինայի հետ : Գեղերը, մանաւանդ Սվալպալտի ջուրերը, պաղ ջրի տոժ՝ ցայլի ոսկրին (գասըզ քնիյի) և սրբանին տակը գործածուելով՝ նոյն արդիւնքը չունեցան երիտասարդի մը վրայ՝ որ այս ակտին ենթարկուած էր սերմնաթափութեամբ : Կը յաւելու թէ՝ տօքթէօն Պօնկաւ՝ նշանաւոր յրաթիսիկն ի Մագէյը, երկու հիւանդ առողջացուցած է, որոնք սերմնային փամփուշտներու նիհարութիւն ունէին՝ իրենց տալով՝ օրը երեք անգամ՝ ութ տաս կաթիլ Սիտէնհամ հեղուկ, ամփոնի հիւթ՝ Բօնթակի գաւաթ մը գինիով, և սամառնայի բուսաջուր խմցընելով : Պ. Սթէհըլէյն կը դիտէ որ՝ թէպէտ ամփոնը ակտացոյցին հակառակ դեղ մ'է՝ Լթմիւլլէն գայն

տուած է, շոտով մէքի պարսրոնըռն դիմ՝ որ սերմին շատ ոգելից ըլլալէն առաջ կոզայ : Թող ներուէինձ յաւելու որ ուշագրութեամբ քննելով այս նշանաւոր յրաթիսիկն խրատը և բաղդատելով ակտին բնութիւնը ինչ ինչ պարագայից մէջ ամփոնի ազդեցութեան հետ, դիւրաւ կը հասկըցուի՝ որ այս դեղը կրնայ երբեմն օգտակար ըլլալ, բայց ոչ այն պարագային մէջ՝ յորում կը պատուիրէ : Ամենայն ինամով կ'որոչէ հոսման զանազան տեսակները, իւրաքանչիւրին պատճառն և դեղերը կ'նշանակէ, և յետոյ անցնելով մէջքի գալուն՝ որ անդամը կանգնի չկանգնի՝ տեղի կունենայ, ասոր երկու պատճառ կուտայ . 1. սերմնային փամփուշտից թուլութիւնը . 2. սերմնային հեղուկին խիստ եռանդոտ, ոգելից, առատ ըլլալը . ահա այս պարագային է որ կը հրամայէ ամփոնը : Բայց ինչ ըսելով : Ամփոնը՝ որուն ամփոնիտեան ազդեցութիւնը լաւ ապացուցուած է՝ զոր Լթմիւլլէն ալ կը նշանակէ՝ թէ այս դեղին վրայ գրած պզտի գործին մէջ, և թէ այս դեղը պատուիրած կէտին՝ աւելի կը սաստկացնէ հիւանդութեան պատճառը, և ասով աւելի կը ծանրացնէ անոր ակտանիչերը : Ասոր օգտակարութիւնը այն պարագայներուն մէջ է՝ երբ նիւթերը ընդհակառակն հում, անօսը, ջրալից են, և ջրերն միանգամայն չափազանց շարժուն :

Իրաւ է որ սա կը դարմանէ այս զանազան յոռութիւնները, կը դադրեցնէ դիւրագրգուրութիւնը, և կը կեցընէ բոլոր արտահանութիւնները՝ բաց ի

արտաճնչումէն : Բայց դարձեալ կը կրկնեմ . պէտք է բուն տեղը պատուիրել զայս , ապա թէ ո՛չ կը վնասէ : Պ. Թուուլ , այս գեղլին վրայ գրած գեղեցիկ գործին մէջ դիտողութիւն մը կ'ընծայէ մեզ , որուն նմաններ կը գտնուին ուրիշ տեղ , եւ որ մեծ զգուշութիւն ընել կը պարտաւորէ զմեզ : Մարդ մը , կ'ըսէ , որ պատանեկութենէ յօժարութիւն ունեցած էր գիջութեան , որով չափազանց տկարացեր էր , ամեն անգամուն երբ ափիոն առնէր՝ թէ հազը կամ փորհարութիւնը մեղմացնելու՝ և թէ ուրիշ նպատակաւ՝ նոյն գիջերը ի մեծ վնաս իւր անձին՝ տուփական երազներով կը տագնապէր՝ որոց կը յաջորդէր սերմնային հոսում մը : Թող ներուի ինձ խորհրդածութիւն մ'ընել՝ որ բնականաբար կը ներկայանայ հոս . այն է թէ՛ Եթմիւլէրի սխալը յայտնապէս կը ցուցնէ որ՝ 1. ճշգրիտ տեսական մը ո՛րչափ ազդեցութիւն ունի գործնականին վրայ՝ որ առանց անոր օգնութեան շատ անգամ թիւր և սխալ կ'ըլլայ . 2. Ո՛րչափ այն բժիշկն՝ որ այս երկուքն ալ ունի՝ գերազանց է քան զայն՝ որ կառաջնորդուի միայն քանի մը դիտողութիւններով , կամ անձնատուր կ'ըլլայ յամառ տեսականի մը . վերջապէս՝ 3. գործնական հեղինակաց ընթերցումը՝ անոնց՝ որ մեր դարուն շնորհիւ եղած ճշգրիտ տեսականին դիտութենէն զուրկ են , կրնայ խաբել զանոնք՝ որք այն հեղինակները կարգաւով կոյր հաւատ մը կուենան , և կ'անգիտանան այն ըսկըգունքները որ իբրեւ փորձաքար պարտին ծա-

ռայել՝ որոշելու համար բժշկութեան մէջ լաւը յուիէն (1) :

Վերջացնեմ իմ երկու դիտողութիւններովս . շատը աւելորդ է : Քսանամենի երիտասարդ մը , որ գիջանալու դժբաղդութիւնն ունեցեր էր՝ երկու ամսէ ի վեր ախտի մը բռնուած էր . շարունակ ջրոտ բան մը կը հոսէր . և գիջերներն երազափորձ կըլլար որուն ետեւէն կուգար սաստիկ տկարութիւն մը . միշտ ստամուքը սաստիկ կը ցաւէր . կուրծքը տկար էր , և պզտիկ պատճառով մը կը քրտնէր :

Երեք շաբաթէն ամեն կերպով աղէկցուցի և հոսումը ալ միայն երազափորձերու ատեն կը պատահէր , որոնք սակաւնալ սկսեր էին : Դեղին շարունակութեամբ տասնը հինգ օրէն բողբոջին աղէկցաւ : Երկու օտարազգի ամուսիններ , բոլորովին ինձ անծանօթ , գրեթէ միեւնոյն ժամանակ բռնուեցան՝ ապահով ըլլալով՝ որ թարախ չկայ , սերմնահոսութենէ մը՝ որուն հետ կ'ընթանար նա-

(1) Հարկ կը համարիմ զգուշացնել այս առթիւ մեր բնքերցողները որ զխաբուիս ամեն տղգիտ շաղակրատներէ՝ որոնք բժշկութիւն կը ծախեն առանց զայն սասած ըլլալու , եւ տուփական հիւանդութեանց պարագային մեզ՝ ուղղակի առանց ամջնալու դիմեն նշանաւոր բժշկաց . ապա բէ ոչ՝ այնպիսի ախտեր կը մնան իրենց վրայ՝ որ կը դատնացնեն իրենց բոլոր կեանքը , երբ շատ անգամ ի կենաց իսկ չգրաւեն գիրենք :

եւ թուլութիւն , որնայարն ի վար ցաւ մը . ասոր պատճառ կուտային իրենք՝ մերձաւորութեան ծայրայեղութիւնք . հոսումն աւելի առատ էր էրկանը վրայ : Ի զուր բազում դեղեր ըրած էին՝ մասնաւորապէս սնդկախառն դեղահատեր , որք սաստկացուցեր էին հոսումը . եկան ինձ տեսան : Պատուիրեցի իրենց պաղ ջրի լուացում , քէնքինայով , պողպատով և կարմիր վարդի ծաղիկներով գինի : Կանոնաւորապէս առին դեղերը . 1758 ին ամսուն էր . տեղատարափ անձրեւներ խիստ կը դժուարացնէին գետոց բաղնիքներ . կինը երեք անգամ միայն ջուր մտաւ , էրիկը տասներկու անգամ : հինգ շաբաթէն իմաց տուին ինձ , որ գրեթէ բոլորովին աղէկցած էին : Պատուիրեցի որ շարունակեն նոյնը մինչեւ ամբողջական բուժումը՝ որ երկար իսկ չտեսեց :

Այս բարեյաջող արդիւնքներ չեն կրնար ընդհանուր և նպատաւոր վճիռ մը հիմնել : Այս հիւանդութիւնը խիստ շատ անգամ չափազանց յամառ է՝ երբեմն իսկ անբուժելի : Մէկ օրինակ մը միայն պիտի տամ՝ որ վճռական է : Եւրոպայի մէջ գտնուած արդի ամենամեծ թատիկահաններէն մէկը՝ որ կը ճոխացնէ բժշկութեան արհեստը պատուական աշխատասիրութիւններով , տասներհինգ տարիէ աւելի կայ որ՝ ենթակայ եղած է պարզ հոսման մը որուն առաջքը չէ կրցած առնուլ՝ ոչ իր բովանդակ ճարտարութիւնը և ոչ բժշկացն՝ որոց դիմած է . այս տխուր ակտը զայն տակաւ առ տակաւ կը մաչէ և վախ կ'ազդէ որ պիտի կորուսա-

նենք զինք շատ կանուխ այն ժամանակէն որուն փափաքելի էր որ հասնէր իրաց բնական ընթացքով :

Անօգուտ է աւելի երկար խօսիլ : Զանացի դուրս չթողուլ բան մը այն վտանգներէն , որք կրնան բանալ երիտասարդաց աչքը տեսնելու համար անդունդը , որոյ եզերքն են հասած իրենց ձեռօք : Նշանակեցի բոլոր կարելի միջոցներ առ ի դարման այն ակտերուն զորս իրենց վրայ հրաւիրած են . կը վերջացնեմ կրկնելով ինչ որ յաճախ ըսած եմ գրքիս ընթացքին մէջ . թէ՛ քանի մը յաջող բոյժեր պէտք չէ խառնել երիտասարդները . ամենէն արմատական կերպով առողջացողը խիստ դժուարաւ կը գտնէ իր նախկին կորովը և շարունակ ինքզինք նայելով միայն կրնայ քիչ շատ առողջ կեանք վարել . իսկ անբուժելիներու և ծիրած մնացողներուն թիւը տասնապատիկ աւելի է . և քանի մը օրինակներ՝ որ տեսնուած են այնպիսի անձանց վրայ՝ որոնք՝ կամ թեթեւ կերպով հիւանդացած են՝ կամ իրենց չափազանց կորովութենէն դիւրաւ ինքզինքնին գտած են՝ պէտք չէ իրբեւ ընդհանուր կանոն նկատուին : (1).

## Վ Ե Ր Զ

(1) Վերջին խորհուրդ մ'այ մեր կողմէն աւելորդ չեմք համարիր , այն է թե՛ այս կարգի հիւանդներ առանց փորձ բժշկի դիմելու՝ ինքնին զգործածեն յարագրաց մեջ միշտ չափազանց գովեստներով ծախուցուած դեղեր : Նոյնպէս յաճախ վտանգաւոր և՛ առանց բժշկի *ռադուկի* միջամտութեան ո՛րեւէ առողջաբանական գրքի վրայ տեսնուած դեղերը գործածելը :

## Վ Ե Ր Զ Ա Ւ Ա Ն

(Քիչ մը նիւթէն դուրս)

(Ա. Տպագրութեան)

Այս պատուական գործը՝ տակաւին մամլոյ տակ՝ սկսաւ խուլ շշուկ մը հանել ժողովրդեան մէջ. — թէ՛ օգտակար է այսպիսի գիրք մը պատանեաց և օրիորդաց ձեռքը. — թէ՛ Եւրոպացոց մուլթիւնները մեր Արեւելեաց մէջ ալ կը գտնուին. եւ այլն, եւ այլն: Իմ պատասխանս շոշափելի օրինակով պիտի տամ:

Իսկիւ տարցի Մ. Փ. անուն պատուաւոր սովորիչ բարեկամս՝ որ բազմաժանօթ անձ մ'է՛ անգամ մը տեսաւ ձեռքս՝ շոգեհաւին մէջ՝ գրքիս մէկ թերթին փորձը, զոր աչքէ կ'անցընէի: Հետաքրքիր ըլլալով՝ իմացաւ ինէ՛ թէ ինչ նիւթի վրայ էր: «Ահ, բարեկամս, գոչեց, ասկէ աւելի մեծ բարիք չէիր կրնար ընել ազգին պատանեաց. մեզք սր ուշ հասկըցայ, սակայն սոսկալի փորձով հասկըցայ՝ թէ հայրեր, մայրեր, գաստիարակներ պէտք է հարիւր աչքով հսկեն իրենց տղոց վրայ, և երբ թեթեւ կասկած մ'ունենան՝

անմիջապէս ի բաց թողլով տղայական նկատումներ՝ հասկըցնեն անոնց թէ ինչ ահաւոր անգունդի եղերք կը գտնուին: Ես տասնը ութ տարեկան տղայ մը և ութ հարիւր ոսկի կորուսանելէ վերջ հասկցայ այս ճշմարտութիւնը:»

Այս ըսելով՝ դժբաղդ հայրն սկսաւ պատմել մանրամասնաբար՝ թէ ինչպէս իւր տղան՝ օրը՝ հինգ, վեց, երբեմն ալ ութ անգամ գիջանալով՝ հակառակ իւր զօրեղ կազմուածին խելագարեր, եօթ տարի յիմար վիճակի մէջ ապրելէ՝ և հօրն ութ հարիւր ոսկին ի զուր վատնել տալէ յետոյ՝ քսանը հինգ տարեկան ծաղիկ հասակով ի գերեզման լջեր էր:

Այսչափս կը բաւէ, կարծեմ, այն կարգ մը Թարթխոֆներոս համար՝ որք մուլթեանց տղմին մէջ մինչեւ կոկորդնին թաղուած՝ կը համարձակին տակաւին ընդունին դուրս հանել և հայհոյել այսպիսի գրքերու:

Գրքիս մէջ դիտողութիւն հրաւիրող ուրիշ մէկ կէտն ալ հաւանականաբար այն պիտի ըլլայ՝ որ Փրկչի վարժարանը՝ քոցելու համար միայն անոր այցելող Գէորգ Պատրիարքը՝ Գէորգ Գ. Անդրուսեան մակդիրով նշանակած էր: Բարեկամներէս բարձրաստիճան եկեղե-

ցականի մը կարծիքն երբ հարցուցի այս մասին՝ ըսաւ: — Ի՞նչ իրաւունք ունիք Պատրիարքը մեղադրելու, մէկ մարդ մը ի՞նչ կըրնայ բնել: — Լաւ, ըսի. ես ալ Լապուլէի պէս կը հաւատամ՝ որ մարդկութիւնը միշտ պիտի ըլլայ այնպէս ինչպէս որ ուղեն իւր առաջնորդները. ազգաց բազդը խումբ մը մարդոց ձեռքն է միշտ, և պիտի մնայ: Այս քսել չէ՛ որ ժողովուրդք անհոգ մտափելու են. ո՛չ այլ անոնց ուղղութիւնը միշտ մեծ մարդոցմէ կախում պիտի ունենայ: Այսպէս ժողովուրդք թէ չար ըլլան՝ թէ բարի՝ պատասխանատուն գրեթէ միշտ զանոնք կառավարողներն են:

Ի՞նչ կրնար բնել Գէորգ Պատրիարքը... Ինչ որ ըրաւ Ներսէս Վարժապետեան Պատրիարքը՝ որ Փրկչի՝ ազգային այդ միակ յարկին հոգն յանձնեց խումբ մը քսակով, սըրտով հարուստ մարդոց (1), որք այսպիսի բաբմատազնապ ժամանակի մէջ՝ ոչ միայն վեց հարիւրի չափ անտերունչ, անկեալ և ուղորմելի ազգայիններ կը մխիթարեն լի ու լի,

(1) Այս պարագայն ես սովեյոց յանձնաժողովին կազմութիւնը Ներսէս Պատրիարքի երկար պաշտօնավարութեան, անսանձան ազդեցութեան ամենէն օգտակար գործերն էրան:

այլ և երկու հարիւրէն աւելի որք՝ հայաբնակ ամեն քաղաքներէ կարծես ընտրանօք եկած (միշտ այսպէս եղած է, պարագայ մը՝ որ ստուգիւ զարմանալի է) երկու հարիւրէն աւելի վերջին աստիճան ուշիմ աղոց, կըսեմ, ուսում կուտայ՝ այնչափ՝ որչափ կը գտնուի Պօլսոյ էն բարեկարգ ազգային վարժարանաց մէջ: Ահա այսպէս բնելու էր և Գէորգ Գ. արդի Կաթողիկոսն: Իսկ նա ի՞նչ ըրաւ. — պատմեմ:

Հանդիսաւոր օր մը եկաւ Փրկչի վարժարանը՝ փառահեղ կերպով բազմեցաւ, կանչեց քանի մը հասակաւոր աշակերտք՝ որոց վարդապետացոյ կըսէինք, և հարցուց մէկուն. «Ո՞ւր տեղացի ես դու». — Սեբաստացի, պատասխանեց պատանին՝ ահ ու գողի մէջ և փոփոսալով. — «Օ՛, ըսաւ Պատրիարքը, Սեբաստացիք աղէկ թեղազ կըլլան. և ակնարկը միւսներուն վրայ դարձնելով՝ ըսաւ ապա անոնց՝ որ իւր շուրջն էին. «Ասոնք, ամենքն ալ աղէկ թեղազ, խահառնի, փայտ շոտրոզ կըլլան. թող երթան մէյմէկ գործ գտնեն, ազգք չկրնար ասոնց հաց կերցնել:»

Ներկայ էին տեարք՝ Ս. Փափաղեան, Ս. Պօչնակեան, և այլք:

Եւ այս մարդն ամենայն հայոց կաթողիկոսն է հիմա, և այս մարդն Ալաշկերտի սովամահ Հայոց կենաց գինը՝ Ռուսաստանցի առատա սիրտ ազգայնոց նուէրը, աւանդը թռնաբարներ պահեր է՝ չարամահ կ'սպաննէ բազմաթիւ ողորմելիներ՝ պատրուակելով թէ՛ « Վարժաբան պիտի հիմնեմ յԱլաշկերտ » : —

Հաւատամ' ատոր . —

Ես այդպիսի հաւատք չունիմ, ես՝ ժողովրդեան զաւակ՝ որ բազդին բաժակն մինչեւ յատակն ծծելէ վերջ՝ անմահն Ալֆրէտ աբ Միւսէի բսածին պէս՝ անառոր աղքատութեան ալ վարժուած եմ .

Եւ յաւիտեան պիտի ըսեմ ճշմարտութիւնն ամեն տեղ, ամեն ստե՛ն, ամենո՛ռն ղե՛մ . զի ճշմարտութիւնք տեղ, ժամանակ, անձ չը ճանչեր :

Եղիազար Մուրատեան

Այս վերջաբանը կարդացող բարեկամներս իրաւունք տուին ինձ . բայց ըսին՝ որ Գեորգ Գ . կարողիկոսը բաւեց իւր յանցանքը Գեորգեան ձեմարանին հաստատութեամբը : Արդ, հարկ կը համարիմ երկրորդ տպագրութեանս մեջ պնդել իմ կարծեացս վրայ գոր արտայայտած եմ վերջաբանիս մեջ եւ ըսել որ ես մեծ բան չեմ սպասեմ Գեորգեան ձեմարանէն : Ե . Մ .

Երևս


Արմաւիր տղաս . . . . .	3
Առ Ընթերցողս . . . . .	5
Մեծ Տօք Թիրեաբեանին նամակը . . . . .	7
Յառաջաբան . . . . .	15
Ներածութիւն . . . . .	29
Մասն Ա . ԱՆՏԱՆԻՇՔ	
Հատուած Ա . Բժշկաց վկայութիւններ . . . . .	33
» Բ . Հաղորդուած դիտողութիւնք . . . . .	42
» Գ . Հեղինակին դիտողութիւններ . . . . .	45
» Դ . Սերմնաբափութեան հետեւանքը կանանց վրայ . . . . .	62
Մասն Բ . ՊԱՏՃԱՌՔ	
» Ե . Սերմնային հեղուկին կարեւորութիւնը . . . . .	70
» Զ . Սերման արտաբուսմին յարակից պարագայներու քննութիւն . . . . .	81
» Է . Սերմնաբափութեան յատուկ վտանգներուն պատճառները . . . . .	91
Մասն Գ . ԴԱՐՄԱՆՈՒՄՆ	
» Ը . Ուրիշ բժիշկներէ առաջարկուած բուժման միջոցներ . . . . .	104
» Թ . Հեղինակին բռարիքը . . . . .	112
Մասն Դ . ՆՄԱՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԻՒՆՔ	
» Ժ . Երագափորձութիւնք . . . . .	164
» ԺԱ . Պարզ հոտումն . . . . .	177
» ՎԵՐՋԱԲԱՆ Թարգմանչին . . . . .	186




Մարտիկ Մ.




Պատկեր Բ.




Мушкетер 9.



Պատկեր Դ.







« Ազգային գրադարան



NL0243313

